



Հայկական գիտական պահուստի հանգույց  
Armenian Research & Academic Repository



Այս աշխատանքը արտաևազնիված «Առելքագրաբանական ճամաչիքներ»  
ոչ առևտրային իրավասության 3.0՝ արտանագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY NC 3.0) license.


Դու կարող եք.


պահանջման և տարրական նշանագրեր գրանցում կամ լույսով  
պատճենական համարակալի առնելու նյութը ստուգական համարները


You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format;

Adapt — remix, transform, and build upon the material









ՆԱՐԴՈՒ

1. Խնչպես  
բժշկեցին:
2. Սամուլն  
ուխտ գնաց:
3. Հոգուն  
գրա հասավ:
4. Հոպոպ:
5. Թու ինչ յեղավ  
հետո, յերբ օտ-  
քարամանից  
յերկու կտոր  
օսքար պա-  
կասեց:
6. Սեզ ֆողերի  
տոկոսը:
7. Ազամա-  
մուրին:

# ՄԵՐ ԹԱՂԸ

Պատմվածքներ

Յերեվան—1926





## ՆԱՐԴՈՍ

1. ԿԵՆՅԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
բժշկական գործություն:
2. Սահմուլեան  
ուխտ գնաց:
3. Հոգություն  
վրա հասավ:
4. Հոպուայ:
5. Թիւ ինչ յեղավ  
հետո, յերբ օս-  
քարամանից  
յերկու կտոր  
օսքար պա-  
կասեց:
6. Սեզ փողերի  
տոկոսը:
7. Սպամա-  
մուրին:

## ՄԵՐ ԹԱՂԵ

Պատմվածքներ

A 39095

Յերեվան — 1926



Դրառեալվար № 303<sub>բ.</sub>

№ 357

Տիրաժ 5.000

Պետհրատի յերկրորդ տպարան Յերևանում պ. 531

ՄԵԾ ՔԱՂԱՔԻ ԱՐՎԱՐՁԱՆԸ  
ՆԱՐ - ԴՈՍՏ ՅԵՐԿԵՐՈՒՄ



Ա. ՏԵՐԵՎՈՅՆ





Նար-Դոսն իր պատմվածքների ներկա ժողովածուն հրատակության տալով, մի շատ բնորոշ վերնագիր և ընտրել — «Մեր թաղո»։ Այդ վերնագիրը բնորոշ և յերկու պատճառով։

Նախ թեյեվ այս յոթ պատմվածքները զրված են զրեթե յերեր տասնամյակ սրանից առաջ, թեյեվ դրանք հեղինակի զրական փորձներն են, բայց հիմնական եյտթյամբ Նար-Դոսի հետազայերկների սաղմներն են պարունակում։ Հեղինակն իր հաջորդ զրբվածքներով իրենց թաղի կյանքն ընդարձակել է, նոր յեվ այլազան յերեվույթներ և այնաև նկատել, սակայն եյապես այդ թաղի սահմաններից շատ հեռու չի գնացել։ Նրա խոշոր վեպերի Շահյաններն ու Բազենյանները — նույն թաղի ինտելիգենտներն են՝ իրենց կացության յեվ մտածության բովանդակությամբ։ Խանութպանն, արհեստավորն իրենց գործն ընդարձակելով, «մարդամնց» են մտնում, յերեխաններին տալիս են ուսում առնելու։ Ուսման շրջանն, այսպես թե այնպես, ավարտելով՝ նրանք վերադառնում են իրենց թաղը։ Նրանցից մեկը՝ տնտեսական կյանքի հետամնաց լինելու պատճառով, իր ուսման համապատասխան գործ չի գտնում, իրեն ավելորդ և համարում միջավայրի հանդեսպ, հասարակության մեջ իրեն զգում և այնպես, ինչպես «զիշերային թույունը ցերեկվա պահին»։ Նա լավագույն դեպքում զրող, վարժապետ կամ ծառայող և դառնում, իսկ վատթար դեպքում — ինքնասպանություն և զործում, ինչպես Լեվոն Շահյանը («Մահը»)։ Հետարրրական և նկատել, վոր Գերմանիայի տնտեսական հետամնացությունը ՀՀ դարասկզբին, նման մի վիճակ եր ստեղծել այդ յերկրի ինտելիգենցիայի համար։ Ինչպես նկատում ե Ա. Լունաչարսկին իր Յեվրոպական զրականության պատմության մեջ, «Վերթեր» խորագրուվ վեպի լույս տեսնելուց հետո՝ տեղի ունեցած ինքնասպանության դեպքերն ապացույց են այն բանին, վոր գերմանական ինտելիգենցիան իր ուժերը գործադրելու ասպարեզ չուներ»։ Այդպես և ինտելիգենտներից մեկի տեսքը, Բակ մյուսը՝ շատ դես ու

դեն ընկնելուց հետո, անցնում ե իր հայրենի թաղի թշնամիների բանակը—թողնում ե աշխատանքն ու սկսում ծրիակերությամբ ապրել, հանդես ե զալիս սպասավորելու կապիտալին յեվ բարեկեցիկ կյանքին, բայց մտքով մնում ե նույն թաղական ինտելիգենտը կամ, ինչպես Վ. Տերյանն եր բնորոշում նման մտածողին՝ մնում ե միեւլույն «ծխական հանրայնության տեր ինտելիգենտը»\*): Այդ վերջին տիպը, յեթե անգամ բաղաքական գործի յել ե ծեռնարկում, անվթար պահում ե իր եյությունը—հեղափոխական մտայնության վրա յեվս դնում ե կամ, լավագույն դեպքում, ծխական կնիք, կամ, վատթար դեպքում, դառնում ե շանտաժիստ։ Այդպես ե Նար-Դոսի Բազենյանը։

Յերկրորդ՝ պատմվածքներին «Մեր թաղը» խորագիրը տալով՝ Նար-Դոսն իր գրական արշալույսը կապել ե, թող ներվի ասել, գրական վերջալույսի հետ։ Ի՞նչ իմաստով։—Շատ քիչ հեղինակների յե հաջողվում պահպանել պատանեկան գրվածքների աշխարհայացքն ու վոգին հասուն տարիներում, մանավանդ ծերության շրջանում։ Ամենից հաճախ՝ գրողները հրաժարվում են իրենց տհաս տարիքի փորձերից, համարելով այն խակ մտքի արդյունք, անզարգացած յեվ անարվեստ գործ։ Գեոթեն ասել ե՝ յերանի՛ այն գրողին, ով իր պատանեկան թարմությունը կարող ե միացնել ծերության իմաստության հետ։ Նար-Դոսն այսոր հանդես բերելով ութսունական թվականներին գրած պատմվածքները՝ ծերության իմաստության հետ միացնում ե իր պատանեկան թարմ տպավորությունները։ Նա հիմիկ չի հվաժարվում հասարակական «ստորին խավերի» նկատմամբ տածած իր պատանեկան համակրանքներից ու զգվանքներից։ Վո՛չ միայն չի հրաժարվում, այլև վերապրում ե ուժգին թափով, նորից ե հրահրում իր տպավորությունները, նրանց մեջ իր ծերության իմաստությունն ե դսում, մշակում յեվ հրդկում ե անցյալի փորձը՝ չանցատվելով իր թաղից։

Ահա՝ թե ինչ իմաստով մենք բնորոշ համարեցինք «Մեր թաղը» վերնագիրը։

\* \* \*

Նար-Դոսն իր պատմվածքների վերնագիրը—«Մեր թաղը»—փոքր ինչ ֆիզիքական յեվ վո՛չ թե սոցիոլոգիական իմաստով ե ըմբռնում, Մեր թաղը—դա մեծ բաղաքի արվարձանն ե, ուր նա

\*.) Վ. Տերյան, Յերկերի ժողովածու, հ. IV, էջ 143։

ապրել ե իր կյանքի սկզբից մինչեվ այսոր, ուր նա առաջին որից մինչեվ հիմա նույն յեվ միորինակ յերեվույթներն ե տեսնում, յեվ վոչինչ փոփոխություն մեր հեղինակի աչքով չի ընկնում։ Ինը Նար-Դոսը հետագա գրվածքների մեջ հերքել ե իր այդ հայեցակետը։

Թաղն ել ունի իր կյանքը, իր սկիզբը, զարգացումն ու ընթացքը, մի խոսքով իր եվոյուցիան։ Այնտեղ յեվս արձագանք են տալիս մեծ քաղաքի իրադարձությունները։ Յեվ այդ թաղի «ժողովուրդը» միշտ ել չի մնում նույն սահմանների մեջ կամ մի յեվ նույն հասարակական զանգվածով ու բովանդակությամբ։ Դրան ապացույց վո՞չ միայն մեր հեղինակի հաջորդ գրվածքները, այլև հենց ներկա հատորը, այս յոթ պատմվածքները։ Դիտեցեք թե ինչ լեզվով ու վոճով են խոսում այդ «թիֆլիզեցիք»։ —Հայ «ժողովրդի» զրեթե բոլոր յերկրագիտական հատվածների բարբառների հետքերն եք գտնում նրանց խոսք ու զրույցի մեջ։ Կնշանակե՛ արվարձանը մի բուրա յե, մի լայնաթերան յերախ, վոր իր մեջ նոր հանրային վառելիք կամ կեր ե առնում, կլանում, կերպարանափոխում, զտում։ Մեր թաղը չի մնում միշտ նույնը, յեվ այսոր այն չե, ինչ վոր յեղել ե ութսունական թվականներին։

Նար-Դոսը նկատում ե, վոր իր թաղեցիք նույն ծանրակիր աղքատությունն են տանում, ինչ վոր առաջ։ Բայց դա դեռ ապացույց չե։ Աղքատներ յեղել են «քաղաքակրթության» բոլոր դարերում, «յերբ մեկը մի կտոր հող ե վերցրել յեվ ասել՝ իմն ե» (Ռուսասո)։ Բայց այսորվա աղքատ թիֆլիզեցին նույնը չե, ինչ վոր ութսունական թվականների աղքատը։ Դա ինքնուրույն, բայց մանր արհեստավորն եր, մանր խանութպանը, փոքրիկ տնատերը։ Մեր ապրած տասնամյակի նույն այդ թաղի աղքատը սեփականազրկված արհեստավորն ե, գյուղից նոր քաղաք յեկած աղքատ գյուղացին, գործարանից դուրս շալրտված անգործ բանվորը, աշխատանքի ինվալիդը։ Նար-Դոսի նկարագրած շրջանից հետո յերեք տասնյակ տարիների ընթացքում թիֆլիզը միջակ վաճառականական քաղաքից դարձավ խոշոր առեվտրականարդյունաբերական քաղաք։ Աղքատության պատճառների մեջ ակներեվ փոփոխություն ե մտած, աղքատների հոգեբանությունն այլ ե, ապրուստի յեղանակներն ու միջոցները տարբեր են, յեվ այլն։ Ուրիշ խոսքով վո՞չ միայն տնտեսական պայմաններն են փոփոխած, այլ յեվ կուլտուր-լուսավորական հանգա-

մանքները, մտայնությունը: Ութսունական թվականների հայ քաղքենիների տգիտությունն ու սնապաշտությունը պատկերացնելով՝ Նար-Դոսն իր հետագա յերկերում տվել ե այդ յերեվույթների զարգացումն ու կերպարանափոխությունը: Ութսունական թվականների «մեր թաղի» հայուհին աղքատ եր, տգետ, սնոտիապաշտ, բայց այնուհետեւ Նար-Դոսը գծել ե զիմնազիավարտ հայուհիների տիպեր (որինակ՝ բժիշկ եղբայր ունեցողը «Ճանտիրոջս աղջիկը»), վորոնք չնայած իրենց ստացած միջնակարգ ուսմանը, մնում են սնոտիապաշտ, ուխտ են գնում, մատաղ են անում, զրբացի դռներ են մաշում: Յերեվույթն արտաքուստ նույնն ե—սնոտիապաշտություն,—բայց հիմնական բովանդակությունն այլ ե. զիմնազիավարտի ու բնավ անզրագետի նախապաշարումների աղբյուրներն ըստ ամենայնի միեւնույնը լինել չեն կարող: Յեթե ավելի հեռուն գնանք, կարող ենք ասել.—այսոր ամերիկյան զիտուններ դուրս են զալիս դարվինիզմի դեմ պայքարելու—«կապկային դատեր» են սարքում: Հարկավ, տգետ չեն այդ մարդիկ. բայց նրանց հասարակական քաղաքականության համար ոգտակար ե նման հետադեմ քայլը: Մենք կարող ենք անհավատ լինել, սակայն կրոնը հարկավոր ե «ժողովրդի» համար—ահա՝ այդ զիտնականների լիբերալ տրամարանությունը:

Տարբեր յերեվույթների նույնացման պատճառն այն ե, վոր Նար-Դոսը, ինչպես յեվ մեր մյուս թեալիստներից վումանք, որինակ՝ Շիրվանզադեն, շատ ուժեղ ե, յերբ կյանքը սոսկ պատկերացնում ե, յերբ մերկ իրականությունն առարկայորեն ներկայացնում ե, այսինքն՝ իբրեւ գեթ ժանրիստ, կենցաղագիր: Բայց հենց վոր սկսում ե իր կենցաղական պատկերները բացատրել կամ, ինչպես Գ. Պլեխանովը ե ասում, յերբ սկսում ե «հրապարակախոսել»\*), այն ժամանակ նա սայթաքում ե: Ասել թե ութսունական թվականներից մինչեւ հիմա մեծ քաղաքի արվարձանը մնացել ե միշտ միեւնույնը, քարոզել այդպիսի մի միտք յեվ դրա հակառակը մշտապես պատկերացնել—դա, իսկապես շատ հետաքրքրական յերեվույթ ե զրականության թեորիայի տեսակետից:

Ճիշտ պատկերացումն ու սխալ բացատրությունը պարզում են Նար-Դոսի տաղանդի «ազն ու ահյակը»: Նա իր ամբողջ զրական գործունեյության ընթացքում շատ հաճախ ստույգ կերպով, առանց սխալվելու դրել ե մատը հասարակական վեր-

\* ) Г. В. Плеханов. „Собр. Соч.“. т. X. стр. 69.

բերի վրա, նիշել ե մեծ վարպետությամբ հանրային աղետները։ Նա յեղել ե մեր զրականության մեջ այն յերախտավոր «լուսավորիչներից» մեկը, վոր խորապես հասկացել ե, թե տնտեսական զարգացման հետ միասին ի՞նչ խոշոր արժեք ունի մասսաների կուլտուրական լուսավորությունը։ Ի՞նչ ե՝ Նար-Դոսի հասկացողությամբ, կուլտուրան։ Դա նշանակում ե առաջին հերթին շրջանայեցողություն, ապա հասկացողություն կյանքի այն յերեվույթների, վորոնց մեջ ապրում ե քաղաքացին։ այդ տեսակետով՝ անզրագիտության վերացումը, նախապաշարումների մերկացումը, հակակղերական կամպանիան, վոր մեկից ավելի անգամ պատկերացրել ու շեշտել ե Նար-Դոսը, միանգամայն արժեքավոր են։ Կուլտուրայի մասին մի տեսակետ ե դա, վոր այսոր այնքան թափով պաշտպանում ե Լ. Դ. Տրոցկին։

Միակ պակասությունը, վոր ունի Նար-Դոսը, դա այն ե, վոր նա հաճախ չի լուսաբանում թե ինչ հասարակական կամ դասակարգային աղբյուրներից են ծագում իր հիշատակած կենսական չարիքները կամ ինչ ուղիով պետք ե հառաջ ընթանալ ապագային՝ աղետը վերացնելու համար։

Նրա տաղանդի այդ «աջն ու ահյակը» փաստորեն ցույց տալու նպատակով ուղղակի դիմենք «Մեր Թաղին»։

\* \* \*

«Մեր Թաղը» կենցաղական պատկերների մի շարք ե։

Հեղինակը նախ քան «հերոսների» հոգեբանության դիմելը, գծագրում ե ֆիզիքական կեցության նկարագիրը, տալիս ե այն աշխարհագրական միջավայրը, վորտեղ գործում են իր թաղեցիները։ Ի՞նչ տնտեսական պայմաններում են ապրում նրանք, ի՞նչ գույքի յեկ ստացվածքի տեր են, ի՞նչ՝ պարապմունք կամ գործ ունեն։ Ամենից առաջ այդ հարցերն են զրավում մեր հեղինակի ուշադրությունը։ Նախ քան սենյակ մտցնելը, նա, Բալզարի պես, նախասենյակում փորք ինչ սպասել ե տալիս։

Տեսնենք տված պատասխանները։

Ո՞վեր են նրա «հերոսները»։ — Զուլհակ, ներկարար, զինագործ, հյուսն, կառապան, մսագործ, մրգավաճառ, զրբաց, լոթի կամ պարապորդ, մեծ քաղաքի սրիկա, կապալառու, զինեվաճառ։

Ի՞նչ պայմաններում ե ապրում նրանց մեծամասնությունը։ Նախ տեսնենք սեպհականությունը, Պիտի նկատի առնել. վոր

«հերոսները» մեծ մասամբ տնատեր են: Ի՞նչ տուն ե դա:—«Տո՛, տանդ մի բացի տամ, շուռ կզա»—ասում ե կապառալու աղա Սիրգոն «դուրզար» Սաքուլին: Բացի այդ՝ «տներն իրար վկայեն հենվում յթափիվելու համար», այնքան խարխուլ յեվ կիսարանդ են: Իսկ ի՞նչ գույք կամ ստացվածք կա ներսում:—Ներկարար Դավթի տունը «սրբված ե», այլ յեվս վոշինչ չի մնացել զրավ դնելու համար, ինքը պարտքի մեջ ե թաղվել: Նա ծաղրում ե կնոջն ու աղջկանը, թե՝ ինչո՞ւ համար են դուռը պինդ փակել, լինի թե վախենում են գողերից, վոր զան թալանին հարստությունը: Իսկ բա՞կը: —Այդտեղ տարիների աղք ե դիզված, սոսկալի գարշահոտություն ե տիրում չորս բոլորքը: Փողոցներն ի՞նչպես են:—Ծուռ ու մոռ, ավելի կեղտոտ քան բակերը, գիշերներն իրը թե լուսավորում են նավթե լապտերներով, վորոնց լույսը մեր հեղինակը նմանեցնում ցավազար ճպոռտ աչքի նվազագույն լույսին:

Նար-Դոսի հերոսներն ի՞նչպես են անց կացնում իրենց կյանքի որերը: — Դժոխալին «ինքնուրույն» աշխատանքով, որն ի բուն տնքում են, բայց ծայր ծայրի հազիվ են հասցնում, կեսկուշտ, կես-քաղցած են ապրում: Վո՞չ միայն տղամարդիկ, այլ յեվ նրանց կանայք ու դեռահաս յերեխաներն արյուն-քրտինք են թափում. իրենց «բորփաներին» (հիշեցեք Հով. Թումանյանի Գիքորին) ծառայության յեվ «աշակերտության» են տալիս, նըրանց վաղաժամ շահագործում ու ծերացնում: Բայց յեվ միշտ աղքատ են մնում. հաճախ հիվանդանում են հակառառողջապահական նողկալի պայմանների հետեվանքով: Հիվանդության առաջ ծառանում են՝ մեկը մյուսի առաջը կտրելով,—չքավորությունը, տղիտությունը, մնոտիապաշտությունն ու համակերպվող վոգին: Մոմի, մատաղի, գրբացի, հերիմի յեվ հեռավոր ուխտագնացության համար ինչ գնով ուզում ելինի, փող ճարում են, անզամ տուն են գրավ դնում, միայն թե «սուրբը խռով չմնա»:

Այդ բոլորը տանել կարենալու կամ հանդուրժելու համար ստեղծվում են «պարապ վախտի» ժամանցներ: Կ. Մարքսն ասել ե՝ բանվորի համար իսկական, մարդավարի ժամանակը—նրա ազատ, ֆիզիքական աշխատանքից դուրս ժամերն են: Նա նկատի ուներ այն հանգամանքը, վոր բանվորն իր ազատ ժամերին պիտի զիտակցորեն վորոնճար գործարանային կյանքի դասերը, սրանցից համապատասխան հետեվություններ հաներ բանվորական կլուրում, թատրոնում, կոոպերատիվի ընթերցարանում, յեվ այլն:

Նար-Դոսի «ինքնուրույն աշխատավորները», մեր թաղի այդ մանր սեպհականատերերը լցնում են իրենց ազատ ժամերը՝ տղամարդիկ գինեմոլությամբ, թղթախաղով (աղքատ մոր յերկու հավը տանուլ տալու վերջարանով), իսկ կանալք—վեճերով ու կռիվներով։

Հոգեթաններից մեկը «թատրոնական հասարակության» չափից դուրս ծափամոլությունը բացատրում է նրանով, վոր «հին թատրոնը», ինչպես յեվ «հին դպրոցը» ժամերով անշարժ ու պասախվ պահելով իրենց ունկնդիրներին, վերջ ի վերջո ստեղծում են շարժման, սթափման, «դինամիկայի կարիք», վոր թատրոնում արտահայտվում ե հաճախ անտեղի ծափահարություններով, իսկ դպրոցում—անիմաստ չարանճիություններով։ Իսկ ոռւս ըննադատ Պիսարեվը միջնադարյան «բուռնզրի իրավունքը», հաճախակի կոիվլները՝ իր «Հոռմայեցիք» զրվածքում, բացատրում ե թե՛ տնտեսական պատճառներով յեվ թե այդ ֆեոդալական հասարակության բուռն կարիքով շարժելու բարացած կյանքի անշարժությունն ու նիրհը։

Այսպես ել այն քնեած կյանքը, վոր վարում են Նար-Դոսի մանր սեպհականատերերը «դինամիկայի կարիք» և առաջ բերում. դա արտահայտվում է վեճերով, կոիվլներով, բամբասանքներով յեվ, զիսավորապես, գինեմոլությամբ։ Վերջին յերեվույթի պատճառը, ինչպես բացատրել են իրենց պատմվածքների մեջ ոռւս գյուղագիրները, որինակ՝ Ուսպենսկին, Կարոնինը, յեվ այլք,—հաճախ լինում ե իրական թշվառությունների մոռացման տալու կամ յերազների աշխարհում իրեն ազատ ու անկաշկանդ զգալու հակումը։ Մաքսիմ Գորկու «հերոսների» համար մեծ մասամբ նույն նպատակին և ծառայում «արադի ծովը»։ Տրյուկային կինոն այդ բոլորից հետ չի մնում։ Նար-Դոսի թաղեցիք միայն հարրած ժամանակ «հեղափոխական» են, ժխտում են պապերից ժառանգություն տուացած «աղաթները»։ Նրանք բոլորն, վոր այնքան սնապաշտ ու յերկյուղած են, առյուծ են դառնում խմած ժամանակ յեվ իրենց «զրաստային ուսերից» նետում են նախապաշարումների բեռները։ Խմած ժամանակ նրանք դառնում են աթեյիստ։ Որինակ՝ զինագործ Ասատուրը զինու զավլս այնքան շատ ե սիրում, վոր այն իսպառ դատարկելուց հետո, յերբ կատարելապես «թրջվում ե», ինչպես ասում են հայերը, կամ «արդեն պատրաստ ե», ինչպես ասում են հարրածի մասին ոտարները,—զավի վրա մեծ հանդիսավորությամբ մում ե վառում յեվ կրոնական արարողություն կատարում։

\* \*

Իրական կյանքի այդ մարմնացյալ դժոխում անտանելի յե կանանց յեվ յերեխաների վիճակը:

Մենք վերեվ ասացինք, վոր յերեխաներն արդեն մանկուց աշխատանքի ծանր բեռան տակ սմբած են: Լվացք անող տատիկի թոռները, կար անող կնոջ ութնամյա յերեխան, յեվ այլն հավասար լուծ են կրում իրենց մեծերի հետ միասին: Իսկ ի՞նչպես են ապրում: — Դրեթե մերկ, բոկոտն, կեղտի մեջ կորած: Պարապ ժամանակ ճանճերի պես խռնվում են փողոցներում, «փողոցային չարությունները» կատարելագործում են, յերեխաներին հատուկ դաժանությամբ՝ հարրած անցորդներին «ձեռք են առնում», չարչարում են յեվ, յեթե ուրիշ գործ չի մնում անելու, միմյանց հետ կոիվներ են սարքում ժամանակ անցկացնելու համար:

Կանանց վիճակն ավելի յեվս վատթար ե, քան յերեխաներինք. Վերջիններս ջահել են, լավատես, մեծ մասամբ անզիտակ «բարիի յեվ չարի» նկատմամբ: Կանայք «ինքնուրույն» աշխատանքից վաղաժամ ծերացած, հոռետես դեպի ապագան յեվ զերեզանցորեն զիտակ իրենց անձայրածիր թշվառությանը: Նրանք բոլորն ել «բազում» յերեխաների տեղ են: Բացի իրենց ընտանեկան ցավ ու հոգսերի բեռք կրելուց, մեծ մասամբ ուրիշներին ծառայելով են գլուխ պահում: Լվացք անել, հաց թխել, բուրդ զզել, կար կարկատան անել, յեվ այլն, — ահա նրանց պարապմունքը: Մեծ մասամբ չորիկ-մորիկ, վոսկրուտ, կիսամելկ, թախծոտ, ծեծից ու հայիոյանքից շշմած արարածներ են:

«Աստոծ ինձ մարդ ե ստեղծել, թե՞ շուն» — հարցնում ե այդ կանանցից մեկը, Անանիք, վոր ամուսնու յեվ սկեսրոջ յերկայնաբարերի արանքում աղվում յեվ մաշվում ե որև որ: Մի ուրիշ «հերօսուհու» հարքեցող ամուսինը մեռնում ե՝ հարրած ժամանակ արտաքնոցի հորն ընկնելով, — մի ամուսին, վորի ծեռքին վոչ մի լավ որ չի տեսել Մարանք: Բայց յերկար միջոց վերջինս սուզ ու շիվան ե բարձրագնում, վորովհետեվ ամուսնու կենդանության որոր, այսպես թե այնպես, «պահող պահպանող ուներ»:

Այդտեղ ել նույն «հացի խնդիրը»: Շերվանզադեյի կանայք միշտ դժգոհում են իրենց ծնողներից թե՝ միթե նրանք մի «կըտոր հաց» չունեյին, վոր իրենց «չծախսեյին» չսիրած տղամարդկանց («Աւնե՞ր իրավունք»): Այստեղ ել նույնը: Թեյեվ Նար-Դոսը

մեր թաղն ե ներկայացրել, իսկ Շիրվանզադեն—թաղամեջը—Սոլոլակը։ Հայ կինը տանջվում ե յերկու թաղումն յեվս, լինի նրա անունը Մարան թե Հերսելի։ այդպես են պատկերացնում մեր բեալիստները։ Տանջանքի աղբյուրները միեւնույն են—մի «կտոր հաց» ունենալու ինքնուրույնության պակասը։ Աննա Սարոյանի տրագիզմի պատճառն ել հենց այդ ե։ Բայց կա տանջանք յեվ տանջանք։ Բուրժուական կինը ծգուում ե «իրավական ազատության»։ Ժորժ Զանդի յեվ. մեզանում, Սրբուհի Տյուսարի ռերանով պաշտպանում կանանց՝ տղամարդու բռնության դեմ։ Բայց իրավակարգի սոցիալական հիմքերը խախտելու կողմնակից չեն։ Հենց այդ պատճառով յերկու տեսակի հայ կանանց ազատագրական ուղիներն ու նպատակները բաժանվում են։

Նար-Դոսի կին-տիպարներն անդեմ են, կամազուրկ, Նրանցից մեկը տանջվում ե իր բռնակալ ամուսնու ծեռքին, ինքն աշխատում ե յեվ յերեխաներին պահում, իսկ ամուսնու ծեծից յեվ հայիոյանքներից հետո, միայն հետեւից «չանչ անելու» րիսկ ե անում։ Ֆիզիքապես առողջ հազվագյուտ կանայք իրենց ամուսիններից հետ չեն մնում յեվ կռվին կռվով են պատասխանում։ «Մարդ ու կին իրար ծեծում են հոգնելու չափ» կամ կինը բռկում ե «դավաճանել» իր ամուսնուն։ Կնօք տնտեսական կախումը տղամարդից, միջավայրի հետամնացության պատճառով, դառնում ե իսկական ստրկություն։

Նար-Դոսի պատմվածքներում ո՞վքեր են լավ ապրում, ո՞վքեր են «բախտավորները»։ — Հոգեվորականնեղ, գրքացներ, կապալառուներ, մի խոսքով՝ ծրիակերները, «Ժողովուրդը» բացի դրանցից՝ ել ո՞ւմնից ե դժգոհ։ — Վոստիկանատնից, Սիրտ խառնելու չափ խորշում ե այդ հիմնարկից։ Կարիք յեղած դեպքում անգամ՝ դժկամակորեն խուսափում ե այդ «հանրաշահ տնից»։ Ինչո՞ւ համար։ — Նախ՝ վոստիկանատան պաշտոնյաները բավական վարժ են արյունլվիկ անելու առաքինության բնագավառում, յերկրորդ՝ նրանց պատժավայրը՝ վոստիկանական բանաը — մեծ մեծ մկներով լեցուն մի խոնավ յեվ մթին նկուղ ե։ Ի՞նչ հարաբերություն գոյություն ունի «բախտավորների» յեվ «անբախտների» միջեվ։ — Դասակարգային կամ գեթ դասային գիտակցության յեվ գոչ մի նշույլ։ Արհեստավորը կապալառվին ասում ե «քո հացը շատ եմ կերել»։ Այդ կարեվոր հանգամանքը — դասակարգային գիտակցության աղոտությունը, — վոր Նար-Դոսի «հերոսների» բոլոր թշվառությունների գլխավոր պատ-

ճառն ե, մեր հեղինակի մոտ շատ բիչ պատկերացում և ստացել յեզ մնացել ե իբրեւ հարեվանցի մի հանգամանք:

Ընդհանուր գծերով ահա՝ այն միջավայրը, վոր ներկայացրել ե Նար-Դոսը: Հաճախ ձեր մտքովն անցնում ե, թե նա չափազանցնում ե: Բայց դա սխալ յենթադրություն ե: Ժամանակի մեր հրապարակախոսության մեջ, մանավանդ ամենորյա թերթերում, շատ կան այդ թաղականների կյանքից առած ցընցող նկարագիրներ: Այդ ժամանակ գործարաններում անգամ բանվորների կյանքը դժոխային եր, ուր մնաց թե «ինքնուրույն» մանր սեպհականատերերի շրջանում: Հիշեցե՛ք Գր. Արծրունու «Առաջին ժաղիկներ» հոդվածը, վորում նա պրոզայիկ տողերով արձանագրում եր նորաշեն գործարաններում աշխատող բանվորների խիստ անտանելի կացությունը:


Մեր թաղը, սակայն, տնտեսական միտում ուներ շերտավորվելու: Նար-Դոսն իր հետազա գրվածքներում շոշափել ե այդ շերտավորման միայն մի ֆազր—իր մանր մարդկանց «փողավորներ» կամ, ինչպես Ռաֆֆին ե բնորոշել՝ «մոայլ դասասակարգ» դառնալու փաստը: Նրա զրչից խուսափել ե մյուս ըեւկեռը—մանր սեպհականատերերի պրոլետարիզացիան: Մանրավաճառը նրա մոտ դարձել ե Ելիզրարյան, բայց արհեստավորներից շատ շատերի բանվոր կարապետ դառնալը նա աչքաթող ե արել: Միշտեռ Նար-Դոսն իբրեւ Վրաստանի ընակիչ այս վերջին յերեվույթն ի վիճակի յեր ավելի շուտ նկատ ելու կյանքում, բանի վոր նրա գրակա գործունեյության սկզբնական շրջանին զուգադիպել ե Արեվմտյան Անդրկովկասի արդյունաբերական վերելքու:

\* \* \*

Մի բանի խոսք ել ասենք Նար-Դոսի արտահայտչական կարողությունների մասին: Նախ՝ մեր հեղինակի «հերոսների» լեզուն: Դա Թիֆլիզի գուտ բարբառը չե, այլ հայկական բոլոր հիմնական բարբառներից կազմված մի փունջ ե, վոր ամենքին հասկանալի յե: Այդ բաժնում նա վարվել ե ոլուս վիպագիր Պիսեմսկու պես, վոր բարբառի տեղայնությունները մեղմում եր՝ այն գրականացնելու նպատակով: Նար-Դոսի վոճի պակերավորության մեջ յեվս անդրադառնում ե իր հերոսների տնտեսական կացությունը, ինչպես յեզ բարբառների խառնուրդի մեջ: Որինակ՝ կար անող կնոջ հոգնածությունը: — Սպիտակ քաթանը հետզիստե աչքին շերտավորվում ե զանազան գույներով:

Մի քանի հոգեբանական գծեր բավական նուրբ ե արտահայտել Նար-Դոսը՝ դարձալ կապելով խնդիրը «հերոսների» տընտեսական կացության հետ։ Որինակ՝ ներկարար Դավիթը զըրպանների ծակուծուկերն անդադար պըրպտում ե արծաթ դրամ գտնելու համար, չնայած խորապես համոզված ե, վոր վո՞չ մի կոպեկ չունի։ Հիշո՞ւմ եք Լ. Անդրեեվի հերոսին, վոր փողոցները ման եր գալիս «փող գտնելու համար»։ Կարիքն ել, ինչպես յեւ մյուս հզոր հույզերը, կարող են «խելազարություն» առաջ բերել։

Նար-Դոսը «որյեկտիվ» վիպագիր ե։ Բայց նրա «որյեկտիվիզմը» սառն անտարբերություն չե կամ ներոնիզմ։ Դա զրական մեթոդ ե ևս «սրտի» հետ կապ չունի։ Նա իր թշվառներին համազգում ե։ Անտարբեր հեղինակը չեր կարող ստեղծել գերազանցորեն ցնցող այնպիսի պատմվածքներ, ինչպես «Հոգուն վրա հասավ» յեւ «Յերվու կտոր շաբարի» պատմությունը։ Նար-Դոսը Զոլա չե, վորը շատ քիչ կապ եր զգում, որինակ, իր նկարագրած գյուղական տիպերի հետ, վորոնց անասնացնում եր։ Նար-Դոսի նկարագիրն ել պարկեշտ ե յեւ չունի «Հող» յեւ «Վորոգայթ» վեպերի հեղինակի ցինիզմը։ Մեր հեղինակն՝ անգամ «հայհոյանքի» մասին խոսելիս՝ համեստորեն վոչ մի նմոշ չի բերում։ Նա այս պատմվածքներում հիշեցնում է Դոստոեվսկուն, իսկ խոշոր վեպերում—Գոնչարովին,՝ հիղինակներ, վորոնց ազդեցության մասին Նար-Դոսը զրել ե Յուրի Վեսելովսկուն։



A Հ 39095

## ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Դրբույկիս մեջ զետեղված պատմվածքները գրված են սրանից շատ տարիներ առաջ (1888—1894 թ. թ.), գրական գործունեյությանս սկզբնական շրջանում։ Դրանք ներկայացնում են մեր թաղի առորյա կյանքը։ Մեր ասելով ուզում եմ ասել այն թաղը, ուր ծնվել յեվ ապրում եմ յես մինչեվ այժմ։ Այդ թաղը մի քնորոշ նմուշն ե մեծ քաղաքի ծայրամասերում, աչքից հեռու ընկած նման բազմաթիվ թաղերի, ուր ապրում ե չարքաշ աշխատավոր խեղճությունը։ Ու կարող եմ հավատցնել, վոր այն բոլորը, ինչ վոր նկարագրել եմ պատանեկական հասակումս մեր թաղի առորյա իրադարձությունների թարմ տպավորությունների տակ, մինչեվ այժմ մնում ե նույնը, գրեթե առանց վորեվե փոփոխության։ Ժամանակի ընթացքում փոխվել ե միայն թաղի արտաքինը, հին սերնդին փոխարինել ե նորը, իսկ ներքինը, եյականը, իսկ խեղճությունը, աղքատությունը, իսկ խավարի, տղիտության, նախապաշարումների, մնութիապաշտությունների թագավորությունը մնում են ցարդ անսասան իրենց բոլոր բացասական կողմերով յեվ ցավալի հետեվանքներով։

Ու այս բոլորը գեռ կը շարունակվի այսպես, մինչեվ վոր աշխատավորական ամեն մի խավար անկյուն թափանցող խորհրդային լուսարձակի շողերը գան լուսավորելու այս յեվ սրա նման ուրիշ շատ ու շատ խավար անկյուններ, ուր մարդիկ՝ ակամա կորցրել են իրենց մարդկային կերպարանքը։

Այդ բանն արդեն սկսված ե։

Վերջում հարկ եմ համարում ասել, վոր այս հրատարակության համար պատմվածքներս վերամշակված են։

9 նոյեմբ. 1925 թ.

Թիֆլիս



Մեր թաղ.՝ 2



ԻՆՉՊԵՍ ԲԺՇԿԵՑԻՆ



Մեծ ու փարթամ քաղաքի ծայրամասերից մեկի թաղը։ Հավիտենական աղբով ծածկված ծուռտիկ-մուռտիկ փողոցներ, վորոնք նեղիկ անցքերով գնում խաչաձեռւմ են իրար կամ դեմ առնում մի պատի՝ կույր մուրացկանի պես։ Իրար վրա թափված, իրարու հենված տնակներ, վորոնց խարխուլ լարիարները թվում ե թե ամեն ըոպե պատրաստ են թափվելու անցորդի գլխին։ Փոքրիկ պատուհաններ՝ կեսը ապակի՝ կեսը թղթամ, փթած դռները, հողածածկ տափակ կտուրներ, վորոնք ձմեռը տնքում են ձյունի ծանրության տակ, գարնանը ծածկվում փարթամ կանաչով և անձրենների ժամանակ կաթում, կաթում, կաթում, ստիպելով խեղճ ու թշվառ բնակիչներին պատսպարվել ծալքերում, դռների և պատուհանների խոռոչներում, չուլ ու փալասների տակ։

Այսպիսի տնակներից մեկն եր և ջուլհակ թորոսի խրճիթը։ Սակայն այս խրճիթը մյուս տնակներից տարբերվում եր միայն նրանով, վոր սրա պատերի կեսն ալիզից եր (կավի և հարդի շաղախից) և կտրան յերդիկ ուներ, վորի գլուխը ծածկված եր կոտրած կարասի վերին մասով։ Այդ յերդիկի տակ եր ջուլհակի դազգուահը և այդ տեղից եր նա ձմեռը լույս ստանում կտավ գործելիս, վորովհետեւ միակ պատուհանը շատ փոքր եր և դազգուահից հեռու։

Ջուլհակ թորոսը, վոր մի ժամանակ շատ ժիր արհեստավոր եր, նստում եր իր նահապետական դազգուահի առջե, վոտներ կախում հորի մեջ, մաքոքը հինածի միջով աջ ձեռքից ձախն եր զցում, ձախից աջը, և վաղ առավոտից մինչև ուշ գիշեր խրճիթի խոր լոռության մեջ լսվում եր ճախարակների միալար ճրոճողը։ Այժմ ծերացել եր, շատ եր ծերացել։ մեջքը կորացել, կուզ եր դարձել, միլուքը սպիտակաթավ փուլել եր կրծքին, սպիտակ թավ հոնքերը կախվել ելին հանգած աչքերի վրա, ձեռքերը դողդողում ելին և առանց ձեռնափայտի չեր կարողանում ման գալ։ Ու չեր հիշում, թե յերբանից եր, վոր դազգուահը, կարծես խոր քուն մտած, կանգնած եր յերդիկի տակ իր ցից-ցից սյուներով, առանց հինածի, վորպես մի կմախք։ չեր հիշում, թե յերբանից եր, վոր ջահրան իր ծոված անիվով ընկած եր անկյունում անգործ։ չեր

հիշում, թե յերբվանից եր, վոր մասրաները փոշեթաթախ ընկած ելին մութ պատի տակ թիթեղյա այն փոքրիկ լամպի հետ, վոր գիշերները միսում եր դազզյահի մոտ:

Այն ել չեր հիշում, թե յերբ եր մեռել կինը, թողնելով իր մի քանի զավակներից միայն մի աղջիկ, վոր այժմ մոտ յերեսուն տարեկան եր և իր միակ հույսն ու ապավենը այդ խորին ծերության հասակում: Մարթան եր նրան կերակրում, հազցնում իր ձեռքի աշխատանքով և չեր ամուսնացել միայն նրա համար, վոր ծերունի հայրն անտեր-անտիրական չմնա: Նրա, ինչպես և համարյա ամբողջ թաղի կանանց, սովորական աշխատանքը հինած գործելն եր, վոր նա վերցնում եր ասիական դերձակներից: Ամբողջ որն աշխատում եր, աշխատում առանց դադար առնելու: Նրան միշտ կարելի յեր տեսնել կամ դուրսը հարեւան կանանց պես տան պատի տակ վիլալարը ձեռքին հինած հինելիս, կամ թել կծկելիս, կամ գուլուփալի վրա թել յետ տալիս և կամ թե տանը, թախտի վրա, դազզյահի առջև նստած, գուլուփան ու թուրը ձեռքին, հինած գործելիս:

Տարորինակ աղջիկ եր Մարթան: Ծիծաղ, ուրախ տրամադրություն ասած բանը կարծես բնավ ծանոթ չեր նրան. ծանրաբարո, սակավախոս, միշտ զգաստ, միշտ լուրջ, միշտ կենտրոնացած իր ներքին աշխարհի մեջ, ուր կարծես շարունակ պըրպտում եր ինչ-վոր ու չեր գտնում: Դեռևս մոր կենդանության ժամանակ, վոր զարմանալի աստվածավախ կին եր, տարված ամեն տեսակ նախապաշարումներով, նա սովորել եր հավատալ սրբերին, վորոնք այժմ մի-մի պաշտամունքի առարկա եյին դարձել նրա համար: Նրա ամենապաշտելի սուրբը ո. Գևորգն եր, ուր ամառ-ձմեռ համարյա ամեն շաբաթ յերեկո գնում եր համբուրելու, իսկ ամեն տարի աշնանը, այդ սրբի տոնի շաբթին ծում եր պահում—ամբողջ վեց որ վոչ հաց եր առնում բերանը, վոչ ջուր, իսկ յոթերորդ որը հաղորդվում եր: Նույնիսկ մի անգամ ծումապահությունից այնպես հիվանդացավ, վոր քիչ մնաց մեռներ, բայց և այնպես շարունակում եր իրենը: Մեծ պասը պահում եր ամենայն սրբությամբ, իսկ Զատկից մինչև Համբարձումը յերկուշաբթի որերը չեր աշխատում, վոր հարինք ցավը շտարածվի և արտերը կարկտահար չլինեն: Միշտ այդպես ելին արել հայրն ու մայրը, այդպես ել շարունակում եր այժմ ինքը:

Նա հավատում եր դեերի և սատանաների, ալքերի և քաջքերի գոյության, թալիսմանների և ժողովրդական աղոթքների

զորության։ Յերազի մեջ տեսած ամեն մի կենդանի կամ առարկա նրա համար վորոշ, տխուր կամ ուրախ, պատահարի զուշակ եր, հոգ չե թե այդ յերազները բնավ չկատարվեյին։

Դեռ ևս մանուկ հասակում մորից լսել, վոր ամեն մարդու աջ ուսի վրա հրեշտակ կա նստած, ձախ ուսի վրա—սատանա. Նրանք շարունակ կովում են իրար հետ. հրեշտակը մարդուն դեպի բարին և մղում, սատանան—դեպի չարը, ուստի քնելիս պետք ե միշտ ձախ ուսի վրա պառկել, վոր սատանան տակը մնա ջարդվի։ Ու Մարթան այդպիս ել անում եր միշտ և հաստատ հավատացած եր, վոր գիշերները ձախ ուսի վրա պառկելով սատանային տակն և զցում ջարդում և դրանով ուրախացնում բարի հրեշտակին։

\* \*

Գարնան վերջին որերից մեկում մեռավ Թորոսենց հեռումոտիկ ազգականներից մեկի թոքախտավոր տղան Դարչո անունով։ Մարթային յեկան տարան, վոր ոգնի սևեր կարելու սգավորների համար։ Յերեք որ ու գիշեր մնաց Մարթան մեռելատանը և տուն դարձավ թաղման որը, արդեն մութն ընկած ժամանակ, յերր ամենքն արդեն ցըվել եյին։ Հայրը նրանից շատ առաջ եր վերադարձել և խրճիթի շեմքին նստած՝ սպասում եր նրան։

Մարթան մտավ, վոր ճրագ վառի և մտնելուն պես այնպիսի մի ճիչ արձակեց, վոր կարծես ոձ խայթեց։

Այդ ճիչն այնքան սարսափելի յեր, վոր ծերունի հայրը համարյա թե յերիտասարդական կորովով վեր թուավ տեղից և ներս ընկավ։ Ու ներս ընկնելուն պես իրեն գտավ աղջկա գրկի մեջ։ — Վայ, հայրիկ ջան, շները, կատվանիքը, — կանչեց Մարթան սարսափահար, պինդ սեղմելով նրան իր գրկի մեջ, պաշտպանություն վորոնողի պես։

Հայրը, հազիվ կարողանալով պահել իրեն նրա ծանրության տակ, շոշափեց նրա գլուխը և հարցրեց ծայր աստիճան դարմացած։

— Մարթա ջան, ի՞նչ ես ասում։

— Շները, կատվանիքը, — կրկնեց Մարթան, և հայրը զգաց, վոր նա ամբողջ մարմնով դողում եւ։

— Ի՞նչ շուն, ի՞նչ կատու, վորդի ջան։

— Հրեն... միսը քրերում են...

— Ի՞նչ միս, վժրտեղ։

— Հրեն... թախտի թակը, թախտի տակը...

Ծերունին մի կերպ ազատեց իրին աղջկա ցնցողաբար սեղմող ձեռքերից, մթության մեջ խարխափելով մոտեցավ սեղանին, վոր ճրագ վառի, բայց թե ձեռքերն եյին դողում և թե՝ իրենից պուկ չեկող սարսափահար աղջիկը չեր թողնում, վոր ազատ շարժումներ դործի: Վերջապես, սեղանի վրա յերկար տապուրպելուց հետո, գտավ լուցկու տուփը և մի կերպ վառեց լումպը: Ու յերբ լույսի վրա նայեց աղջկան, զարմանքից քարացավ: Մարթայի դեմք սարսափից ծուսովել, այլանդակվել եր, աչքերը կարծես ուզում եյին դուրս պըճնել խոռոչներից, հայացքն անմիտ եր, յերեսին գույն չկար և ինքն ամբողջովին դողում եր տերեկի պես:

— Մարթա ջան, եղ ինչ ա հալդ, ակամա բացականչեց ծերունին իր թույլ դողդոջուն ձայնով,—ընչի՞ յես դողում:

— Շները, հայրիկ ջան,—կատվանիքը... ախր միսր քըրքը ուզում են... թախտի տակը,—սարսափած կրկնում եր Մարթան ձեռքով ցույց տալով թախտը:

— Հիսուսին ու Քրիստոսին, վորդի ջան, շուն ու կատու չկա ըստեղ, աչքիդ ա երեսում—խաչակնքեց ծերունին:

Բայց Մարթան շարունակ կրկնում եր իր ասածը և, հորը պինդ կպած, սարսափահար աչքերը չեր հեռացնում թախտից:

Ծերունին մի կերպ ազատվեց նրանից, դողդոջուն ձեռքով վերցրեց լամպը, մոտեցավ թախտին, դրեց գետնին, կապերտի փեշը բարձրացեց և աչք ածեց թախտի տակը:

— Դե դու յել տես, ըստեղ ուր ա շուն ու կատու,—ասաց նա, դառնալով աղջկան:

Մարթան, առանց տեղից շարժվելու, ձեռքերը դրած ծընկներին, խոնարհվեց և չուծ աչքերով հեռվից նայեց թախտի տակը, ուր բացի կավի կրակարանից, վոր նրանք ձմեռը քուրսու տակ ելին բանեցնում, փայտ կոտրելու կացնից և ավելից, ուրիշ բան չկար:

— Չկա, —հարցրեց նա կամաց ծոր տալով:

— Բա չկա: Վոր ասում եմ աչքիդ ա երեացել...

Ծերունին կապերտի փեշն իջեցրեց, լամպը վերցրեց և տարավ դրավ սեղանի վրա:

— Նստի, բալա ջան, նստի: Մի քիչ սառը ջուր խմի, վախեցած ես:

Նա վերցրեց ջրի թասը, մոտեցավ պատի տակ կիսով չափ

գետնի մեջ խրված կարասին, ջուր հանեց և բերավ դրավ աղջկա առջեւ:

Բայց Մարթան ձեռ ել չտվավ: Այժմ հանգստացել եր և նստած եր աչքերը մի կետի հառած, գլուխը ձեռքերի մեջ առած, կարծես աշխատելով մտքերը հավաքել:

— Մեր թախտի տակը չե, — շնչաց նա յերկար լոռվթյունից հետո, — նրանց թախտի տակը... խալխը վոր քաշվեց, Դարչոյի մերն ասեց ինձ, վոր մոզու միսը հանեմ թախտի տակիցը, տանեմ դանջինումը պահեմ: Կռացա, վոր հանեմ, տեսնեմ շներն ու կատվանիքը վրա յեն թափվել քրքրում... Ընենց վախեցա, վոր... ընենց վախեցա...

— Ի՞նչ մոզու միս, — հարցըց ծերունին:

— Դարչոյենք վոր պահում ին... Են մատղացուն, ելի, վոր պըտի տանելին Բոլնըսի ո. Գեորգում մորթելին, վոր Դարչոն լավանար:

— Են ելին մորթել քելեխին:

— Բայ:

— Վայ, վայ—ասաց ծերունին գլուխը շարժելով: — Յետո դրուստ շուն ու կատվանիք ի՞ն:

— Յետ իմ... վախից սիրտս գնացել եր... Ասին, թե վոչինչ չկա, աչքիս ա երեացել...

— Աչքիդ ա երեացել, ըա, աչքիդ, վոնցոր հըմի, — վրա բերեց ծերունին: — Վե կաց, բալա ջան, վե կաց կողենքը զցի, քնենք: Իրեք որ ա չըրչարվել ես, շատ կը լես բեզարած: Նրես իմ քունն ել ա տանում:

Յեզ ծերունին, բոլորովին հանգստացած, հորջունեց:

\* \* \*

Մի քանի որ Մարթայի վարմունքի մեջ մի առանձին տարորինակ բան չեր՝ նկատվում: Սովորականի պիս առավոտները վաղ վեր եր կենում, փոքրիկ ինքնայենը զցում, անկողինը հավաքում, թախտն ու հատակն ավլում, ամեն բան իր տեղը դընում ու նստում հինած գործելու մինչև ինքնայենի յեռ զալը: Հետո հոր հետ սուսուփուս թեյ եր խմում ցամաք հացով և նորից գործի նստում մինչև ճաշ և մինչև յերեկո: Բայց այնուհետեւ հայրը նկատեց, վոր նա մենակ գործի նստած ժամանակ խօսում և ինքն իրեն, դեմքով ինչ-վոր ծամածություններ ե անում, յերբեմն ծիծաղում առանց վորեն առիթի, յերբեմն ել սպառի

պես մղկտալով մրմռում, լաց լինում։ Մի որ ել ծերունին դրսից ներս գալով տեսավ թախտը մի կողմն և քաշել ու կացնով քանդում և գետինը։

— Մարթա, եղ ի՞նչ ես անում, — բացականչեց նա զարմացած և վախեցած։

— Հանում եմ Հանում եմ, — ասաց Մարթան, կացինն ուժդին թափով զարկելով հողի հատակին։

— Ի՞նչը։

— Մողին…

— Ի՞նչ մողի։

— Մատաղացու մողին... մատաղացու մողին... ո. Գեորգի մողին... քանի վախտ ա մզգում ա... բա մեղքը չի... բա մեղքը չի... բա թողանք, վոր շներն ու կատվանիքը գզզեն...

Ասում եր ու հեալով քանդում գետինը շարունակ, հողը ցաքուցրիվ տալով շուրջը։

Ծերունին, տեղն ու տեղը քարացած, նայեց, նայեց, հետո մի «վայ» արավ և յերկու ձեռքով թակելով գլուխը շտապեց զեպի դուրս հարեւաններին ոգնության կանչելու։

Չանցավ մի հինգ րոպե, և արդեն ամրող թաղը դրնգում եր, թե «Թորոսանց Մարթան գժվել ա»։ Ել մեծ, ել փոքր, ել կին, ել աղջիկ — ով ասես, բան ու կործ թողած, շտապում եր թամաշի։ Թորոսանց խրճիթի ներսն ու դուրսն ասեղ զցելու, տեղ չկար. իրար ճխելով, իրար հրելով, իրար վոտ կոխ տալով ներս ելին խցկվում հա խցկվում խրճիթի նեղ դռնից։ Չայների ժխորը բռնել եր ամրող փողոցը։

Մարթան նստած եր իր փորած գետնի վրա և, կացինը ձեռին, խելագարի անմիտ հայացքով նայում եր ներսը ճխտված կանանց և յերեխաների ամրոխին։ Շրթունքները շարունակ կըրծում եր և դերիալի փեշը փաթաթում մատների վրա, յետ անում ու նորից փաթաթում։ Նստած եր լուռ, բոլորովին ձայն չեր հանում մինչև խոկ այն ժամանակ, յերբ փորձում ելին խոսեցնել։ Մի քանի սրտոտներ փորձեցին կացինն առնել նրա ձեռից և վեր կացնել, բայց նա կացինը շեքը կոխեց, ամրող մարմնով կոացավ նրա վրա և սկսեց լաց լինել յերեխայի պես, յերբ նրա ձեռքից ուզում են խլել իր խաղալիքը։

Տեղահան արած թախտի ծայրին կծկվել կուչ եր յեկել ծերունի հայրը, կուզը ցցել, սպիտակ միրուքը թաղել ծնկների արանքին և մղկտում դառնագին։

Ներսը հավաքված կանայք նայում եյին ծերունուն և նրա պղջկան խղճահարությամբ, կարեկցությամբ և մի տեսակ վախի զգացումով, վոր ակամա պատում և մարդուն խելագարի հանդեպ: Յեվ թեպետ վոչ վոք տեղից չեր շարժվում, բայց ամեն մեկի մեջ այդ վախի զգացումն այն աստիճան ուժեղ եր, վոր բավական եր Մարթան հանկարծ վեր թռչեր տեղից և վրա պրծներ, խկույն ամենքը զլխապատառ դուրս կը փախչեյին ճիչ ու ծկըլթոցով:

Իսկ այն կանանց մեջ, վորոնք ամբոխվել եյին դուրսը՝ ներսը տեղ չլինելով պատճառով, տեղի եյին ունենում հետեյալ խոսակցությունները.

— Աղջի Նատո, տեսնես ընչիցն ա խելքից ըլել: Եփոն ասում ա, թե Դարչոյի հոգեառ հրեշտակն ա խփել, յանի դորթ ա:

— Դե յես իմ. վորն եղ ա ասում, վորն ել ասում ա, թե Բոլնիսի ս. Գևորգն ա բռնել:

— Իր, մեռնեմ նրա զորութենին. յանի եղ խեղճին բռնում ա ինչ անի: Հանդիպիսի կըլի եկած:

— Ասում են, թե Դարչոյենց թախտի տակը շներ ու կատվանիք են երեացել աչքին:

— Դրուստ ա, դրուստ, խոսակցությանը խառնվեց մի ուրիշը, վորը, ամենից անտարբեր, յեկել եր ամենից ուշ և գուլպա յեր գործում: — Ողորմածիկ Դարչոյի են շաշ մերը Բոլնըսի ս. Գևորգի հըմար յետ դրած մողին վեր ա ունում քելեխին մորթիլ տալի, մատղացուն խաշլամի տեղ ուտացնում: Բա խելքը զլխին կնիկարմատն ըտենց բան կանի: Վոր շաշ ա, շաշ, ելի: Քելեխին եղ մողու խաշլամիցը վորն ուտում են, ուտում, մնացածն ել դնում թախտի տակը, պահում: Յեննա, իրիկնապահին, խալխը վոր քաշվում ա, Դարչոյի մերը Մարթին ասում ա, վոր միսը թախտի տակից հանի, դնի գանջինումը: Մարթեն հենց կռանում ա, վոր հանի, տեսնում ա շներ ու կատվանիք են թոփըլել մսի վրեն, քրքրում: Հա ըստեղ սիրտը գնում ա վախից: Վրա յեն թափվում, ջուր ածում, քրքրում, գջլտում, զորով յետ բերում: Այ ըսենց ա ըլել բանը, թե վոր դրուստն ուզում եք իմանա:

— Բա շուն ու կատու չի ըլել:

— Իր, շուն ու կատու, չե մի վոտներ: Աչքին ա երեացել:

\* \* \*

Թաղի կանանց այցը վերջանալուց հետո հավաքվեցին Թո-

բոսի հեռու-մոտիկ բարեկամ կանայք և սկսեցին խելք-խելքի տալ, թե ինչ դարման անեն: Խորհրդակցությանը՝ նախագահում եր հարևան խարազ Պետոյի այրի կինը—Ռունը, վորը հայտնի յեր իր լեզվագարությամբ և առանց վորի գործոն մասնակցության թաղում վոչինչ չեր կատարվում: Ռունի առաջարկով վորոշեցին դիմել տերտերի փեսա գրքաց և հեքիմ Գրիգորին, վորը մեծ հոչակ եր վայելում նախապաշարված ժողովրդի շրջանում: Բերնե-բերան լեզենդներ ելին պատմում նրա անվրեալ գուշակությունների և բժշկությունների մասին, այնպես վոր տարվա բոլոր յեղանակներին և շարաթվա բոլոր որերին նրա ընդունարանը լիքն եր լինում ամեն ազգի, ամեն հասակի ու սեռի, զբլիւավորապես կին-ալցելուներով, վորոնք ժամերով հերթի ելին սպասում: Այդպիսի պայմաններում հիշտ չեր նրան տանից դուրս բերել առանց խոշոր և կանխիկ վարձատրության: Թորոսը միքանի գրոշներ ուներ հոգեպահուստ, մնացածը լրացրին սրտացավ բարեկամներից վոմանք, մի կլորիկ գումար կազմեցին, տըզին Ռունի ձեռքը և զրկեցին գրքաց Գրիգորի մոտ:

Գրքաց Գրիգորը սկզբում չեմուչում արեց, փողը քիչ համարեց, ասաց, թե ժամանակ չունի, վերջը, անսալով Ռունի ճարտար լեզվին, համաձայնեց և խոստացավ հետեւյալ որը ճաշից հետո ալցելել հիվանդին:

Մոտ քառասուն տարեկան մսեղ մարդ եր նա պստիկ ժըստուն աչքերով, կլորիկ, մաքուր սափրած կարմիր դեմքով, բաճկոնի տակ հազած դեղին չեսունչի արխալուզով, վոսկեզոծ նեղ քամարով և ձեռքին շարունակ մի կարճ համրիչ դեղին հատիկներով, վոր նա ավելի շուտ ափից ափ եր նետում, քան հատիկները զցում:

Հետեւյալ որը ճաշից հետո նա կատարեց իր խոստումը և յեկավ Ռունի առաջնորդությամբ: Նրա ճարպոտ դեմքից, մի քիչ ծուռ գրած զգակից և սովորականից ավելի ժպտուն աչքերից յերեսում եր, վոր լավ կերել-խմել եր:

Յեկավ, ու թաղը նորից դրնգաց: Այս անգամ հետաքրքրությունն ավելի մեծ եր, քան նախորդ որը, յերը նոր եր տարածվել Մարթայի խելազարության լուրը: Թաղի կանայք, իրարձեն տալով, վազում ելին, վորը ծծկեր յերեխային խտած, վորը վոտարորիկ, վորը շտապելուց չուստի մեկը մոռացած, մյուսը քարշ տալով վոտին, վորը զլխի աղլուխի ծայրերը շտապ կապելով, վորը կուրծքը կոճկելով: Ու ամենից ասած, թաղի անթիվ

յերեխաները համարյա թե տկլոր ու վոտաբորիկ, թռչկոտալով  
ու ծկլթալով:

Դեռ նախորդ որվանից, թախտը տեղահան անելուց և գե-  
տինը քանդելուց հետո, Մարթան բոլորովին հանգստացել եր,  
լեզուն փորը զցել և իր համար կար սուսուփուս: Այժմ ել, յերբ  
դրբաց Գրիգորը մտավ, նա հանգիստ նստած եր թախտի վրա,  
արմունկը հենել ծնկանը, գլուխը դրել ափին և անթարթ նայում  
եր պատուհանից դուրս, կարծես խոր մտածմունքի մեջ ըն-  
կըղմված:

Դրբաց Գրիգորին հարգանքով և պատկառանքով առաջար-  
կեցին խրճիթում զտնված յերկու հատիկ հնաձև աթոռներից  
մեկը: Նստեց և սկսեց մանրամասն հարցուփորձ անել: Սկսեցին  
իրար կտրելով, իրար ուղղելով, վորը սկզբից, վորը վերջից, վորը  
միջից պատմել ամբողջ յեղելությունը:

Գրիգորը նստած եր գդակը յետ զցած ճակատից, աթոռի  
մեջքին յետ ընկած, ձեռքերը դրած կրծքին համրիչի հատիկները  
մեկ-մեկ զցելով, և լսում եր նայելով մերթ Մարթային, վորը  
նստած եր անշարժ նույն դիրքում, և մերթ դռան կողմը, վոր-  
տեղից մեկը մյուսի յետեկից կամացուկ, իրար հրելով ու փսփսա-  
լով ներս ելին մտնում թաղի կանայք և տապ անում իրար քա-  
մակի:

Յեղելության պատմությունը լսելուց հետո Գրիգորը վեր  
կացավ, աթոռն առավ և գնաց նստեց ուղղակի Մարթայի առջև:

Մարթան վերջապես շարժվեց, նստեց ուղիղ և սկսեց խոր  
դիտել նրան հոնքերը կիտած. հետո հանկարծ հոնքերը վեր նե-  
տեց, լեզուն հանեց, ծափ տվավ և սկսեց ծիծաղել:

Խելագարի այդ վարմունքի վրա մի փոթկոց բարձրացավ  
թամաշաչի կանանց մեջ:

Գրիգորը, սակայն, վոչ մի ուշադրություն չդարձրեց խելա-  
գարի այդ վարմունքի վրա, համրիչը հանգիստ կերպով զցեց  
արխալուղի գրպանը, մյուսի գրպանից հանեց մետաքսի թաշկի-  
նակի մեջ խնամքով փաթաթած ինչ-վոր մի բան և սկսեց կա-  
մաց-կամաց բաց անել. հնությունից և շատ գործածելուց մաշ-  
ված ու կեղտակալած կաշեկազմ մի փոքրիկ ու հաստ գրքույկ  
եր, վոր նա անվանում եր «Սովորությունի գիրք»: Յերկար ժամա-  
նակ ծանրութարակ թերթելուց հետո վերջապես կանգ առավ մի  
լերեսի վրա և սկսեց կարդալ կամացուկ:

Խրճիթում բոլոր շշուկները դադարեցին՝ ամենքը լորված  
լսողություն դարձան:

Մարթան նույնպես առաջվա պես սուս եր արել, հոնքերը կիտել և անոիտ հայացքը հառել Գրիգորի շրթունքներին: Բայց չանցավ մի քանի բողե, յերբ հանկարծ նա յերկու ձեռքով պինդ զարկեց ծնկներին, վեր թռավ տեղից, իրեն ներքե զցեց և ուղեց դուրս փախչել:

Խելագար աղջկա այդ նոր վարժունքի վրա խրճիթում տիրող հանդիսավոր սպասողական դրությունը մեկեն սոսկալի ժըխորի փոխվեց: Սարսափահար ամրոխը ճիչ ու աղաղակով զցեց իրեն դեպի դուռը, բայց դուռն այնքան փոքր եր և ամենքն այնքան ճխտված եյին իրար, վոր համարյա վոչ վոք չկարողացավ իսկույն տեղից շարժվել, բացի դռան մոտ կանգնածներից, վորոնք դուրս փախան զլխապատառ: Մինչև վոր մյուսների համար ել ճանապարհ կը բացվեր դուրս փախչելու, Ռսանը և մի քանի ուրիշ սրտոտներ բռնեցին խելագարին, վոր փորձում եր կծել նրանց ձեռքերը, տարան նորից նստեցրին թախտի վրա և գրրացի հրամանով թոկով կապեցին նրա ձեռքերը յետեից:

Խրճիթը դատարկվեց թամաշաչի կանանցից և լերեխաններից:

— Դուռը կողպեցեք, ել ոչովի չթողաք մտնի, — հրամայեց գրբաց Գրիգորը, վոր այժմ լուրջ և մտազրադ կերպարանք եր առել: — Ի՞նչ ա, մայմուն խո չե՞ն խաղացնում ըստեղ:

Դուռը փակվեց: Խրճիթում մնացին, բացի իրեն Գրիգորից, խելագարից և նրա ծերունի հորից, Ռսանը և այն մի քանի ուրոտները, վորոնք բռնել եյին Մարթային:

\* \* \*

Գրբաց Գրիգորը նստեց իր առողջվա տեղը, Մարթայի առջև, և նորից սկսեց թերթել «Սողոմոնի զիրքը»: Խելագարն ալժըմ նստած եր առաջվա պես հանգիստ, առանց նույն իսկ բողոքելու, վոր ձեռքերը կապել են: Խրճիթում առ ժամանակ կատարյալ լուրջուն եր տիրում: Այն ինչ դրսից լսվում եր կանանց ամրոխի ղժվժոցը, լերեխանց կանչն ու աղմուկը: Փոքրիկ պատուհանը ծեփվել եր դրսից ներս նայող հետաքրքիր դեմքերով ու պսպղուն աչքերով, այնպես վոր առանց այն ել կիսախավը խրճիթը համարյա թե մթնել եր:

Ու նոր եր սկսել գրբաց Գրիգորը համապատասխան աղոթքը քթի տակ փնթփնթալ, յերբ Մարթան նորից զժության նըշաններ ցրւյց տվավ: Ակզրում ձեռքերը ձիգումիդ արավ, վոր կապանքից ազատի, հետո տեսնելով, վոր չի կարողանում, սկըսեց վոտները բալզի-բալզի անել, վոլոր-մոլոր զալ և բղավել ու անիծել:

Գրիգորը դուխը յերերեց, գիրքը ծածկեց և վեր կացով:

— Տես, տես, ինչ են անում նզովվածները, — ասաց նա խորհրդավոր կերպով, դիտելով Մարթուի խելագար շարժումները: — Յետ արեք ձեռները, բալքի հանգատանա:

Մարթայի ձեռքերը յետ արին, և իսկապես վոր նա հանգստացավ և այժմ սկսեց միայն լաց լինել:

— Բայ յես գրքաց Գրիգորը շեմ ըլի, թե վոր թողնեմ ես խեղճին ըտենց չարչարեք, — ասաց Գրիգորը նույն խորհրդավոր յեղանակով հայտնի չե ում հասցելին և հրամայեց, վոր մի թառ ջուր բերեն:

Թասով ջուրը բերին: Գրիգորն առավ և դրեց թախտի վրա, Մարթայի առջե:

— Մի պատիկ ըրեխա չկա, կանչեցեք դա:

Ոսանը դուռը բաց արեց, գրսից ներս կանչեց թաղի յերեխաներից մեկին, վորի հազին բացի մի կեղտոտ շապիկից ուրիշ բան չկար, և շտապեց դուռը նորից փակել մի բանի կանանց յերեսին, վորոնք, ոզտվելով այդ հանգամանքից, ուզում ելին ներս պլրծնել:

Գրիգորը յերեխայի ձեռքից բռնեց, տարավ նստեցրեց թախտի վրա և թասով ջուրը քաշեց նրա առջե:

— Իստակ մում չունեք, բերեք մի ջուխտ:

Թորոսը դողդոջուն ձեռքերով թարեքից հանեց յերկու հատ դեղին լղարիկ մեղրամոմ, վորից նա ամեն կիրակշեքին վառում եր իր դազզահի վրա և տվավ գրքացին:

Գրիգորը մոմերը կպցը թասի պոնկին իրար դիմաց և դարձավ ներկաներին դեմքի անսովոր խորհրդավոր արտահայտությամբ.

— Բայ ասիլ չեք, ես խեղճի փորը սատանեք են մտել...

— Վո՞նց թե սատանեք, — դուրս թասի ամենքի բերանից:

— Սատանեքը վո՞նց կըլին. պոզավոր ու պոչավոր, իսկական սատանեք եմ ասում, հանաք չկարծեք:

Զարհուրանքը տիրեց ներկաներին. մի քանիսը նույն իսկ յերեսները խաչակնքեցին: Ծերունի թորոսը խո տեղնուտեղը քարացավ. նա միայն անատամ բերանը բաց արավ և յերկայն միրուքը տմբատմբացնելով առանց այն ել ծերությունից առաջ ընկած գլուխն ավելի առաջ տարավ դեպի գրքաց Գրիգորը և հարցը բեց:

— Յետո՞...

— Յետո ի՞նչ։ Յետո են, վոր իրեք հատ են ու շատ ել չար։ Խո տեսաք, երկու հետ, հենց վոր սկսեցի աղոթքը կարդալ, վոնց գժվացրին։ Ուզում են ես խեղճին տանեն ջուրը գըցեն։

Գրբաց Գրիգորի այդ խոսքերի վրա խեղճ ծերունու գլուխը սկսեց ավելի շարժվել։

— Ա՛ քի մատաղ,—բացականչեց նա լալագին ձայնով, — ախր սատանեքը սրա փորն են մտնում, ի՞նչ անեն։

— Բա ս. Գևորգի հըմար յետ դրած մատղացուն մեռելի քելեխին մորթելը հանաք բան եք կարծում. բա սուրբն անպատիժ կը թողնի եղ տեսակ բանը։

— Լավ, մեռնեմ իրան, սա եր մորթիլ տվել, վոր սրան ապատժել։

— Դու գիտում չես, բիձա ջան, սուրբն արդարին ա բըռնում, վոր մեղավորները խելքի գան, իրան ընդդեմ բան չանեն։ Համա դու դարդ մի անի, — ավելացրեց Գրիգորը խրախուսիչ ժպիտով խփելով ծերունու ուսին, — յես ես ա լավացնելու յեմ։ Ինձ գրբաց Գրիգոր կասեն. սատանեք չե, Սաթայելն ել զա, իմ ձեռից պըծնիլ չի։ Դե, հըմի սկսենք։

Նա հրամայեց, վոր յերկու հոգի նստեն Մարթայի աջ ու ձախ կողմը, վորպեսզի, յեթե նրա փորի մեջ նստած սատանաները, ծվ գիտե, նորից վեր թոցնեն նրան, վոր տանեն ջուրը զցեն, բռնեն նրան, չթողնեն փախչի։

Ոսանը և մի ուրիշը նստեցին Մարթայի ալս ու այն կողմը։ Թորոսը տեղավորվեց թախտի ծայրին, իսկ ինքը Մարթան նստած եր հանգիստ, միանդամայն անտարբեր, թե ինչ են տառմ և անում իր շուրջը։

Գշիգորը մոմերը վառեց, նստեց իր առաջվա տեղը, աթոփ վրա, նորից բաց արավ «Սողոմոնի գիրքը» և ասաց.

— Հըմի ես աղոթքը վրա իրեք անզամը կը կարդամ, սատանեքը մեկ-մեկ դուրս կըգան, կընկնեն ես թասի ջուրը։ Համա մենք տեսնիլ չենք, մենակ ես ըրեխին կըտեսնի, չունքի անմեղ ա։ Պստիկ, — դարձավ նա թասի առջև ծալապատիկ նստած էրեխային, — մտիկ արա ես ջրին, աչքդ հեռացնես վոչ, հենց զոք տեսնաս սատանեքը մեջն են ընկնում, իմաց արա ինձ։ Խոյցոր։

Յերեխան տմբտմբացրեց գլուխը և աչքերը չորս շինուծ՝ հառեց թասի ջրին։

Գրիգորն սկսեց կիսաձայն կարդալ, նայելով մերթ գրքին մերթ Մարթային և մերթ յերեխային։ Ներկաներին տիրել եր նախապաշտառվածներին և սնոտիապաշտներին հատուկ այն սըրբազան յերկյուղածությունը, վորով նրանք սպասում են հրաշքի։ այդ տրամադրությունը, սակայն, ավելի նման եր ներքին սարսափի, վորովհետև գործը վերաբերում եր սատանաներին։ Սպասողական դրության մեջ, նրանք ևս իրենց կողմից նայում եյին մերթ գրքացի շրթունքներին, մերթ Մարթային և մերթ յերեխայի առջև դրած թասին, յերեկի մտածելով, թե զուցե իրենք ել տեսնեն սատանաներին, բայց անշուշտ վոչ վոքի մտքով չեր անցնում, թե ինչքան փոքր պիտի լինեն այդ սատանաները, վոր տեղավորվեն և խեղդվեն թասի ջրի մեջ։

Իսկ Մարթան նստած եր լուռ ու անշարժ և այնքան լուրջ, վոր վոչ վոք չեր կարծի, թե խելագար եւ նա աչքերը հառել եր վառած մոմերին, վորոնք, ըստ յերեսույթին, նրա խանգարված ուղեղի մեջ մութ հիշողություններ ելին հարուցանում իր առողջ ժամանակվա նախապաշտառված-բարեպաշտական կյանքից, խաչերից ու սրբերից։

Այն ինչ կանանց ամբոխի ժխորը շարունակվում եր դուրս, միանգամայն հակապատկերը ներկայացնելով խրճիթում տիրող հանդիսավոր-սպասողական լուռթյան, վորը խանգարվում եր միայն գրքացի կիսաձայն ընթերցումով։ Պատուհանի ապակիները ավելի եյին ծեփվել հետաքրքիր դեմքերով, ըստ յերեսույթին դուրսն ել զգացել ելին, վոր ներսն ինչ-վոր խորհրդավոր բան և կատարվում։

— ՀՇ, մեջը չընկամն, — յերկար ժամանակից հետո հարցը բեց գրքացը յերեխային, ընթերցումն ընդհատելով։

Յերեխան, առանց աչքերը հեռացնելու թասի ջրից. գլուխը բացասական կերպով շարժեց։

— Դալիմ են նստած, Ե, — ասաց Գրիգորը և շարունակեց ընթերցումը։

Անցավ դարձյալ մի հինգ րոպե։

— ՀՇ, ելի չընկամն։

— ԶԵ, — պատասխանեց յերեխան։

Յերրորդ անգամ կրկնվեց նույն հարց ու պատասխանը. անպիտան չար սատանաները վոչ մի պայմանով չեյին ուզում դուրս գալ Մարթայի փորից և թասի ջրի մեջ խեղդվել։

Թորոսը, Ոսանը և մյոււները մի տեսակ հարցական հայացքով, կարծես խոսքը մեկ արած, լուռ նայեցին իրար լերեսի. պարզ եր, վոր կասկածի ու թերահավատության առաջին շողներ արդ, վոր վայրկենապես լուսավորեց նրանց խավար միտքը:

Գրիգորն իսկուսն զգաց այդ ու մինչդեռ ներքին շփոթմունքը զսպած՝ չեր իմանում ինչ անի, վոր դուրս գա իր անհաճողությունից, Մարթան հանկարծ չանչ արավ նրա վրա, փչեց հանգցրեց մոմերը և սկսեց բարձրածայն ծիծաղել իր խելազար ծիծաղով:

Գրիգորը ճարպիկորեն ոգտվեց այդ հանգամանքից:

— Տեսաք,—ասաց նա գառն ժպիտով.—Ես ինքը չեր, Ե. եղ են նզովյալներն ելին, վոր հանգցրին—մթամ թե բանի տեղ չենք դնում քու աղոթքը: Դե վոր ըտենց ա, հըմի լես զիտամ...

Նա պատվիրեց վոր թասը վերցնեն, «Սողոմոնի զիրքը» փաթաթեց թաշկինակի մեջ, զրպանը կոխեց և վեր կացավ:

— Կարաք մի լախտի կամ մաթրախ ճարեք:

Այդ տարորինակ պահանջը մի նոր զարմանքի առիթ տվավ ներկաներին:

— Լախտի... մաթրախ,—հարցրին այս ու այն կողմից:

— Հա, հա, լախտի կամ մաթրախ, վորն ուզում ա ըլի—մեկ ա:

— Բնչի՞ հըմար,—հարցրեց Թորոսը, ինչ-վոր վատ բան գուշակելով:

— Դե հըմի յես նստեմ ձեզ մին-մին պատմեմ, թե ընչի հըմար,—հանկարծ բղավեց Գրիգորը գրգոված ավելի իր անաջողությունից, քան թե այդ հարցուփորձից:—Ասում եմ ճարեցեք-ճարեցեք, թե չե ես ա կը թողնեմ կը գնամ:

Սմբակ Ռւ մինչդեռ, նրա բարկությունից վախեցած, Ոսանն ու մյոււները փսփսալով խորհրդակցում ելին իրար հետ, թե վոր ընդունակությունը լախտին կամ մաթրախը, նա նորից գոռաց անհամբեր:

— Դե շնուռ. յես խո կարալ չեմ ըստեղ տասը սըհաթ նստի. հըրես վորտեղ վոր ա կը մթնի:

Ոսանը, կիսատ թողնելով խորհրդակցությունը, շտապեց շնչարդապահությունը ա գնում եմ ճարեմ», բայց բավական ժամանակ անձնությունը, խմբակը վոր վերադարձավ մի մաթրախ ձեռքին:

Գրիգորը այս միջամտիքն առավ և հրամալեց, վոր ամենքը գուրս ը-ընտան պէն

Այս բանն ավելի մեծ կասկած դարթեցրեց, բայց վոչ վոք չհամարձակվեց ձայն-ծպուտ հանել, վորովհետև Գրիգորն այն աստիճան դաժան կերպարանք եր առել, վոր կարծես այն քաղցրախոս և ժպտերես մարդը չեր այլիս: Միայն Թորոսն եր, վոր համարձակորեն հարցրեց:

— Յես Ել:

— Ամենքդ, ամենքդ: Դու ել, այ լակոտ,—դարձավ Գրիգորը յերեխային, վոր համարձակ ցցվել եր նրա առջև, ըստ յերեվույթին սպասելով, թե մի նոր պաշտոն պիտի հանձնեն իրեն:

Ամենից առաջ դուրս թռավ յերեխան: Այնուհետև սուս ու փուս մեկը մյուսից յետեկց դուրս գնացին Թորոսը, Ոսանը և մյուսները:

— Եղ խալխին ել քշեցեք ակոշկի մոտից, ոչովի թողնեք վոչ մտիկ անի,—զոռաց նրանց յետեկց Գրիգորը և դուռը փակեց:

\* \* \*

Թորոսը մեծ անհանգստությամբ և մութ կասկածները սըրտում նստեց հենց այնտեղ, դռան մոտ գետնի մեջ խրված սալքարի վրա, յերկայն միրուքը կախելով չորիկ-մորիկ ծնկների արանքում, իսկ Ոսանը մտազբաղ դեմքով սկսեց հեռացնել կանանց ամբոխը պատուհանի մոտից, սիենույն ժամանակ կցկտուր պատասխաններ տալով չորս կողմից իրեն ուղղված անհամբեր հարցուփորձերին: Նույն հարցուփորձերով շրջապատել ելին յերեխային և մյուսներին, վորոնք ներկա ելին յեղել խրճիթում կատարվածին: Սատանաների անունն իր ազդեցությունը գործեց. վոմանք յերեսները խաչակնքեցին, վոմանք ահ ու դողով բռնված՝ կարկամեցին, վոմանք ել, թերահավատնե ըից, քթերը վեր քաշեցին ասելով՝ «սատանեք չե մի վոտներ»: Բայց ընդհանուր ժխորն այժմ միանգամից դադարեց: Հետաքրքրությունն իր գագաթնակետին եր հասել. այժմ ամենքն անհամբեր սպասում ելին, թե ինչ պիտի կատարվի ներսը, խրճիթում:

Իսկ խրճիթն առժամանակ խորհրդավոր լոռւթյուն եր պահպանում:

Մեկ ել հանկարծ ներսից մի սարսափելի ճիչ լսվեց, վորին հետեւցին սրտամաշ աղաղակներ:

Փողոցը մի բոպե քարացավ: Հետո սաստիկ իրարանցում ընկավ:

Ոսանը, վոր մեջքը պատուհանի կողմն արած՝ վոչ ոքի մոտ չեր թողնում, արագ շուռ յեկավ և ձեռքերն այտերի մոտ բռնած՝ ներս նայեց ապակուց:

Ամբոխը վրա վազեց դեպի պատուհանը:

Ներսից աղաղակները լսվում եյին միալար և քանի գնում՝ սաստկանում եյին: Մեջ ընդ մեջ լսվում եյին ինչ-վոր բութ բանի դիպչող հարվածներ, կարծես ճիպոտով կարպետ եյին թափ տալիս, և ամեն մի հարվածին հետեւում եր գրբացի հատու ձայնը, վոր ասում եր, «ասա սատանեքի անունը, ասա սատանեքի անունը...»:

— Վույ, քոռանամ յես, աղջի, ծեծում ա մաթրախով, ծեծում,—ճվաց Ոսանը և յերեսն ավելի պինդ կպցրեց ապակուն:

— Հա, ելի, հա, ելի, աղջի,—ասաց մի ուրիշ կին, վոր նույնպես աչքերը չուած՝ նայում եր պատուհանից ներս:—Վույ, վույ, վոնց ա թակում, ձեզ մեռնեմ... Քա, քա, քա, ձեռներն ու վոտերն ել կապել ա թոկով... Վույ, վույ, վույ, վոնց ա թեփոին-թեփոին գալիս, ձեզ մատաղ...

Ու, այլևս չկարողանալով դիմանալ, նա սկսեց ծեծել պատուհանը, հետո դարձավ դեպի ամբոխը և աղաղակեց.

— Աղջի, ի՞նչ եք ըտեղ փետացել, գնացեք բաց անիլ տըփեք դուռը, սպանեց, ե՛, սպանեց են խեղճ աղջկան...

Բայց մինչ զարմանքից քարացած ամբոխը տեղից կը շարժվեր, Ոսանն ամենից առաջ վազեց դեպի դուռը և սկսեց ծեծել: Նրան հետևեցին ուրիշները: Յեզ բազմաթիվ ձեռքերի կատաղի հարվածներ եյին, վոր իջնում ելին հնությունից փայտոջիլներով ծածկված խարխով դռան տախտակներին: Այդ հարվածների ձայնը, ներսից լսվող Մարթալի աղեկտուր աղաղակները, դուրսն ամբոխված կանանց և յերեխաների դժվարոցը մի կատարյալ Սողոմ-Գոմոր եյին դարձրել փողոցը:

Թորոսը վեր եր կացել նստած տեղից և իր լերերուն վուների վրա հաղիվ կանգնած, ծեր գլուխը հաղիվ տմբտմբացնելով, ապուշի պես նալում եր մեկ սրան, մեկ նրան և հարցնում.

— Ի՞նչ ա, ի՞նչ ա...

\* \* \*

Այդ միջոցին այրի Ոսանի պսակած տղան, վորին թարախ ման ածող Ցական ելին ասում (նա շրջիկ մրգավաճառ եր), տուն դարձավ դատարկ թարախը գլխին, կշեռքն ուսին, չիրուխը բեր-

Նին: Նա մի բոպե կանգ առավ իրենց դռան առջև, անտարբեր նայեց փողոցում աղմկող կանանց ամրոխին, կարծելով, թե կանացի սովորական մի կոփու ե, վորպիսին համարյա թե ամեն որպատահում եր թաղում, բայց տեսնելով, վոր դա սովորական դալմաղալներից չե, այլ ինչ-վոր մի արտակարգ բան և կատարվում, թարախը դրեց գետնին, կշեռքը հանեց ուսից, թասակի հետ զցեց թարախի մեջ և, չիրուխը հանելով բերնից, հարցրեց մոտ վազող կնոջը.

— Ես ի՞նչ խարար ա:

Կինը, չափազանց հուզված, կցկտուր խոսքերով պատմեց նրան յեղելությունը:

— Են Մարթեն ա բղավում,—հարցրեց Յականը ուշադիր լոելուց հետո:

— Հա բա, հա բա,—պատասխանեց կինը լացակումած:—Սպանեց են խեղճին, սպանեց ծեծելով: Դուռն ել, տեսնում ես, քանի վախտ ա, չի բաց անում...

Յականը հանգած չիրուխը թափ տվեց կուան վրա և, խրելով մեջքին կաշու գոտեի մեջ, առանց շտապելու, սակայն լայն քայլերով դիմեց զեպի թորոսենց խրճիթի դուռը, վորը դեռևս ծեծում ելին կատաղի թափով:

— Դեսը մի տեսնամ,—ասաց նա:

Նրան իսկույն ճանապարհ տվին:

Իր ֆիզիքական ուժի վրա վստահ մարդու հանգստությամբ նա մոտեցավ, մի ձեռքը զցեց դռան տակը, ուր տախտակներից մեկի ծայրն անձրևներից փտել ընկել եր, մյուսով բռնեց յերկաթի փականքից, բարձրացրեց և մի անգամից դուռը կրնկահան ներս շպրտեց խրճիթը:

Նա մտավ և նրա յետեից ներս թափվեց ամրոխը:

Նրա աչքի առջև բացվեց հետեւալ տեսարանը. Մարթան ձեռքն ու վոտքը կապած կողքի վրա ընկած եր թախտի վրա. սպիտակ աղլուխն ընկել եր գլխից և դեմքը ծածկվել ցաք ու ցրիվ մազերի մեջ. այժմ այլ ևս չեր ձշում, չեր շարժվում, այլ միայն նվում եր ֆիզիքական ցավերից հոգնած: Նրա մոտ կանգնած եր գրբաց Գրիգորը մաթրախը ձեռին, քրտնքակոխ և հետևով: Դուան կրնկահան ընկնելը և խրճիթն ամրոխով լցվելն, ըստ յերեսյթին. այնքան անսպասելի յեր նրա համար, վոր նա մի անգամից գունատվեց և տեղնուտեղը մնաց քարացած:

Թորոսը հաղիկ վոտները շարժելով մոտեցավ թախտին և, խոնարհվելով աղջկա վրա, շշնջաց աղեկտուր ձայնով.

— Բալա ջան, վորդի ջան...

Ոսանը և մի քանի ուրիշ կանայք, սիրտ առած Յականի ներկայությունից, վրա թափվեցին և սկսեցին արձակել Մարթալի կապանքները, ասելով՝

— Վայ քո սիրտը չմեռնի, ես վոնց ա կուլուկապ արել...

Յականն իր յերկայն ու մեկ հասակով ցցվեց վախից և շըֆոթմունքից տեղնուտեղը ցամաքած Գրիգորի առջև, Նրա աշբերը վառվում ելին ներքին զսպած վրդովմունքից:

— Ես ի՞նչ ես արել,—ասաց նա, ցույց տալով Մարթային, վորի ձայնը քանի գնում նվազում եր:—Ըսենց ես լավացնում դու հիվանդներին:

— Բա վոր աղոթքը կտրում չեր,—թոթովեց Գրիգորը:

— Ի՞նչ աղոթք:

— Սատանեքին քշելու աղոթքը:

— Ի՞նչ սատանեք, տո: Յես ել խո կնիկարմատ չեմ, վոր ուզում ես խարի: Խո չես ուզում ես սըհաթին բուրդդ գզեմ: Ըսենց անաստոծ բան կըլի, վոր գու յես արել:

— Բա գժին լավացնելը վժնց ես ուզում:

— Հըմի, քու խելքով, սա գիտ ա ու դու խելոք, Ելի: Տո, քու խելքը հրես ես չի: Ենքան ծեծել ես, վոր քիչ ա մնում մեռնի: Աղոթք ու սատանեք ասում ա: Տո անտեր-մունդոիկ, բա մի մարդավարի փեշակ չկար, վոր գնացել ջաղուբազ կնկա փեշակ ես բռնէլ: Բա ել ի՞նչ ես գդակ գնում զլխիդ, գնա լաշակ ծածկի, Ելի: Փու, յես քո մարդ ասողին ինչ ասեմ: Վորտեղից ել մոգոնել ա, թե սատանեք են մտել փորը: Մի հարցնող ըլի—ի՞նչ ա սատանեն, վժրտեղից ա մտել, ընչի ա մտել: Տո, թե սատանա յես ուզում, հրեդ տեղնուտեղդ սատանա յես, Ելի, վոր սուստ սուստ բաներով խալխին խարում ես, փողերը ցնցլում, փորդ տողացնում:

— Սուտ-սուտ բաներով, բա ի՞նչ,—վրա բերին մի քանի կանայք, սրտապնդված Յականի համարձակ խոսքերից:

— Ի՞նչքան ես առել, դրուստ ասա, —շարունակեց Յականը: Եղ մաթրախը հլա մի գեսը տու...

Ու առանց սպասելու, վոր գրբաց Գրիգորն ինքը տա, մաթրախը խլեց նրա ձեռքից և կրկնեց.

— Ասա, ի՞նչքան ես առել:

— Քսան մանեթ, Յական ջան, քսան մանեթ,—կանչեցին մի քանի ձայներ:

— Հլա ասում եր քիչ ա, — ավելացրեց Ռուսը, վոր մյուս կանանց հետ դեռ ևս զբաղված եր Մարթալով:

— Հլա քիչ ա, հ՞ը, — աչքերը վոլորելով Գրիգորի վրա, գըլուխը յերերեց Յականը: — Քսան մանեթ... Տո, յես սաղ որը թրեմ գալի քուշեքը, որը մի ջուխտ չուստ եմ մաշում, շատ բղավելուց բողազս ցավում ա, թարախից շինքս փետացել ա, քիչ ա մնում կոտրվի ու մի քսան շայի անջաղ եմ դատում, վոր ողլուշաղս պահեմ, — զու քու սուտ աղոթքի ու գրի հըմար քսան մանեթ ես առնժւմ, են ել հւմից (Յականը բռնեց Թորօսի թերք և առաջ քաշեց), — սրանից, ես նաչար հալեվորից: Բա չամանչեցի՞ր սրա սպիտակ միրքիցը, բա ես սուրբ միրուքը խոռվ չկենա՞ քու գլխին: Քու լավացրածն ել ես չի՞ (Յականը դարձյալ մատնացուց արագ թախտի վրա կիսամեռ ընկած Մարթալին), ձենը անջաղ ա դուս գալի, ենքան ես ծեծել:

Իսկապես Մարթան այնքան նվազել եր, վոր թույլ հառաչանքի հետ հազիվ ելին լսվում նրա բերնից դուրս թռչող խոսքերը. «Վայ, մեռա... վայ, մեռա...»:

— Հանի ես սրհաթին քսան մանեթը, թե չե տեսնում ե՞ս ես մաթրախը, կոթն ել հետը կը կոտրեմ վրեդ: Հը, ի՞նչ ես փետացել, հանի քեզ ասում եմ, — զոռաց Յականը աչքերը կրակ կըտրած:

— Աղպեր, ի՞նչ ես ուզում ինձանից, — խոսեց վերջապես գրբաց Գրիգորը, չուզելով այդպես շուտ անձնատուր լինել, առանց իրեն արդարացնելու: — Յես խո զոռով չեկա, չեյին ուզում — չեյին կանչի. Փողն ել խո զորով չառա. չեյին ուզում — չեյին տա: Այ հարցրու, ելի. յես գալիս ի՞, հազար ու մի աղաչանք-պաղատանքով չըերի՞ն:

— Հըմի չես ուզում տա, ելի, — հանգիստ լսելուց հետո ասաց Յականը չարագուշակ ձայնով և մաթրախը բարձրացրեց:

Կինը, վոր կանգնած եր կողքին, վրա ընկավ նրա թերն:

— Վհւյ, Յական ջան, — շշնջաց նա վախեցած, — կանիծի...

— Տո, գենը գնա հա, — ասաց Յականն արհամարհանքով, թեր խլելով կնոջ ձեռքից: — Կանիծի... Յես մեկ սրա աղոթքին եմ հավատում, մեկ ել անիծքից վախենում: Սուտ խո չի ասում. ես դիմ ձեր բաներն ա: Կնիկարմատներ չեք հավի խելքով: Դուք վոր չըլեք, ես ջաղուբազները վորտեղից կըլեն... Հը, ի՞նչ ես ասում, — դարձավ նա գրբաց Գրիգորին, — տալիս ես, թե չե: Գրբաց Գրիգորը դեռ ևս տատանվում եր. յերեսում եր, վոր

շատ դժվար եր նրա համար քսան ոռւրլուց զրկվելը, բայց մի կողմից Ցականի բռնած սպառնական դիրքը, մյուս կողմից այն վախը, վոր բռնել եր նրան, տեսնելով իր «բժշկության» հետեւանքը, ստիպեցին նրան հնազանդվել:

— Վոր զոռի յես կանգնել, կը տամ, ճարս ի՞նչ, ասաց նա ձեռքը կոխելով բաճկոնի ծոցի զրպանը: Այնտեղից հանեց կաշվի մի հաստ թղթապանակ, համրեց քսան ոռւրլին և, տալով Ցականին, ավելացրեց.—տալիս եմ, համա իմաց կաց, վոր արածդ մարդավարութին չի: Ափսոս իմ ժամանակ, եսքան վախտ վոր իմ տանը նստած ըլեյի...

— Դե, ել շատ մի խոսա,—ընդհատեց նրան Ցականը,— փասա-փուսեղ քաշի գնա:

Գրբաց Գրիգորը գդակը քաշեց աչքերին և, ամոթից ու անզոր կատաղությունից գունատ, կանանց ծաղրական ժպիտների տակ դիմեց դեպի գուռը:

— Համա չկարծես, թե եղ ա պրծար,—կանչեց նրա յետելից Ցականը.—թող մի ես աղջիկը չլավանա քու դամդեքից...իմ մարդավարութինը դու են վախտը կտեսնաս...

---

Մարթան թեև շուտով լավացավ մաթրախի խարաններից, բայց մի քանի ամսից հետո մեռավ նույն խելազար դրության մեջ: Նրան շուտով հետեւց և ծերունի հայրը:

Իս գրբաց Գրիգորը մինչև որս ել շարունակում է իր արհեստը՝ ուաշվա պես ժպտուն աչքերով և կարսիր այտերով:

---

ՍԱՐՈՒՆ ՈՒԽՏ ԳՆԱՑ



Դուրսար Սաքուլը կամաց բաց արեց դուռը և ներս մտավ  
Նրա կինը, Նատոն, թերը մինչև արմունկները քշտած՝  
պպղած եր հատակի վրա և լվացք եր անում կոծկած թարախում:  
Բուխարու մեջ կասկարայի վրա դրած կաթսայի տակ մի քանի  
բարակ փայտ եր ծխում: Հողի հատակի վրա բավական ցեխ եր  
գոյացել և լվացքի սապնոտ ջուրը տեղ-տեղ գուր եր կապել:  
Մենքակի ողը հագեցած եր խոնավության, սապնաջրի և ծխը՝  
դարշ հոտով: Թախտի վրա դրած որորոցի մեջ քնած եր ծծի յե-  
րեխան:

Կինը նայեց մարդու հիվանդոտ, թախծալի յերեսին, և նը-  
րա սիրտը ճմլվեց: «Ելի լավ չի»— մտածեց նա և վշտահար մը-  
նաց նայելիս մարդու յերեսին:

Սաքուլը դուռը յետ դրեց, գնաց դեպի թախտը, մութաքեն  
առաջ քաշեց և պառկեց:

— Մի բան զցի վրես,—ասաց նա թույլ ձայնով և վոտնե-  
րը կուչ ածեց:

Նատոն սապնոտ ձեռները սրբեց, վեր կացավ, բարձրա-  
ցավ թախտը, ցեխոտ չուստերը թողնելով գետնին, ծալքից հա-  
նեց բավական մեծ ու հաստ մի վերմակ և ծածկեց մարդուն:

Լավ ծածկի, ջանս սրթսրթում ա,—ասաց Սաքուլը, վերմա-  
կը գլխին քաշելով:

Նատոն վերմակի ծայրերը ներս կոխեց կողքերից, վոր բաց  
տեղեր չմնան:

— Ուզո՞ւմ ես, մի լըհեր ել ծածկեմ,—ասաց:

— Ծածկի:

Նատոն բերեց մի ուրիշ վերմակ ել զցեց նրա վրա և նո-  
րից կողքերը տապտպեց: Այժմ Սաքուլը վոտով-գլխով կորած եր  
վերմակների տակ, Նատոն լվացքը մոռացած՝ առժամանակ նը-  
տած մնաց մարդու մոտ: Կարճ, թախծալից լոռւթյունից հետո  
վերմակների ծայրերը յետ քաշեց մարդու յերեսից և շշնջաց.

— Սաքուլ:

Սաքուլն աչքերը բաց արեց և նայեց նրան հարցական  
հալացքով:

- Բա չգնացի՞ր հիվանդանոց:
- Գնացի:
- Ի՞նչ ասացին:
- Տասը շայի լեն ուզում:
- Բա ասում են՝ ով չունի, չեն ուզում:
- Ասացին պոլիցիցը ան տերտերիցը թուղթ բեր, վոր չունես:
- Յետո գնացի՞ր պոլիցեն:
- Սև գրողը տեսնի պոլիցի յերեսը. Նրանց «զավթու» գլուխն ով ունի:
- Դե տերտերի մոտ կը գնայիր:
- Տերտերի հերն ել ընտեղ անիծեմ: Նոր չեր, վոր տեսա մելդանումը փորը ցցած: Տաս շային ինչ ա, ասում ա, ջահել մարդ ես, մի որ վոր բանես, ասում ա, տաս շայի չե, իրեք մանեթ ել կը վեկալնես: Ախր տեր հայր, ասում եմ, ջանս չի գալիս: Լավ, լավ, ասում ա, հանաք եմ անում. կիրակի որը ժամ արի, ասում ա, կը տամ:

— Այ, նրա ջանը դուրս գա,— սրտով բացականչեց Նատոն: — Եղ հալով մինչև կիրակի վոնց ժուլավի տաս: Քելեխ ըլեր, ձեռաց վոնց վագ կտար:

Ու լոեց դադված սրտով: Յեվ յերկար ժամանակ անտառի վշտով նայում եր մարդու մաշված, դեղնած դեմքին, վորի վրա հիվանդությունը մեռելային անզգայություն եր դրոշմել: Յերեք ամքողջ տարի յե, վոր այդ անհասկանալի հիվանդությունը որ որի վրա հալում, մաշում ե Սաքուլին: Ել դեղ չմնաց, վոր փորը չածեց, ել հեքիմ չմնաց, վորին չզիմեց: Որեր ու շաբաթներ խաչերի դռանն անցկացրին, մատաղներ մորթեցին, կարմիր ու սպիտակ հագցրին, բայց և ախնակես վոչի՞նչ, վոչի՞նչ չոգնեց: Ըսդ հակառակը՝ Սաքուլն որ որի վրա վատացավ, հիվանդությունն ավելի խոր բնակալեց: Ակզրներում ելի քիչ ու միշ կարողանում եր բանել, բայց վերջին ժամանակներն ուրագը մի քանի անգամ վրա անելուց հետո շունչը կտրվում եր և սիրտն այնպես արագ բարախում, վոր կարծում եր, թե դուրս պիտի պըծնի բերնից: Այդ յերեք տարվա ընթացքում նրանք քանդվեցին քարը քավեցին. տանն ել վուկեղեն ու արծաթեղեն չմնաց գրավ դրին, ժամանակին չկարողացան թափել—կորցրին, ավելորդ բաները ծախեցին-ծախծինցին, հետո պարտքերի մեջ թաղվեցին և այսոր, յերբ յերթենել հիվանդների քաղաքային բուժարանում կանոնա-

վոր դեղ ու դարման անելու համար «տաս շայի» լեն ուզում, — չկա:

Նատոն մի ծանր թառանչ քաշեց:

— Սաքուլ, — շնջաց նորից:

Սաքուլն աչքերը բաց արեց:

— Սոված չես:

— Չե:

— Ախր վոչ յերեկ, վոչ եսոր զատ չես առել բերանդ, մի բան ելա կեր, վոր ուժ ունենաս: Հեղնարանք մատաղ են բերել, քեզ հըմար եմ պահել, վեր կաց կե: Աղին ել հրես փոնիցը հացերը կբերի:

— Վոր չեմ ուզում, ինչ ուտեմ:

— Հաջաթ չի, զորով կե: Թե չե, բերանդ ըտենց հուալ տըված խո ջիս հալից կընկնես: Վեր կաց:

— Են, — նեղսրտությամբ արտասանեց Սաքուլը և աչքերը նորից փակեց:

Նատոն կրկին հառաշեց և կարճ ժամանակ նստած եր լուռ ու վշտահար մտածմունքի մեջ:

— Հա, Սաքուլ ջան, — հանկարծ ասաց նա, ըստ յերեսույթին, մի բան հիշելով: — Առավոտն ուզում ելի պատմի քեզ, վեր կենամ տեսնեմ գնացել ես: Գիշերս ախր մի զարմանալի յերազ տեսա: Մթամ թե դու ըտենց թախտի վրա պառկած ես, մեկ ել տեսնեմ մի կարմիր ձիավոր թուրը ձեռին նի ընկավ ու վրա պրծավ քեզ: «Ի՞նչ ես պառկել, ասում ա, ընչի՞ չես դալի: Ես սըհաթիս թրովս կտամ, ասում ա, կես կանեմ, թե չես եկել: Ու թուրը դորդ վոր վրա չըերեց: Հա ըտեղ լես զարթեցի: Սիրտս ընենց լքլքոցն եր ընկել, վոր կարծում ելի դորթ եր: Հըմի, Սաքուլ ջան, ասում եմ, ազին վոր գա, բացանողի մոտ դրկենք: Յես ինչ գիտամ, բալի ելի խաչիցն ես ու անմեղ տեղը քեզ պըտի փչացնես դեղերով:

— Տո, Ելի խաչ, — վրա բերեց Սաքուլը դառն հանդիմանությամբ:

— Վույ, ըտենց մի ասի, Սաքուլ ջան, խաչը կը նեղանա, — ասաց Նատոն վախեցած: — Դորթ ա, խաչերի դուռը շատ ենք ման եկել, համա ինչ կա վոր, ես մեկն ել փորձենք: Ախր չես իմանում, Ե, իմ որումս ըսենց ափաշկարա տեսած չեմ. կասես ես նըմուտին ել կանգնած ա աչքիս առաջը ձիուն նստած, թուրը հանած: Հը, Սաքուլ ջան, ազին վոր գա, դրկենք:

Սաքուլն արդեն ծածկել եր աչքերը ձանձրացած:

— Ե՞ն, արեք, ինչ ուզում եք, — ասաց նա խորին անտարբերությամբ:

— Հա, Սաքուլ ջան, զրկենք, զրկենք:

Որորոցի յերեխան լաց յեղավ:

Նատոն վեր կացավ, գնաց չոքեց որորոցի մոտ, նախ ըսկսեց որորել, հետո վոր տեսավ ձայնը չի կտրում, ծիծը բերանը դրեց և, մի ձհոքով որորոցը դրկած, մտախոհության մեջ ընկավ աչքերը մի կետի հառած:

\* \*

Դուռը բացվեց: Կապույտ սուփրի մեջ հացերը շալակին, տնքտնքալով մտավ ազին — Սաքուլի մայրը, կարճահասակ, չորացած պառավ մի կին, վշտահար, խորշոմած բարի դեմքով: Յետեկց մտավ նրա թոռը — չորս-հինգ տարեկան վտիտ մի աղջիկ, ձեռներով յերկու հաց իրար վրա պինդ սեղմած կրծքին: Հացերից մեկը, տակինը, սահել եր ներքեւ և սպառնում եր ընկնել: Նա վազելով հասավ թախտին, բարձրացավ վոտների ծայրերի վրա և հացերն անվնաս դրեց թախտի ծայրին:

— Բհ՛ը, հըլա չեր պառկել, — տխուր քրթմնջաց պառավը, տեսնելով վորդուն պառկած: — Ասա, վոր կարում չես, ել խի՞ ես ծեքծքալի դուս գնում:

Շալակի հացը դրեց թախտի վրա և կամաց դարձավ հարսին.

— Աղջի, քնած ա:

— Գիտում չեմ, նոր զարթուն եր, — պատասխանեց նատոն:

Պառավը մոտեցավ վորդուն և խոնարհվեց նրա վրա:

— Սաքուլ ջան:

— Հ՛ը:

— Քնած չեմ:

— Զե,

— Վժնց հա:

— Ե՞ն, յես իմ վոնց եմ:

— Տաք-տաք հաց եմ բերել, վե կաց կե:

— Ո՞ն, զահլա տարաք, ելի, — ջղախոտությամբ արտասանեց Սաքուլը վերմակների տակից և շուռ յեկավ մլուս կողքին:

Պառավը, խորին վշտով համակված, մի կարճ ժամանակ խոնարհված մնաց վորդու վրա, հետո մի ծանր թառանչ քաշեց,

գնաց բաց արեց կապոցը և սկսեց թեժ-թեժ հացերը փռել թախտի վրա, վոր սառչեն: Այժմ սենյակի մեջ տարածվեց տաք-տաք հացերի ախորժելի հոտը:

— Աղջի, բա հիվանդանոց չի գնացել, — կամաց հարցրեց հարսին, վորը ծիծ տալը վերջացնելով, սկսել եր որորել յարելսալին:

Նատոն պատմեց, վոր հիվանդանոցում առանց չքավորության վկայականի չեն ընդունել ձրի: Պատմեց և այն, վոր տերտերն ասել եր, թե վկայականը կիրակի որը կը տա:

— Այ, տափը զնեմ նրա գլուխը, — վրդովված բացականչեց բարի պառավը: — Բա նա հոգի ունի: Ես հալին վժնց մնամինչև կիրակի, աղջի: ըսոր յերկուշարթի ա ախր: Հը:

— Դե յես ինչ գիտամ, — տիսուր ու հուսահատ պատասխանեց հարսը և որորոցը մի կողմ քաշեց, վորովհետեւ թախտի մի տախտակը խիստ ճրճում եր նրա տակ: — Աղջի, արի մի որորի, ե, լվացքս մնաց, — դարձավ նա աղջկան, վորը թաժա հացից մի կտոր կտրած ախորժակով կծոտում եր:

Փոքրիկ աղջիկը բարձրացավ թախտը, ծալապատիկ նստեց որորոցի մոտ և մի ձեռքով սկսեց որորել յերեխալին, իսկ մյուսով շարունակում եր կծոտել հացը:

Նատոն իջավ թախտից, մերկ վոտներին հագավ չուստերը, բայց լվացքին դիմելուց առաջ նստեց սկիսոր մոտ և փսփսաց նրա ականջին.

— Ազի ջան, արի մի ձեռաց զնա բացանողի մոտ, տենանքինչ կասի են իմ երազի հըմա, առավոտը վոր քեզ պատմեցի: Այ կտեսնես, թե ո. Գևորգը չըլի են ձիավորը:

— Դե յես ինչ գիտամ, վորդի, — վշտահար արտասանեց պառավը: — Ս. Գևորգն ել են եր, վոր զնացինք, մատազն ել են եր, վոր մորթեցինք, ճար չըլավ ու, — մեռնեմ նրա վոտին:

Յեվ պառավը յերկուղածությամբ բռնված, ծանր հառաչեց:

— Զե, ազի ջան, ազի, հոգուդ մեռնեմ, վե կաց հենց հիմիսկեթ զնա, — աղաչեց հարսը: — Այ մի արասի ունեմ, տամ:

Նատոն դերիայի գրպանից շտապով հանեց թաշկինակը, յետ արեց ծայրին կապած մի քսան կոպեկանոց և տվեց սկեսորը: Պառավը, լուռ ու մտախոհ, դրամը կապեց իր բռնոթու, դեղնած թաշկինակի մեջ, գրպանը կոխեց, ծածկեց իր խունացած սև շալը և դուրս զնաց:

\* \* \*

Անցավ մոտ յերեք ժամ։ Նատոն պարզադրել եր լվացքը և փռում եր փողոցում կապած թոկի վրա, վոր վերադարձավ սկեսուրը։

— Վեր կացմվ, աղջի, — հարցրեց պառավը։

— Զե, ընենց լավ քնած ա վոր, — պատասխանեց Նատոն և իր կողմից հարցրեց. — Ընչի՞ եսքան ուշացար։

Պառավը վրայից վերցրեց շալը և նստեց դռան մոտ գետնից ամրացրած նստարանի վրա։

— Ըսկի ճար ու ճամփա կար վոր, — ասաց նա։ — Ինչքան մուշտարի ունի քոռացածը, — տունը զմփում եր։

— Յանի լավ իմացմվ, աղի ջան, — հարցրեց հարսը։

— Ընենց մին-մին յետ ասեց, վոնց վոր մեր տանը նստած ըլեր։

— Ի՞...

— Քու արեւը։

Նատոն արագ նստեց սկեսոր կողքին։

— Ի՞նչ ասեց, — հարցրեց նա չափազանց հետաքրքրված։

— Վոր ասեմ, ասում ա, կորուստ ա — կորուստ չի. վոր ասեմ, ասում ա, ճամփորդ ա — ճամփորդ չի։ Ես սվ-վոր վոր ա, վոչ ըրեխա յա, վոչ ծեր։ Ես ի՞նչ ա, ասում ա, առաջն ընկած, ուրագ ա, թե ի՞նչ — չեմ գիտում, համա ի՞նչ արած, ասում ա, վոր խեղճը ձեռումը դվաթ չունի վեկալնի։

— Ի՞ր, դժբթ, աղի ջան, — բացականչեց Նատոն զարմանքից տարված։

— Ես աստոձը, Ափսուս, ասում ա, ըժում ի՞նչ լավ աղամորդի ա, ե, ես յԵրբ ա, ասում ա, հիվանդացել, վոր ըսենց թել ա կտրվել։

Հրես պարզ ըրեսում ա, ելի, ասում ա. ունեցած-չունեցածը դեղ ու դարմանի ա տվել, համա զատ չի դառել։ Ես մվքեր են, ասում ա, երկուսը պստիկ են, մեկը — մենձ։ Ես մենձը քիրն ա, ասում ա, թե կնիկը, շատ ա դարդ անում։ Հրես մեկն ել կտ, ասում ա, պառավ ա. սա ել ա, ասում ա, շատ տարակուսած։ Դե ես ել դու յես, ելի, ասում ա, ի՞նչ ես շատ զանլա տանում։

— Վույ դժբթ, աղի ջան, — բացականչեց Նատոն, վորի աչքերը վառվում ելին ծայրահեղ զարմանքով և հիասքանչումով։

— Դորթս վորն ա, աղջի՛: Ասում ա Ելի, ընենց մին յետ ասեց քոռացածը, վոնց վոր մեր տանը նստած ըլի:

— Բժում:

— Բժում... Ես ի՞նչ ա, ասում ա, ձիավոր ա, թե թևավոր, համա հողեղեն չի: Հրես-հրես ասում ա, պանկներից կրակ աթափ-վում, կասես թոնիր ըլի: Դե խաչ ա, Ելի, ասում ա. յես խո իմաստուն չիմ, ասում ա, վոր ամեն բան դրուստ իմանամ: Ում համբուրող ա, ասում ա, ա. Սարգսի, թե ս. Գևորգի, ուխտ պըտի զնա: Դե ուրիշ ի՞նչ ասեմ, ասում ա, ես ա, ելի:

— Վույ մեռնեմ ս. Սարգսի յել, ս Գևորգի յել ողորմութենին, արտասանեց Նատոն և, աչքերը յերկինք զցած, ջերմեռանդությամբ խաչակնքեց յերեսը:—Տեսար, երազս զորթ դուս եկավ: Քոռանամ յես, անցկացած տարին զոխտուրների յետեից ընկանք, չզնացինք Թելեթ ու հրմի տեսնում ես...

— Հա, ես ել՝ ասեց,—ընդհատեց նրան պառավը, մտարերելով բացանողի պատվերը.—իբեք որ ու գիշեր, ասում ա, պըտի պառկած մնա խաչի տակը. ոճորքը յերկինքը պտի ըլի, ասում ա, կողենքը—գետինքը, չունքի, ասում ա, հրեղեն-թևավոր ձիավորը թռչում ա յերկնքի ու զետնքի մեջ տեղը:

Նատոն նորից ու ավելի ջերմեռանդությամբ խաչակնքեց յերեսը և ասաց վճռական կերպով.

— Յես ես ա մում եմ յետ զնում Թելեթի ս. Գևորգի հըմար, մեռնեմ նրա սուրբ զորութենին:

Նա վեր կացավ, շտապով փոեց լվացքի վերջին կտորները և ներս զնաց սենյակը: Սկեսուրը հետեւց նրան:

Նատոն չուստերը թողեց ցեխոտ հատակին, բարձրացավ թախտը, պատի մեջ գտնված պահարանից հանեց յերկու դեղին մեղքամոմ, զգուշորեն, վորպեսզի թախտի տախտակները չճրճռան գոտի տակ, մոտեցավ քնած ամուսնուն, մոմերը պտույտ տվեց նրա զլխի վերելը, հետո նույն զգուշ քայլերով իջավ, հազավ չուստերը և մոմերը տարավ դրեց բուխարու զլխին, ուր յերեսում եյին ամեն շաբաթ գիշեր վառվող մոմերի սեացած հետքերը:

\* \* \*

Հիվանդը տնքաց և շարժվեց վերմակների տակ:

Պառավը մոտեցավ նրան:

— Սաքուլ:

Մեր թաղը—4

— Հը:  
— Զարթուն Ես:  
— Հա:  
— Գնացի ախր բացանողի մոտ:

Սաքուլը վերմակների ծայրերը յետ քաշեց յերեսից և հետաքրքրությամբ նայեց մոր աչքերին:

— Հա-ա: Ի՞նչ ասեց:

Նրա կարմրատակած թաց յերեսից և տենդոտ, պլպլող աչքերից յերեռում եր, վոր քնի մեջ կազդուրիչ քրտինք եր յեկել:

— Վույ, եղ ինչ լավ ա ըլել, Սաքուլ ջան, հրեդ քրտինք և եկել, — մոտ վազելով բացականչեց նատոն ուրախացած և, իսկույն իր գլխի սպիտակ աղլուխն առնելով, սրբեց ամուսնու յերեսի քրտինքը: — Բաց չըլես, Սաքուլ ջան, բաց չըլես, — ավելացրեց նա և սկսեց տապտպել վերմակների ծայրերը նրա շուրջը: — Ընենց լավ իմացել ա, Սաքուլ ջան, վոր արմացք: Ազի ջան, մի պատմի, Ե:

Պառավը ծալապատիկ նստեց վորդու մոտ և սկսեց ավելի մանրամասնորեն պատմել բացանողի գուշակությունները:

Նատոն նստել եր մարդու վոտների մոտ և շարունակ նույում եր նրա գեմքին՝ կարծես ստուգելու համար, թե բացանողի ճիշտ գուշակությունն արդյոք նրան ևս նույն զարմանքն ու հիացքն ե պատճառում, ինչ վոր իրեն:

Սաքուլը լսում եր լուս և, ըստ յերեռութին, անտարբերմիայն չորացած շրթունքներն եր լպսում:

Փոքրիկ աղջիկը մի վոտով որորում եր որորոցը և տիկին եր խաղում: Այդ տիկինն ինքն եր շինել. մի տափակ կոճակի վրա սպիտակ փալաս եր փաթաթել կոճակը կարի սև թելով կապկալել եր մի փոքրիկ փայտի ծայրին, փայտին հազցրել եր գերիալի պես իր ձեռքով կարած մի փոքրիկ տոպլրակ, և տիկինը կաղմ ու պատրաստ խաղում եր նրա ձեռքին: Նրա տիկինախաղն ել պարզ եր, ինչպես իր տիկինը. շրթունքներով ճգճղացնում եր պարերգի պես մի բան և ձեռքերով պար եր ածում տիկինը թախտի վրա:

— Հըմի ի՞նչ ես ասում, վորդի ջան, զնում ե՞նք թելեթ, թե չե, — հարցրեց պառավը պատմությունը վերջացնելուց հետո:

— Ընչով գնանք, Ե, — ասաց Սաքուլը: — Տաս շայի չունեմ, վոր հիվանդանոցումը տամ, թելեթ վո՞նց գնանք: Ելի քիչ-քիչ մի երկու թուժանը հերիք չի:

— Ի՞ր, Սաքուլ ջան, ըտենց մի ասի, խաչը կը նեղանաւ: Երկու թուման ինչ ա, վոր չես կարա մեկից ճարի: Կը գնաս ասուծու ողորմութենով կը լավանաս, կը զաս կը բանես, պարտքդ երկու շաբթումը կը տաս:

Սաքուլը յերկար ժամանակ չեր համաձայնում նոր պարտք անելու, քանի վոր արդեն բավական հին պարտքեր ուներ վըճարելու: Բացի դրանից, նրա վիճակը տեսնելով, ով եր գժվել պարտք տալու նրան:

— Տունդ գրավ դի, գլուխը քարը, տունը ջանիցդ խո լավ չի—ասաց նատոն:

— Դու ել բան ասացիր,—նկատեց Սաքուլը ջղալնացած:— Բալքի չլսվացա, մեռա, ընչով եք թափելու: Հաց շատ կճարեք, այ, ուտելու, վոր տան քրեհ ել քաշեք: Ես մի քննօոտ տունն ա ելի՛, թողեք ես ել ա մնա ձեզ, վոր քուչումը չմնաք:

— Ե՞հ, ընչեր ես ասում, Սաքուլ ջան, վորդի ջան,—բացականչեց պառավը մեղմ կշտամբանքով:—Եդ ինչ ասելու բաներ են, վոր ասում ես: Մի քիչ ել մեզ խեղճ արի, ե, սիթտներս կրակ ես զցում, փթոթում:

Յեկ պառավի բարի, վշտահար աչքերը թաց յեղան:

— Դա ըսկի աստված ունի՞ վոր,—բեկրեկ ձայնով արտասանեց նատոն և գլխի աղլուխի ծայրը սեղմեց աչքերին:

Մի բոպե սենյակում ճնշող լոռություն տիրեց: Լոել հը նույնիսկ փոքրիկ աղջիկը և, տիկինը գոգին դրած, յերեխայական հետաքրքրությամբ նայում եր տատին, մորը, հորը:

— Լավ, ես մեկն ել թող ձեր ասածն ըլի,—վերջապես համաձայնեց Սաքուլը, վոր ինքն ես զգացել եր իր վերջին խոսքերի ծանրությունը:

\* \* \*

Յերեկոյան դեմ նա գնաց իրեն լավ ծանոթ մի կապալառուի մոտ, վորն ամբողջ քաղաքի հյուսների, վորմնադիրների և մշակների շրջանում հայտնի յեր Սերգեյ Ստեփանիչ, կամ պարզապես աղա Սերգո անունով:

Սերգեյ Ստեփանիչը,—խոշոր արտաքինով, խոշոր բեխերով մոտ հիսուն տարեկան մի տղամարդ, և ատլասի արխալուղով, վորի վրա հուրճրատին եր տալիս ժամացույցի վոսկի հաստ շըդթան, —նստած եր մի նոր հսկայական շինության բակում իրար վրա դարսած հաստ տախտակների վրա, արխալուղի վրայից հագած ամառվա վերաբերուի փեշերը գոգին հավաքած, և տեր-վո-

դորմյան» ձեռքին՝ դիտում եր որվա վերջին աշխատանքները։ Տասնյակ վարպետներ և մշակներ դժվարում ելին կիսաշեն պատերի գլխին, տախտակամածների վրա, բակի մեջ, ցեմենտի տակառների, ավազի, հողի, ցեխի, դաշի ու կրի կույտերի և բուրգեր կազմած աղյուսների շուրջը։ Մի շատ բարձր պատի դլիմին վորմաղիրներից մեկը—մի պարոիկ—փափախը գլխին, մայր մտնող արեի կարմիր ճաճանչներով վողողվ ոծ, համ շարում եր պատը, համ կլլլացնում մի բայաթի շատ ախորժալուր տենորով։

— Աւստա Սաքուլ, — բացականչեց Սերգեյ Ստեփանիչը։ — Տո, եղ ի՞նչ ա հալդ. ելի հիվանդ ե՞ս։

— Հա, աղա ջան։

— Տնաշեն, բա վո՞նց չւավացար մինչև հըմի։ Բոկի դեղ-մեղ անում ե՞ս։

— Բնչոր ունեյի, դիվ դեղի ու համի տվի ու, յես ի՞նչ զիտամ։ Ես անտեր ցավը մտել ա ջանս, դուս չի դալիս։

— Բա ըսկի չես բանում։

— Թե վոր լավ եմ ըլում, ընչի՞ չե, մին-մին բանում եմ, համա դե մին-մին բանելով ի՞նչ կըլի։ Մի տուն ողլուշաղ պահելը դժար ա, աղա։

— Այ, թե ուզում ես, բան շատ ունեմ, ըստեղ ել, ուրիշ տեղ ել, արի բանի։

— Ուզում եմ, վո՞նց չեմ ուզում, աղա. այ, սրանց վոր տեսնում եմ (Սաքուլը ձեռքով ցույց տվավ շուրջը), ջանս կրակ աընկնում, համա վոր ես անտեր ձեռներումս հարուքաթ չկա։

— Բա ընչի՞ յես յեկել։

— Եկել եմ, վոր... կմկմաց Սաքուլն աչքերը վայր թողնելով և չվերջացրեց։

— Վոր ելի փող ուզես, չե։

— Հա, աղա ջան, — արտասանեց Սաքուլը խեղճ-խեղճ նաւելով նրան։

— Բա են առաջվա տասը մանեթը։

— Դե են առաջվա տասը մանեթն ել... դե, ի հարկե, — նորից կմկմաց Սաքուլը և ավելացրեց — թե վոր...

— Ի՞նչ թե վոր։

— Թե վոր... յես ի՞նչ զիտամ, գրավ կուզես...

— Ի՞նչ զրավ։

— Դե զիտաս ելի, աղա ջան, մի տուն ունեմ...

— Տուն ել ասում ա: — Սերգեյ Ստեփանիչն անկեղծ դվար-

ձությամբ ծիծաղեց, կայտառ պատանու պես վեր թռավ տեղից և ձեռքով թափ տվավ քամակը:—Տո, տանդ վոր մի քացի տամ, շուռ կզա: Բան ունես, բան ասա:

— Դե, ի՞նչ ասեմ, աղա, եդ ա, ինչոր ունեմ: Ուզում ես՝ առ, չես ուզում՝ ասա գնա Քուռն ընկի: Ուրիշ ճար չունեմ աղա: Սերգեյ Ստեփանիչը նորից ծիծաղեց:

— Վայ, խեղճ իմ Սաքուլ, ի՞նչ լավ մարդ ես—ասաց բարեսրտությամբ խփելով նրա ուսին:—Դու ինձ ես ասա, Ելի ինչ-քան ես ուզում:

— Ելի վոր մի քսան մանեթ տաս, աղա...

— Քսան մանեթ, տո, քսան մանեթն ի՞նչ ա. քսան մանեթին մեկ փչեցի—հանգավ—շարունակեց ծիծաղելով Սերգեյ Ստեփանիչը:

— Դե, հլա քսան մանեթն ել հերիք ա, աղա—նրա խոսքերից սրտապնդված ասաց Սաքուլը, —ու թե վոր վերջը...

Սերգեյ Ստեփանիչը հանկարծ լուրջ դեմք ընդունեց:

— Ե՛, եդ չըլավ, եդ չըլավ, ուստա Սաքուլ,—շտապեց ընդհատել նրան:—Քսան մանեթն ել վոր տալիս եմ, Սաքուլ ջան, հոգուս խաթեր եմ տալիս, չունքի լավ մարդ ես, լավ ուստա յես, ինձ հըմար շատ ես բանել, համ ել խմող չես:

— Աստված քեզ յերկար կցանք տա, աղա ջան: Յես ել քու հացը շատ եմ կերել, շնորհակալ եմ. դե ի՞նչ ասեմ, աղա ջան, թե վոր լավացա, չմեռա, են յես զիտամ ելի:

— Դե, հըմի մի քիչ սպասի, հրես շաբաշ կանեն, կը գնանք ինձ մոտ մի վեքսիլ կը գրենք յառառւն մանեթի, —են առաջվա տասը մանեթն ել հետն եմ ասում, —ու վերջո, յերբ վոր կը լավանաս, կամ փողը կը տաս, կամ փողի տեղ կը բանես: Հը, լավ չեմ ասում, —հարցրեց Սերգեյ Ստեփանիչը, տեսնելով, վոր Սաքուլը, վեքսիլի անունը լսելով մի քիչ մտատանջության մեջ ընկավ:

— Դե վոնցոր ուզում ես, աղա ջան—ասաց Սաքուլն ականջի յետել քորելով:

— Զե, դժւ վոնց ես ուզում: Վեքսիլ նրա հըմար եմ ասում, վոր տան գրավը դալմաղալ բան ա—ել նատարիուս, ել կուպչի լգն պուլինի, —որեր կը քաշի, համ ել անմեղ տեղը ծախսեր ը կեա:

— Լավ, թող վեքսիլ ըլի, —համաձայնեց Սաքուլը:

Հետեւալ որն ևեթ Նատոն մի քանի արշին սպիտակ միտկու գնեց, շաղիկ կարեց և հազցրեց Սաքուլին արխալուղի վրայից, իսկ մի քանի որից հետո «թելեժկեն» բարձած, իրենք ել յերեխաներով վրեն նստած՝ առավոտյան վաղ բռնեցին թելեթի ճանապարհը: «Թելեժկի» յետեր վոտներից պինդ կապկապած՝ պառկած եր մատաղացու վոչխարը և զլուխը դրած «թելեժկի» ճրճուացող տախտակներին՝ իր վոչխարամիտ հայացքով նայում եր յետեսից յերկար ու մեկ ձգվող արեակեզ փոշոտ խճուղուն:

Յերկար, քարքարոտ ճանապարհը, «թելեժկի» տատանումը, տոթ յեղանակը բոլորովին ուժասպառ արին Սաքուլին, այնպես վոր յերբ, ճաշի դեմ, թելեթ հասան, մոր և կնոջ ոգնությամբ հազիվ կարողացավ իջնել «թելեժկից» և վոտները քաշ տալով, զնաց նստեց հսկայական ընկուղենու տակ յերկայն նստարանի ծալրին:

Նույն ընկուղենու ընդարձակ հովանու տակ քառակուսի տախտակամածի վրա հավաքված եյին զուգված-զարդարված մի խումբ տիկիններ, որիորդներ և դպրոցական տղաններ ու աղջիկներ թիֆլիսեցի հարուստ բազազների, բախկալների ու գինեվաճառների ընտանիքներից, վորոնք ծառաներով ու աղախիններով յեկել բռնել ելին վանքի ամենալավ սենյակները վոչ այնքան իրերեւ ուխտավոր, վորքան իրրեւ ամառող: Նույն տեղը առանձնակի նստած ելին իրար կողքի գյուղի յերկու քահանաները, ամեն մեկի ձեռքին մի հովանոց, և աչքերը քաղցած գալլերի պես տնկել եյին դեպի ուխտավորների բնակարանների յերկայն պատշգամբը, վորտեղ աղախինները և ծառանները սուրճի պատրաստություններ ելին տեսնում սպիտակ սփոցներով ծածկված սեղանների վրա:

Վանահայրը—խոզ կտրած մի վարդապետ կապոցով և թասակը զլխին—իր բնակարանի պատշգամբում, զանգակատան տակ, նարդի յեր խաղում ուխտավոր ընտանիքներից մեկին պատկանող մի յերիտասարդի հետ:

— Դուք գնացեք համբուրեցեք, մինչև յես տեղաշորը կը զցեմ ու բարդն ել տուն կածեմ, — ասաց Նատոն սկիսորն ու ամուսնուն:

Պառավել առավ Սաքուլի թեր, մտան յեկեղեցի, մոմ վառեցին, համբուրեցին, ծունը դրեցին, աղոթք արին, դարձլալ համբուրեցին, «պահպանիչ» ասել տվին քահանաներից մեկին, վորը շառապել եր ներս մտնել յեկեղեցի նրանց յետեսից: Այդ բոլորը

տեսց այնքան յերկար, վոր յերբ դուրս յեկան, Նատոն, բացանողի պատվերի համաձայն, արդեն անկողին եր պատրաստել յեկեղեցու պատի տակ, յետեխ կողմը և հետները բերած իրեղենները թափել եյին դատարկ սենյակներից մեկում։ Ծծի յերեխան լաց եր լինում փոքրիկ աղջկա գողին, վորը որորելով և «ոը-ոը» անելով ապարդյուն աշխատում եր լոեցնել նրան։

Յեկեղեցուց դուրս գալուն պես Սաքուլը պառկեց անկողնում։ Մայրը թողեց նրան և զնաց հարսին ոգնելու, վոր սենյակը կարգի դնեն։ Սենյակը խոնավ, հոտած և խիստ աղտոտ եր։

Այդ և հետեւալ որը գիշեր-ցերեկ Սաքուլը պառկած եր անկողնում յեկեղեցու պատի տակ։ Գիշերները նրա մոտ նստած հսկում եր մայրը համարյա անքուն։ Բարերադդարար այդ յերկու որը յեղանակը լավ եր, և Սաքուլը բավական լավ եր զգում իրեն։ Յերբորդ որը առավոտյան մատաղը մորթեցին։ Ամենալավ կտորները և մորթին տարան վանահայրը, տերտերները, տիրացուն, և ժամկոչը, մնացածից շատը բաժանեցին հարեան ուխտավորներին, իսկ մսաջուրը տարան գլուղի բոկոտն յերեխաները և կանայք, վոր հավաքվել եյին հազար ու մի տեսակ ամաններ ձեռքներին։

Որը տողի եր, շունչ քաշել չեր լինում։ Յերեկոյան դեմ յերկինքը թխպեց, արագորեն սեացավ, հրեղեն կայծակներն սկսեցին պատոել ամպելի կռւրծքը նախ հեռավոր ու խուլ, հետո ավելի ու ավելի մոտեցող և ուժգին վորոտումներով.ողն սկսեց շարժվել և ցրտել, հետո հանկարծ այնպիսի մի ուժգին վոթորիկ բարձրացավ շրիսկոցով ու թրիսկոցով, վոր յերկինք ու յերկիր խառնվեցին իրար փոշով ու աղբով։ Մի ինչվոր ցուրտ բան, կլորիկ ու պստիկ, հրացանի կոտորակի պես թրիսկաց Սաքուլի յերեսին, վոր վերմակի տակ պառկած դիտում եր մոլեգնած բնության այդ արհավիրքը։ Մի կոտորակին հետեց յերկրորդը, յերբորդը... ավելի ու ավելի հաճախ ու խոշոր։ Սաքուլը շտապեց շուռ գալ կողքի և զլուխը ծածկեց վերմակի տակ, նույն ըսպելին զգաց, վոր կարկտախառն անձրել թակում և վերմակը։ Նատոն ձեռաց վազացրեց մի մեծ կապերտ և ձգեց նրա վրա։ Պառավել ել մի յերկու տոպրակ բերեց և ձգեց կապերտի վրա։

Սաքուլը կուչ եր յեկել այդ ծանության տակ, ճնշվելով ողի պակասությունից, և ականջ եր դնում, թե ինչպես կարկտախառն հորդառատ անձրել շփշփոցով թակում եր տոպրակներն ու կապերտը, թե ինչպես յերկինքը դորգոսում եր ահեղագոչ վորո-

տումներով համարյա թե անընդհատ, թե ինչպես հառաջում ու շառաջում ելին ընկուզենին և մյուս ծառերը փոթորկի ուժգին թափահարումներից։ Նա զգաց, թե ինչպես անձրեսի ջրից գոյացած մի առվակ ծլլալեն ներս խուժեց բարձի վրայով, անախորժ սառնությամբ սողաց ականջի մոտով և սկսեց գուբ կապել տակը, ծծվելով ներքնակի մեջ։ Առվակներ եյին, վոր վազում ելին անկողնի կողքերից։

Կինն ու մայրը, հորահոս անձրեսի տակ թրջվելով, շփոթված, չելին իմանում ինչ անեն։ Բացանողը պատվիրել եր, վոր հիվանդը յերեք որ ու զիշեր պետք ե պառկած մնա խաչի տակ բացոթյա, մինչդեռ յերեք որ ու զիշերը զեռ չեր լրացել, իսկ հիվանդին այդ հորդահոս անձրեսի տակ թողնել անկարելի յեր։

— Աղջի, վեր առնենք տուն տանենք, — ասում եր պառավը։

- Բա վոր իրեք որը չի թամամել, — առարկում եր նատոն։
- Աղջի, բա ես անձրել չես տեսնում։
- Դե ասում եմ վորտեղ վոր ա՝ կը կտրի։
- Վրդիան կը կտրի, աղջի, տես, ե, վոնց ա հուրհրատում։

Հիրավի, անձրել կարծես միտք չուներ կտրվելու։ Այժմ կարկուտն ել անձրեսի յեր փոխվել և ջրերը թափում եյին այնքան հորդ ու առատ՝ վոր նրանց թանձրության մեջ յերկնքի փայլատակումները հազիվ ելին լուսավորում մթագնած յերկիրը։ Յերկնքի համարյա անընդհատ վորոտի ձայները, անձրեսի շըփշփոցը, մոտակա ձորակի միջով վազող ջրերի քչքչոցը և ծառերի շառաջը միախառնվելով՝ այնպիսի մի ժխոր ելին բարձրացրել, վոր իրար մոտ կանգնած հարս ու սկսուր հազիվ եյին լսում իրար ձայնը։

Սաքուլը, անկողնի մեջ կուչ յեկած, զգում եր, թե ինչպես այս ու այն կողմից ներս ծորացող առվակները շատանում են և վերմակն անձրեսի ջրերից թրջված տոպրակներից ու կարպետից հետզհետե խոնավանալով ճնշում ե իր վտիտ մարմինը։ Ոդ չկար, վոր շնչեր և շնչածն ել բաղանիքի տաք գոլորշու պես մի բան եր, վորից քիչ եր մնում խեղղվեր։ Տեսնելով, վոր այլ ևս չի կարողանում դիմանալ, վրայի ծանրությունը մի կողմ շըպրտեց և նստեց անկողնում։ Այժմ անձրեն սկսեց թակել ուղղակի նրա գլուխն ու մեջքը։

— Տո, բա դուք ասաված չունեք. ինձ խո սպանեցիք ըստեղ, — կանչեց նա:

Կինն ու մայրը շտապեցին նրան վերկացնել և հորդահռո  
անձրեկ տակ մի կերպ տեղափոխեցին սենյակ:

\* \*

Յերեք որվա ուխտն արդեն կատարված եր, թեև Սաքուլը  
յերբորդ որվա գիշերը չեր անցկացրել բաց յերկնքի տակ: Չոր-  
րորդ որը «թելեժկեն» քաղաքից յեկավ, վոր մեր ուխտավորնե-  
րին տուն տանի: Սաքուլին պառկեցին «թելեժկի» մեջ ուժից  
բոլորովին բնկած: Ճանապարհին մի գլուխ բղավում եր կողերի  
մե զգացած անտանելի ծակոցներից. դադարում եր բղավելուց  
այն ժամանակ միայն, յերբ հազը բռնում եր: Հազում եր չոր ու  
թուլ, վորի ժամանակ ձայնը կարծիս հորից եր դուրս գալիս:  
Յերբեմն պարզապես շնչասպառ եր լինում: Մայրն ու կինը նըս-  
տած եյին կողքին և հետները վերցրած գինու շշից յերեսին ջուր  
եյին ցրցամ տալիս, վոր շունչը յետ բերի:

\* \*

Թախտի վրա, անկողնի մեջ պառկած և Սաքուլը, գլուխը  
կապած սիպտա փաթաթանով, վորի տակից դուրս են պրծել  
յերկարացած մազերը և, քրտինքից ու կեղտից թաղիք դարձած,  
կպել վոսկրացած քունքերին: Դեմքին մնացել և միայն քիթը  
խոշոր ու սուր, և աչքերն, ահազին ու պսպղուն ապակու պես,  
նայում են բաց դոնով դեպի դուրս: Այնտեղ ամառվա միջորեյի  
արել հրաշեկ ճառագայթներով կիզում և դիմացի տան պատը և  
այն աստիճան շողշողում, վոր ուղիղ նայելիս մարդու աչքերը  
ցավում են: Ռւղղակի դուռն առջե, ստվերի մեջ նստած և փողո-  
ցի պառավ շունը և, կարմիր յեղուն հանած, հեթեթում և տա-  
պից: Սաքուլը բարձն ի վեր կիսանստած, անթարթ նայում և  
դուրս բթացած հոյացքով և ծանը շունչ քաշում: Յերկու որ և,  
վոր կողերի մեջ այլևս ծածկոցներ չե զգում. հազն ևս քչացել և.  
բայց այնտեղ, ներսը, ինչ-կոր տարորինակ դատարկություն և  
զգում. կարծես թոքը, սիրտը և ամբողջ փորոտիքը հանել դուրս  
են թափել:

Անհուն վիշտը ցամաքած գեմքին՝ մայրը նստած և մեռնող  
վորգու կողքին և թաշկինակով քշում և ճանճերը նրա դեմքից:  
Նատոն որորոցի մոտ չոքած՝ ծիծ և տալիս յերեխային և հուսա-  
հատ հայացքով անթարթ նայում սենյակի պուճախին, վորտեղ

աններկ գաջն առատորեն ծծել ե գետնի խոնավությունը և տեղտեղ թափվել։ Նրա հայացքը ցույց ե տալիս, վոր նա առաջուց արդեն հաշտվել ե անխուսափելի թշվառության հետ։ Թախտի վրա լուսամուտի առջև չոքած ե փոքրիկ աղջիկը և աշխատում ե բըռնել ապակիների վրա պղղացող ճանձերը։

Մանր ու չարագուշակ լոռություն ե տիրում սենյակում և դուրսը։ Այդ լոռությունը խանգարում է խառ թութ ծախող մի կինտո, վորը թարախը զլխին և կշեռքն ուսին՝ անցնում ե դըռան մոտով և իր առողջ թոքերի ամքողջ թափով աղաղակում։ «Թութա, թութա, ախառի թութա»։ Նա մի բոպե կանգ ե առնում բաց դռան առջև, նայում ե ներս, իր թափ ձայնով հարցնում՝ «Խառը թութ չեք ուզնում» և, տեսնելով վոր պատասխան չի ստանում, շարունակում ե ճանապարհը կշեռքը շրխկ-շրխկացնելով և փողոցն աղմկելով իր հուժկու կանչով։ Ու կյանքի առորյան հիշեցնող այդ կանչը, մի բոպե վանելով մահվան ուրիշականը, լսվում է մի առժամանակ ևս, մինչև վոր հետզհետե խլանալով լոռում ե վերջապես, և մահվան ուրիշականը նորից գալիս ե իր փսփսուկը տարածելու մեռնողի սենյակում առաջվանից ավելի ծանր ու չարագուշակ լոռության մեջ։

Հիվանդն այժմ պառկած ե աչքերը փակ, և յեթե ծանր հեքը չլինի, տեսնողը կկարծի, թե մեռած ե։ Պառավ մայրն անհանգստացած աչքը չի հեռացնում նրա դեմքից։ Նրա զլուխը սաստիկ շարժվում է. ըստ յերեվույթին, ուզում ե ինչ-վոր ասել, բայց չի համարձակվում։ Վերջապես դադարում ե ճանձերը քշելուց և, խոնարհվելով վորդու դեմքի վրա, շշնջում ե անհամարձակորեն։

— Սաքուլ ջան...

Սաքուլը կամաց բաց ե անում աչքերը և նայում նրան։

— Ի՞նչ կըլի, վոր տերտերին իմաց տանք։

— Տո, ելի տերտեր,— բացականչեց Սաքուլը զայրուկիթի այնպիսի հանկարծական բռնկումով, վոր մայրն ել, կինն ել ապշեցին, թե վորտեղից նա, վորի ձայնը մինչև այժմ հազիվ եր լըսվում, հանկարծ այդպիսի մի ույժ հավաքեց իր մեջ։ — Տո, ձեր տերտերն ու խաչը չե՞ր վոր ինձ եստեղը հասցըրին... ել ի՞նչ եք ուզում ինձանից... թողեք, ելի, հանգիստ հոգիս տամ...

Նրա ձայնը հանկարծ կտրվեց, աչքերը լցվեցին արտասուրով, և նա այլևս վոչինչ չկարողացավ արտասանել։

— Դե յես ինչ գիտամ, վորդի ջան, ասում եմ բալի... — ար-

տասանեց մայրը կոկծալից և առանց խոսքը վերջացնելու լոեց,  
վորպեսզի այլես չզրգուի վորդուն:

Ու առ ժամանակ խանգարված չարագուշակ ծանր լուս-  
թյունը գալիս և նորից թագավորելու մեռնողի սենյակում:

Սաքուլը կամաց-կամաց հանգստանում և և մտառու հայաց-  
քը տնկում դիմացի տան արևակեղ պատին: Յերկար լոռւթյու-  
նից հետո նրա շրթունքները շարժվում են. ինչ-վոր բան և ա-  
սում, բայց դժվար և լինում վորոշել արտասանածը:

— Ի՞նչ, Սաքուլ ջան, — հարցնում ե մայրը, խոնարհվելով  
նրա դեմքին:

Նատոն, վոր դեռ ևս շարունակում է ծիծ տալ լերեխային,  
դեմքը դարձնում է զեղի նա և ականջը սրում:

— Ասում եմ փոթրադժիկ Սերգոն, — շշնջում ե մեռնողը, ա-  
մեն մի խոռքի վրա հաղիվ շունչը յետ բերելով, — են, վոր իրեք  
թուման եմ պարտ... փիս մարդ չի... կըլի, վոր չուզի... Համա-  
թե ուզի... յաթաղս տվեք... թե հերիք չանի... քամարս ծախե-  
ցեք... հոգիս չծանրացնեք...

Խեղճ պառավ մայրը միանգամայն կարկամում ե և չի խու-  
նում ինչ ասի:

Նատոն զգում է, թե ինչպես ամուր մի բան բռնում է բու-  
կը: Գլուխը դնում է որորոցի վրա, դեմքը ծածկում կոնկրի մեջ  
և ամեն կերպ աշխատում է զսպել խեղդող հեծկլտանքը:

Իսկ փորքիկ աղջիկը շարունակում է մատները շարժել լու-  
սամուտի ապակիների վրա, վոր բռնի ճանճերը և, նմանցնելով  
կինտոյի կանչին, մեքենայարար կանչում ե կամացուկ՝ «Թու-  
թա, թութա, ախառի թութա»:



ՀՈԳՈՒՆ ՎՐԱ ՀԱՍՎ



Չմեռնամուտ որերից մեկն եր: Մութը դեռ բոլորովին չեր կոխել յերկիրը: Յերկինքը պղտոր եր գարնան ջրի պես: Կատաղի քամին զժժալով ներս եր պրծնում փողոցի մի բերանից, թըոցնում եր առաջին պատահած մարդու գդակը, լիզում եր գետնից աղբն ու փոշին, ծեծում եր դռներն ու պատուհանները, բարձրացնում պատովն եր տալիս մանրավաճառի խանութի ճակատից կախված ցուցանակն ու կորչում փողոցի մյուս բերանից: Լապտերավառը, սանդուղն ուսին, փոքրիկ լապտերը ձեռքին, վազում եր լապտերները վառելու: Փողոցի անկյունում արդեն վառված լապտերը, հողմածեծ ծռել եր գլուխը և նայում եր շուրջը կեղտոտ ապակիների միջից մարդու ցավագար ճպոստ աչքերի պես: Ամայի փողոցում մի փոքրիկ շուն կուչ եր յիկել մի փակ դուան առջև, սրթսրթում եր ամբողջ մարմնով և կաղկանձում:

Նաղշքար Դավիթը գնում եր տուն, մատների ծայրերը կապույտ արխալուղի զբանները կոխած: Քամին ֆոփոացնում եր նրա մաշված չուխայի փեշերը և կարմիր աղլուխը, վոր մի ծայրով պնդացրած եր կողքին կաշու գոտկից: Ամրող հագուստը, սկսած գոտկից մինչև վոտնամանները, ծածկված եր ամեն գունի ներկերի բծերով, վորոնց մեջ առանձնապես աչքի ելին ընկնում սպիտակները: Նա անցնում եր անհույս ու աննպատակ մարդու անորոշ քայլերով և քթի տակ մրթմրթում եր տրտունջի և հայնուանքի պես մի բան: Ցուրտ քամին ծեծում եր նրա մազակալ յերեսը, փոշով ծածկում միրուքը, բեխերն ու թալ հոնքերը, ստիպում ծածկել աչքերը, սպառնում խլել գդակը, վոր նա քաշել եր մինչև ականջները, և յերբեմն-յերբեմն գրոհ տալիս նրա վրա այնքան ուժգին, վոր նա ակամա կանգ եր առնում և ամրող մարմնով առաջ թեքվում, վոր յետ-յետ չգնա: Բայց նա վոչինչ չեր զգում: զգում եր միայն մի բան—սիրուհու չափ տենչալի և մահվան չափ անդիմաղբելի: զգում եր ծարավ, վոգելից խմիչքի անհուն ծարավ, վորից լեզուն ցամաքել եր բերանում, վորկորը քերվում եր, աղիքները զալարվում եյին փորում և ամբողջ մարմինը կարծես զրկվել եր սովորական ջերմությունից:

Ամբողջ յերեք շարաթի եր, վոր պարապ եր, գործ չկար, չեր ճարպում: Զմեռնամուտ եր, տուն շինողը շինել պրծել եր, վերանորոգողը՝ վերանորոգել պրծել. այլևս վոչ վոք նոր տուն չեր շինում, վոչ վոք հատակները, պատշպամբները, տանիքները ներկել չեր տալիս, պատերին նոր պատառներ կպցնել չեր տալիս: Նաղաքարների բանի որերը անցել գնացել եյին:

Ամառվա և աշնան աշխատանքի փողն որ գալիս եր, որ գընում: Այժմ—վոչ մի սև գրոշ գրպանում, վոր աչքը կոխեր: Իսկ այսոր առաջին անգամն եր, վոր բերանը մի կաթիլ անգամ չեր առել վոչ արադից, վոչ զինուց: Մի ամբողջ որ... Խենթանալու բան եր այդ, և նա անկեղծ կերպով զարմանում եր, վոր մինչև այժմ դեռ խելքը չեր կորցրել կամ չեր մեռել: Այն ինչ մինչև այսոր, մինչև այս տաժանելի մի որը, ամբողջ ամսվա ընթացքում և հետո, յերբ գրպանում միշտ փող կար, պատահել եր մի որ, գեթ մի հատիկ որ, վոր բանի ժամանակ ձեռաց չվազեր մոտակա «պադվալը» բերանը մի քիչ թաց անելու կամ բանից հետո ամբողջ ժամերով չնստեր զինետանը իր ընկերների հետ և լավ «թրջված» տուն չզառնար կես-զիշերին բայաթի յերգելով: Իսկ այժմ... Գոնե ապառիկ տային մի կես թունզի զինի կամ մի «տրիցատկա» արադ.—չե, չեյին տալիս անխիղճները, այսինքն տվել ելին, բայց ել չեյին տալիս, տեսնելով, վոր արդեն հավաքված պարտքը վճարել չի կարողանում. մինչդեռ այդ ապերախտների միտ եր թողել իր վաստակած գրեթե բոլոր փողերը: Գոնե ընկերներից մեկն ու մեկը հրավիրեր.—չե, չեյին հրավիրում. ամենքն ել իր պես պարապ ելին, ամենքի գրպանումն ել մկներ ելին խաղում: Անտեր տանն ել չկար այնպիսի մի բան—արծաթի գդալ, վոսկի սատանի, ականջի ող կամ գորդ, թեկուզ կնոջից ծածուկ տաներ գրավ դներ կամ ծախեր.—տունը՝ սրբած, կինն ու յերեխաները՝ տկլոր, ինքը՝ զառ ու դատարկ:

Այսոր զինեվաճառը, վորի մոտ նա թողել եր իր ամառվա դրեթե ամբողջ վաստակը, բաց արեց նրա առջեւ դավթարը և ասսց:

— Այ, ուստա Դավիթ, տասը մանեթ հինգ շայի նիսիա կա վրեդ. բե տու, ախազեր, ու ելի ինչքան ուզում ես՝ նստի խըմի, քեզ անուշ. ըլի,

Ու, չնայելով Դավիթի աղաչանք-պաղատանքին, մեռավ-կըտրվեց՝ մի բաժակ ողի չտվեց, վոր ցամաքած բերանը թաց աներ ու մի քիչ տաքանար այս անպիտան ցուրտ յեղանակին:

Այժմ նա տուն եր դառնում հույսը բոլորովին կտրած և խիստ չարացած ամենքի և ամեն բանի վրա: Ու վոր մտածում եր, թե վաղն ել, մէուս որն ել, յերբորդ որն ել—մի զիտե դարձյալ քանի՛ որեր—նույն անհաջողությունը պիտի ունենար, ինչ վոր այսոր, քիչ եր մնում իսկապես խենթանար: Մատներով անդար պրպտում եր արխալուղի զրապանները, հուսալով, թե մի գուցե տաս կամ տասնհինգ կոպեկանոց մի դրամ խծկված լինի կարկատանների արանքը, ինչպես շատ անգամ եր պատահել փող ունեցած ժամանակ, բայց մատների ծայրերը միայն շոշափում եյին զզզզված զրապանների մազանման մճճված կեղտը:

Քամու զեմ կովելով, նա մտավ իրենց նեղ ու ծուռ փողոցը վորի յերկանքով այս ու այն կողմը իրար հենված եյին, կարծես շթափիվելու համար, խղճուկ տնակներ ցածր, հողածածկ կտուրներով, ծուռտիկ-մուռտիկ պատուհաններով, փտած դռներով, վորը զետնի մեջ խրված, վորը զետնից բարձր:

Դավիթը կանգ առավ այդ դռներից մեկի առջև, վորի ծակոտիններից և ճեղքերից ճրագի լույս եր յերեսում: Փոխանակ ծեծելու, նա վոտը բարձրացրեց և մի պինգ հարված տվեց դռանը: Դուռը ճրճռաց, քիչ մնաց տեղահան լիներ, բայց չբացվեց. ներսից փակ եր: Այդ բանն ավելի կատաղեցրեց Դավթին, և նա կրկնեց հարվածն առաջվանից ավելի պինդ:

— Մեռել ե՞ք, սատկել ե՞ք,— զոռաց նա, սարսափելի հայ-հոյանքներ թափելով:

Ներսից լսվեց դռան փականքի շրխկոցը: Վոտաբորիկ, պատառուուն հագուստով, խճճված մազերով մի փոքրիկ աղջիկ դուռը բաց արավ և, ցրտից սարսուելով, մի կողմ քաշվեց, վոր հայրը ներս մտնի:

Դավիթը մտավ արյուն կտրած աչքերով:

Աղջիկը սովալլուկ հայացքով աչքի տակից նայեց հոր դատարկ ձեռներին և այն միջոցին, յերբ փակում եր դուռը, մի ծանր հարված զգաց զլիին: Նա ձայն չհանեց, այլ ձեռքերը դըրեց զադաթին և տեղնուաեղը պազեց տապ-տապ արած հավի պես: Հստ յերեվույթին սպասում եր թե պիտի հարվածը կրկնվի և իր մանկական սովալլուկ մարմնի գիղիքական ամբողջ ուժքը վոսկրացած ձեռքերի մեջ հավաքած՝ աշխատում եր պաշտպանել գլուխը շեքերի մեջ կոխած:

Սակայն հայրը բավականացավ մի հարվածով միայն և ան-

միջապես դարձավ կնոջը, վոր թախտի վրա նստած կար եր անում լամպի լուսով:

— Համ, մեռել եք, սատկել եք: Տո, դուռն եսքան կոտրատում եմ, չեք իմանում: Այ խլանաք դուք, խլանաք: Պինդ ել կողպել եք, թե ի՞նչ: Գիտամ, ենքան բան-ման ունես անտերտանդ, վոր վախենում ես նի չթափիեն, չթլանեն: Վայ ձեր ծընունդը չորանա, ձեր ծնունդը: Դուք խո ինձ հմար կինկ ու վորդիք չեք, ցավ ու կրակ եք ինձ հմար, ցավ ու կրակ զա ձեր գըլխին: Ել ջըրումս բարաքաթ չմնաց, ինչ դու եղ կոտրած վոտդտուն դրիբ ըստեղ...

Դավիթի արտասանած ամեն մի պարբերությունը համեմված եր ամենաընտիր և յերբեմն շատ ինքնուրույն հայհոյանքներով:

Կինն ամենեին ձայն չհանեց, նույնիսկ գլուխը չբարձրացրեց կարի վրայից: Ամուսնու գորգոսոցն ու հայհոյանքն այնքան սովորական բան եյին դարձել նրա համար, վոր միանգամայն կորցրել եյին իրենց բոլոր նշանակությունն ու ազդեցությունը, և վաղուց եր արդեն, վոր Մային այլիս չեր պատասխանում, մի անգամ առ միշտ համոզվելով, վոր այդ վոչ միայն անոգուտ, այլ նույնիսկ վտանգավոր ե, վորովհետեւ խոսքը խոսք ե բերում, և Դավիթը վերջի վերջո խոսքից անցնում եր «գործի»: Կնոջ միակ պատասխանը լուռթյունն ու անտարբերությունն եր լինում: Շունը հաջեր թե Դավիթը—այդ միևնույն եր նրա համար: Պատահում եր, վոր Դավիթն ամբողջ ժամկերով գոռում-գորգոռում, հայհոյում եր ամենազգվելի ածականներով, բայց Մային գլուխը կախ՝ մնում եր իր բանին, քարի պես լուռ ու անտարբեր:

Ծանը, շատ ծանը եյին խեղճ կնոջ քաշած որերն արբեցող ամուսնու ձեռքին: Ինչ Մային վոտ եր դրել ամուսնու տուն, վոչ մի լավ որ չեր տեսել. միշտ ծեծ ու հայհոյանք, միշտ հայհոյանք ու ծեծ: Ծեծն ու հայհոյանքն ելի մնաս չունի,—այդ բանին այսպես թե այնպես դեռ կարելի լեր դիմանալ,— բայց գոնե տան յերեխաների հոգու քաշեր. այդ ել չկար. ինչ վաստակում եր, իր փորն եր ածում: Ուրեմն ել ինչացու յեր. ավելի ավ չեր լինի, վոր իսկի չլիներ. խեղճ կինը գոնե հանգիստ իր լրանին կը կենար, գոնե գիշերները չեր սպասի ահուղողով, թե ահա վորտեղ վոր ե՝ պիտի զա իր դահիճը արբած-տրաքած, յերեխաներին լեղաճաք անի, ամբողջ թաղը համաքի գլխին: Տունը ինքն եր պահում, յերեխաներին ինքն եր հազցնում, կերակ-

ըում իր ձեռքի աշխատանքով, ուրեմն ել ինչացու յեր այդ միշտ արբած մարդը, ել ինչ սրտով եր բղավում, հայհոյում, ծեծում, ինչու և ինչ իրավունքով:

Մային աշխատում եր, գիշեր-ցերեկ աշխատում,—կար եր անում, լվացք եր անում, հաց եր թխում, թոկ եր զզում, բարդաններ եր կարում, հինած եր հինում, նուշ, ընկույզ, տիտի եր կոտրում. կարիքը ստիպել եր նրան վարժվելու աշեն տեսակ աշխատանքի, և վոչ մի որ նրա ձեռքը դադար չեր առնում: Հարատե աշխատանքը, զրկանքներն ու հօգսերը և ամուսնու պատճառած ֆիզիքական ու բարոյական տանջանքները հալումաշ ելին արել խեղճին: Նրա կյանքը դարձել եր մի տեսակ անասնական. չեր իմանում ինչ որ ե լուսանում, ինչ որ մթնում. մի բան եր միայն իմանում—յերեխաները քաղցած են՝ պետք և աշխատել, յերեխաները տկլոր են՝ պետք ե աշխատել, տանտերը պահանջում ե վարձը՝ պետք ե աշխատել:

Ահա այս գիշեր ել, չնայելով շարաթ գիշեր ե, կիրակշաբաք ե, յերը ամեն աշխատանք դադար ե առնում, նա դարձյալ աշխատում ե. կարում ե ամբողջ որը՝ վաղ առավոտից նստած, վորպեսզի վերջացնի, տանի տա տիրոջը, մի քանի կապեկ փող ստանա գեթ վաղը մի քիչ հաց առնելու: Առանց այն ել յերեխաները այսոր ամբողջ որը սովից վնասուում ելին: Փոքրն արդեն շատ վնասուալուց հոգնել, քնել ե, մեծն ել, աղջիկը, չես իմանում ինչի յե սպասում: Նրա մատները փետացել են, ասեղը հազիվ են բռնում. մեջքը կորացել, չորացել ե. վոր շտկում ե, կարծում ե, թե վողնաշարն ուզում ե կոտրվել:

Յերկար, շատ յերկար գոռաց, գորգոռաց Դավիթը, հայհոյց, ել մեռել ու կենդան չթողեց, հետո պառկեց թախթի վըրա, ձեռները գրեց գլխի տակ և սկսեց նայել առաստաղի կաթիւթից բազմազան գույներ ստացած, ճաքճաքած գերաններին:

Փոքրիկ աղջիկը, վոր հոր ահից հենց այնպես ել մնացել եր դռան մոտ պպղած, ուր դռան ճեղքերից փչող սառը քամին մրսեցնում եր նրա վտիտ մարմինը, կամաց վեր կացավ, կատվի քայլերով գնաց բարձրացավ թախտը և նստեց մոր մոտ, մերկ սրունքները ծածկելով չթի դերիալի կարճ փեշերի տակ: Շուտով նրա աչքերի կոպերը ծանրացան, և նա նստած տեղը սկսեց նիրհել:

Մայրն ատամներով կտրեց կարի թելը, վորի ժամանակ աչքն ընկավ նիրհի մեջ գլուխը բարձր ու ցածր անող աղջկա վրա:

— Աղջ, քունդ տանում ա, զնս քնի:

Աղջիկը բաց արեց շաղված աչքերը, մի բոպե ապուշապուշ նայեց մորը, հետո սուրսուր յեղունգներով սկսեց քորել զլուխը և կամացուկ վնգստաց.

— Հաց եմ ուզում:

— Ցես ել եմ ուզում,—արձագանք տվագլ թախտի ծայրից փոքրիկը, վոր հոր գորգոսոցի վրա զարթել եր և, մինչև այժմ լուս, մթելի տակից պլղած աչքերով նայում եր ճրագին:

— Եղուց, եղուց, բալա ջան, հմի քնեցեք,—ասաց մայրը:

Բայց փոքրիկը և նրանից սիրո առած մեծը սկսեցին ավելի ու ավելի վնգստալ:

— Սնս, շան լակոտներ, թե չե՞ս ես ա վե կացա, — հանկարծ ոլոսաց Դավիթը, արագորեն շուռ զալով պառկած տեղը և բունցքը ուժգին զարկելով թախտին:

Փոքրիկն իսկուն սուս արավ և մթելը գլխին քաշեց: Աղջիկը նույնպիս լոեց, չոքեչոք զնաց գեղի անկողինը, ոլտոկելուց առաջ քորումոր լեկագ տմրող մարմնով, հետո մթելի մի ծայրը բարձրացրեց, մտավ տակը, զլուխը դրեց լեզրոր գլխի մոտ, կուշ յեկավ սրթսրթալով և համարյա թե նույն բոպեյին ել քնեց:

Թումին շվշվացնում եր զուրուը, պղղում եր բուխարու մեջ, ծեծում եր զուռ ու պատուհանը, իսկ ներսը լուռթիան մեջ լըսվում եր քնած յերեխաների շնչառությունը և յերբեմն-յերբեմն Դավիթի մրմոսցը: Այն ինչ Մայիս, զլուխը միշտ կախ, կարում եր հա կարում, և սպիտակ քաթանը նրա հոգնած աչքերի առաջ յերբեմն-յերբեմն շերտավորվում եր կարմիր, կանաչ, գեղին զուբուվ:

Պառկած տեղն ել հանգիստ չեր կարողանում մնալ Դավիթը, տենդով բոնված մարդու պիս զես եր շուռ զալիս, զեն եր շուռ զալիս, մանչում եր, փանչում. վողելից խմիչքի ծարավն ավելի ու ավելի լեր նեղում նրան: Նրան թվում եր, թե այդ դիշեր չի լուսացնի. կամ կը մեռնի, կամ կը զժվի: Առհասարակ ամրող որը հիվանդ եր զզում իրեն. զլուխը ծանր եր քարի պիս, աչքերից չուր եր զնում, ձեռները դողում ելին, ծնկների մեջ ինչ-վոր մըդմիդ եր զզում, իսկ ստամոքսի մեջ կարծում եր թե մժեղներ են զժվում. չնայելով վոր վոչինչ չեր կերել, այնու ամենայնիվ քաղց չեր զզում և ուտելու մասին չեր ել մտածում: Զզում եր միայն, վոր մի քանի բաժակ ողին բավական եր այդ հիվանդագին բուր յերեսութները ձեռաց վանելու համար:

— Ո՞հ, յես ձեր...., — մի ծանր բռունցք իջեցնելով թախտի վրա, զորավոր հայհոյանք ուղղեց նա հայտնի չե ուժ հասցելին, նստեց, վոտները կախեց թախտից, խոնարհվեց և զլուխն առավ ձեռքերի մեջ: Գոնե քունը դար, վոր թերեւ առժամանակ մոռանար այդ անտանելի պապակը: Ինքը վողելից խմիչքի ծարավը չեր այնքան, վոր տանջում եր նրան, այլ ավելի յերեակայությունը, վոր այնքան հրապուրիչ ու գայթակղիչ մտապատկերներ եր ստեղծում ողու և զինու շուրջը ընկերական շրջանում, դուդուկի և արգանի ձայների տակ, զինետան մեջ, վորի քացախածողը նրա համար ավելի ախորժելի յեր, քան բուրավետ վարդն ու ծաղիկը:

Նա վեր կացավ և սկսեց քայլել սենյակի յերկայնքով: Մտածում եր՝ ի՞նչ աներ այդ սոսկալի դրությունից յելնելու համար. մտածում եր կլանքի և մահվան առեղծվածի առջև կանգնած մարդու մտատանջանքով: Ամեն անզամ, վոր մոտենում եր սենյակի անկյանը, նրա աչքովն եր ընկնում ջրի կուլան: Սկզբում ուշադրություն չեր դարձնում, հետո կանգ առավ կուլայի առաջ և յերկար ժամանակ չեր կարողանում հաղթահարել իր մեջ մի տարորինակ զզվանք, վոր, իրրե արբեցող, տածում եր դեպի ջուրը: Բայց վողելից խմիչքի ծարավը սպանում եր նրան, թուքը ցամաքել եր, վորկորը խանձվել, պետք եր բերանը մի բանով թաց անել: Յեվ Դավիթը կամա-ակամա խոնարհվեց դեպի ջրի կուլան:

Բայց այդ միջոցին հանկարծ մի միտք ծագեց նրա զլխում, և նրա դաժան դեմքը մի բոպե կարծես թե պայծառացավ:

Նա արագորեն մոտեցավ պատի մեջ գտնված պահարանին, բաց արեց, հանեց ողու դատարկ շիշը, կուլայից մի գավաթի չափ ջուր ածեց մեջը և սկսեց վողողել: Վողողեց, վողողեց ողու շիշը, հետո զլխին քաշեց և սկսեց ծծել: Ծծում եր աչքերը փակ և շրթունքները պինդ սեղմած շշի պոնկին: Այդ միջոցին նրա դեմքը զարշանքի այնպիսի արտահայտություն եր ստացել, վոր կարծես լուծողական եր ընդունում:

Կինն առաջին անգամ բարձրացրեց զլուխը, նայեց նրան, յետեից մի չանչ արավ և նորից շարունակեց կարը:

Դավիթը տեսավ այդ չանչը, բայց նրան թվաց, թե կինն եր հասցելին ինչ-վոր փնթփնթաց քթի տակ:

— Հը, ի՞նչ ես փնթփնթում,— կամաց դարձավ նա կնոջ կողմը, շիշը հեռացնելով շրթունքներից: Հրացայտ աչքերով յերկար ժամանակ լուռ ու անշարժ խեթում եր կնոջը, հետո ավելաց-

րեց ծանրու սպառնալից.—ջանդ խո քոր չի գալիս: Թե՛ քոր ա գալիս, քորեմ...

կինը ձայն ծպուտ չհանեց:

Դավիթը շիշը տեղը դրեց, պահարանի դուռը շրխկացնելով փակեց և գնաց նորից պառկեց թախտի վրա, շմոռանալով հայ-հոյանքի մի նոր փունջ հրամցնելու կնոջը: Զուրը թեև մի քիչ ողու համ եր ստացել, բայց, իհարկե, այն չեր, ինչ վոր քթից ծուխ հանող, աչքերից աքտասուք քամող ողին, վոր խմելուն պես բալասանի նման տարածվում է մարդու յերակների մեջ, և այդ բանն եր, վոր ավելի ջղայնոտ եր դարձրել Դավիթին, ավելի ևս գրգռելով նրա վոգելից խմիչքի պապակը: Նա սաստիկ ցանկանում եր, վոր կինը ձայն հաներ, բան ասեր, վորպեսզի իսկույն վեր թռչեր և մի լավ տրորեր նրան, սրտի բոլոր մաղձը նրա վրա թափելով: Բայց Մային, ձկան պես լուռ, իր բանին եր: Դուռը դրսից ծեծեցին:

Դավիթը գլուխը բարձրացրեց, նայեց դռանը և նորից պառկեց: Այդ անշուշտ Ակորն եր—անդրանիկ վորդին՝ ութ տարեկան, վոր նոր եր վերադառնում խանութից: Զորրորդ ամիսն եր, վոր նրան աշակերտ եր տվել մի պղնձագործի մի տարի անվարձ ծառայելու, մինչև վոր արհեստ սովորեր:

Վորովհետև դուռն իսկույն բացող չեղավ, նորից ծեծեցին:

Դավիթը վեր թռավ, նստեց և դարձավ կնոջը կատաղած:

— Տո, խլացել ես, չես խմանում: Ես ել խո յես չեմ, վեկաց բաց արա, ելի: Այ չորանաս եղ ճրագի տակը, հը. ընենց կպչես եղ թախթիցը, վոր ել պուկ չգաս: Մի հարցնող ըլի, ոգուտդ ինչ ա, ե, եղ անտեր-մունդոիկ կարիցը: Նավթն ել մինչև լիս երում ես:

Մային կարը մի կողմ դրեց, մեջքը հազիվ շտկեց, վեր կացավ, իջավ թախտից և ամուսնու անհատնում հայնոյանքների ուղեկցությամբ գնաց դուռը բանալու:

Մտավ Ակորը գզգզված հագուստով, մրից սեացած դեմքով, ձեռքերով և մինչև սրունքները մերկ վոտներով: Ցրտից սրթութում եր ամբողջ մարմնով և ատամները նկատելի կերպով զարնում իրար, բայց աչքերն իրենց տարորինակ սպիտակուցներով սեացած դեմքի վրա փայլում եյին մանկական ինչ-վոր անհուն բերկրանքով:

— Մայիլո ջան,—մտնելուն պես բացականչեց նա, —ըսոր մեկն յեկավ, պղինձներ առավ. տարա տուն, մի արասի փող բաշխեց: Այ:

Դավիթը փողի անունը լսելուն պես ծտի նման թռավ տեղից և մի վոստյունով հասավ դռան մոտ:

— Արա, արա...

Ու քաղցած գայլի պես վրա ընկավ յերեխային:

Մայրն ընկավ վորդու և նրա մեջտեղ:

— Չտաս, չտաս, Ակոր ջան, հաց չունենք, հաց կառ...

Խոսքը չվերջացավ կնոջ բերանում. Դավիթն յերկու ձեռքով բռնեց նրա վոսկրացած ուսերից և այնպիսի ուժով յետ շպրտեց նրան, վոր նա փովեց գետնին մեջքի վրա:

— Ինձ տու, — բղավեց և այնպես պինդ հուալ տվեց վորդու բռունցքը, վոր նա ցավից ճշաց և խոկույն փողը վայր զցեց ձեռքից:


Դավիթը փողը թոցրեց գետնից և խելազարի պես դուրս թռավ...

Յերբ Մայրն ուշքի յեկավ և աչքերը կամաց բաց արեց, կարծես յերազի մե տեսավ, վոր Ակորը պատին կպած՝ լաց և լինում յերեխայական ուժգին հեծկլտանքով, և ցուրտ քամին փչում և բաց դռնից, բլրլացնելով լամպի լույսը թախտի վրա: Մեծ դժվարությամբ նստեց, յերկու ձեռքով բռնեց ծոծրակը, աչքերը փակեց ինչ-վոր սուր ցավից և մի յերկար ու ձիգ թառանչ քաշեց:

— Դուռը կողպի, Ակոր ջան, դուռը կողպի, ցուրտ ա, — հազիվ կարողացավ արտասանել նա:



ՀՈՊՈՊ



Զինագործ Ասատուրը. — Հնամաշ արխալուղով, կաշե զոտկով, արքեցողությունից ուստած-կարմրած ղեմքով մոտ քառասուն տարեկան մի մարդ, վոր ամբողջ թաղում և բարձրում հայտնի յեր Հոպոպ մականունով, — յերեկոյան իր հավաքնի չափ փոքրիկ խանութ փակելուց հետո տուն եր գնում: Մի ձեռքին բռնած եր կես-թունգանոց մի զոտ, վորի պատերը տարիների ընթացքում սևացել ելին կարմիր գինուց, մյուս ձեռքին կարմիր աղլուխի մի կապոց, վորի մեջ կար մի քիչ «դոշ» (ձուկ), մի քիչ կանաչի, մի կապոց կարմիր բողկ և յերկու սպիտակ «շոթի» (վրացական յերկայն ու նեղ հաց), վորոնց սուր ծայրերը յերկար ականջների պես դուրս ելին ցցված աղլուխի կապի արանքներից:

Արել նոր եր մայր մտել. ամառալին անտանելի տոթ յեղանակը փոքր ինչ կոտրվել եր, բայց և այնպես անշարժ ողլը հագեցած եր արեից կիզված փոշու ծանր հոտով: Թաղի կանալք յերկարատես որվա չարքաշ աշխատանքից հետո խումբ-խումբ նստոտած ելին իրենց դռների առջև մերկ վոտներով մերկ գետնին, դիմների փաթաթանների կապն արձակած կիսարաց կրծքներին և զբաղած ելին իրենց սովորական խոսք ու զրուցով, վորոնք բամբասանքներից դենք չելին անցնում: Բոկոտն, զիխարաց, կեղտոտ յերեխանները ճանճերի պես իրար խտոնված՝ վազվզում ելին փողոցներում ականջ խլացնելու չափ ճիչ ու ծղրտոցով:

— Հոպոպ, — հանկարծ կանչեց յերեխաններից մեկը:

Հոպոպն ամեննեին ուշադրություն չդարձրեց այդ կանչին, վորը, ինչպես յերեսում եր, մի շատ սովորական բան եր դարձել նրա համար, և տնտարբեր շարունակում եր իր ճանապարհը: Քըրտինքը ծորում եր նրա գդակի տակից ականջների յետեղի և պուտ-պուտ կաթում խունացած ուսերին:

— Հոպոպ... Հոպոպ..., — ծկլթաց յերկրորդը, յերրորդը, Հորըրդը... և վերջին այդ հատ ու կենտ ծկլթոցները միախառնվեցին և դարձան ընդհանուր մի աղաղակ այնքան սուր ու համառ, վոր ամենաբթացած ջղերն անզամ կարող ելին զրգոել:

Հոպոպը յերկար չկարողացավ համբերել. առանց յետ նա-

յելու և շարունակելով ճանապարհը, սկսեց սարսափելի հայնոյանքներ թափել յետեից աղաղակող յերեխաների հասցեյին:

Յերեխաներն, ըստ յերեռութին, այդ բանին եյին սպասում, և նրանց աղաղակը դարձավ ավելի միահամուռ, ավելի սուր ու համառ, համեմված յերեխական անհոգ քրքիջով և մեծերից լսած փոխաղարձ հայնոյանքով: Նրանցից մի քանիսը սկսեցին նույնիսկ քարեր շպրտել Հոպոպի յետեից:

Սակայն Հոպոպը դնում եր իր համար, առանց նույնիսկ մըտածելու, վոր պաշտպանվի, թեև տեսնում եր, թե ինչպես քարերը յետեից դալով՝ թոշում եյին իր այս ու այն կողմից և գետին ընկնելով՝ փոշի եյին բարձրացնում: Նա միայն շարունակում եր իր հատքնոտիր հայնոյանքները: Ըստ յերեռութին, այդպես ել կը շարունակեր ճանապարհը մինչև տուն, յեթե քարերից մեկը չը դիպչեր նրա վոտին: Յերեի վոտը խիստ ցավեց, վորովհետեւ հանկարծ կանգ առավ, մի ակնթարթում գինու գամն ու աղլուխի կապոցը զրեց գետնին, մի մեծ քար վերցրեց և արյունով լցված աչքերով պատրաստվեց շպրտելու յերեխաների վրա: Բայց մինչ այդ՝ յերեխաները ծկլթացին, շուռ յեկան և ցան ու ցիր յեղան շեղակի նեղ փողոցներում:

— Ա՛յ յես ձեր... (յերկար հայնոյանքներ): Թե մի կը կանգնեիք, թե մի կը կանգնեիք... Քարով եք ուզում կովի՞, դե կըռվենք, Ելի, ուր եք փախչում, յես ձեր... (հայնոյանք): Փիե՛, անց կենալ չի ըլում, Ելի. վրա յեն թափիում, կասես գեղի շներ ըլեն: Տո, ասա յես ձեզ բան եմ անում. թողեք. Ելի, գնամ ինձ հըմար վեր ընկնեմ մի տանը, յես ձեր... (հայնոյանք):

Նա քարը վայր զցեց, ցուցամատով սրբեց ճակատի վրա տված քրտինքը, մատը թափ տվեց, կուցավ և, շարունակելով հայնոյանքները, սկսեց ձեռքով տրորել վոտի այն տեղը, ուր դիպել եր քարը:

— Հը՛, ուստա Ասատուր, եղ ինչ ես ըտենց տաքացել—ասաց այդ բռպեցին նրա մոտով անցնող մի ծանոթ մարդ առանց կանգ առնելու:

Հոպոպը նայեց նրան, գամն ու կապոցը վերցեց գետնից և, շարունակելով ճանապարհը նրա յետեից, սկսեց գանգատվել:

— Տո, ըսենց ել բան կըլի՞: մի հետ չըլտով, վոր եղ շան լակոտները թողան արխային գնամ իմ ճամբով: Հոպոպ հա Հոպոպ: Տո, Հոպոպ... (հայնոյանք յերեխաների հասցեյին), Հոպոպը ձեր թալին ա:

— Ե հ, երեխերք, Ելի, ուստա Ասատուր, ի՞նչի ես անգաջդնում, — ասաց ծանոթը շտապլ քայլելով նրա առջեխց:

— Տո, ով անգաջդնում, յես դրանց... (հայհոյանք): Տեսնում են թե չե, վոնցոր զեղի շները վրա տան: Քարեր ել են զցում, քարեր:

Բայց ծանոթն այլիս չեր լսում նրան, նա ծովից մյուս փողոցն և անցավ գնաց:

Իսկ Հոպոպը, բարձրաձայն շարունակելով հայհոյանքներով համեմված իր բանակոխիվը բացակա յերեխաների հետ, մտավ իրենց փողոցը: Դուներին նոտոտած կանանց խմբերի մոտով անցնելիս մի ջահել կին կանչեց նրա յետեխց.

— Հոպոպ:

Ու իսկույն ծիծաղելով դեմքը ծածկեց մոտը նստած ընկերուհու մեջքի յետեր: Մյուս կանայք ուրախ հրհուցին, բացի մի պառավ կնոջից, վորո մեղմորեն համդիմանեց բացականչողին:

Հոպոպը յետ չնայեց, բայց, ի հարկե, առանց հարմարավոր հայհոյանքի չթողեց իր յետեխց կանչող կնոջը և անցավ գնաց: Այդ հայհոյանքն այնքան անհամեստ եր, վոր պառավիվ նկատեց կանչողին.

— Հը՛, եղ իր ուզում...

Իսկ մյուս կանայք, մանավանդ կանչողը, ամօթից ծածկեցին բերանները և, իրար կողք բղելով, աշխատում ելին զսպել ավելի սաստկացած հրհուցը:

Այսուհետեւ մինչև տուն հասնելը Հոպոպի միննույն հայհոյանքը զանազան վարիանտներով ուղղված եր միայն իր յետեխց կանչող կնոջ հասցելին:

\* \* \*

Ամբողջ թաղը Հոպոպ մականունով եր կնքել զինազործ Ասատուրին. ժողովրդական այն առածի հիման վրա, վոր առում ե, թե «Հոպոպը ինքը հոտած եր, կարծում եր, թե բունն ե հոտած»: Յեվ իսկապես, շատ հոտած, այսինքն կովարար մարդ եր զինազործ Ասատուրը: Պատճառը թերեւ իրենք թաղըցիներն եյին, վորովհետեւ, ինչպես ինքն ել շարունակ զանգատվում եր, վոչ մի որ չելին թողնում, վոր մարդը հանգիստ տուն զնաւ Հոպոպին կատաղեցնելը մի կատարյալ զվարճություն եր նրանց համար: Նույն իսկ այն ժամանակ, յերբ նա տանը նստած սուփրեն առաջին, զինու գավը կողքին, թուրքերեն բայաթի յեր յերգում իր ճաթած ձայնով, թաղի կանայք, վորոնց մի առանձին-

հաճուկք եյին պատճառում նրա անզուգական հայնոլանքները. դրզում եյին մի վորեև չարաձճի յերեխայի, վոր գնա չարացնի Հոպոպին: Յերեխան իսկույն վազ եր տալիս, գլուխը զգուշորեն ներս կոխում դռնից, կանչում «Հոպոպ» ու ծլկում արագավազ նապաստակի պես: Յեզ այդ մի հատիկ բառը բավական եր լինում, վոր Հոպոպի քեֆը հարամ լիներ. նա իսկույն ընդհատում եր բայաթին, դուրս գալիս դուռը և ամբողջ թաղը հավաքում գլխին:

Վոչ վոքի հետ չեր հաշտվում Հոպոպը: Բազարում թե թաղում վոչ մի հարեան չուներ, վորի հետ կոված և մի լավ ել ծեծ կերած չլիներ: Կնոջ հետ խո ամեն որ տուրուղմիոցի մեջ եր. ինքը կնոջն եր ծեծում, կինը նրան. թակում ելին իրար այնքան ժամանակ, մինչև վոր կամ հոգնում ելին, կամ հարեանները միջամտում բաժանում նրանց իրարից: Վոչ վոքից չեր վախենում, բացի վոստիկանությունից, վոր շատ անգամ կոխել եր նրան մեծ-մեծ մկներով լի մութ նկուղը և մի քանի անգամ ել նույն իսկ պրիստավը իր սեփական ձեռքով արենլվիկ եր արել նրա քիթն ու պոռնկը:

Հոպոպն արբեցող եր, ճիշտ և, բայց միայն գինի լեր խըմում, այն ել միմիայն կարմիր և լավ գինի. արադ չեր սիրում և խմելուց հետո յել դեմքին այնպիսի արտահայտություն եր տալիս, վոր թվում եր, թե պիտի թափի: Կերակուրների մեջ ել խիստ խտրություն եր գնում. ջրալի կերակուրներ չեր սիրում, պասվակերակուրներն ատելով ատում եր, մանավանդ լորին. նրա սովորական ուտելիքն եր յուղալի դոշը, խավիարը, խորովածը, թարմ կանաչին, կարմիր բողկը և սպիտակ հացը: Իսկ այդ համեմատաբար թանգ ուտելիքները գնելու համար փող միշտ ուներ, վորով հետև իր արհեստի մեջ լավ վարպետ եր և այնքան ճարալիկ, վոր կարողանում եր մի որեև գրոշանոց ժանգութուր, խանչալ կամ հրացան հարյուր տարվա հնության տեղ ծախել յեվրոպացի տուրիստների վրա շատ լավ գներով:

Գինու գավը, վոր տեսանք նրա ձեռքին, բանեցնում եր տասնհինգ տարուց ավելի. առավոտները դատարկ հետը տանում եր խանութը, յերեկոները լիքը տուն բերում: Այնքան եր սիրում, վոր շաբաթ գիշերները, դատարկելուց հետո, մոմ եր վառում վրեն: «Բարաքես որա մեջն ա,—ասում եր,—ինչ ես զագով գինի լեմ խմեւմ, բանս լավ ա գնում»: Մի անգամ նրա մեծ տղան. վեց տարեկան, վոտով դիպավ գավին. դավը գլորվեց և

քիչ եր մնում թախտից ընկներ կոտրվեր: Հոպոպը վրա ընկավ յերեխին և սկսեց ծեծել նրան այնքան սաստիկ, վոր կը սպաներ, յեթե կինը չխեր վորդուն կատաղած հոր ձեռքից: Բարեբախտաբար, գամի արդեն դատարկված եր, թե չե ծեծից նրան ել բաժին կը հասներ:

\* \*

Կինը տանը չեր, վոր Հոպոպը տուն հասավ: Դուրսը պատի տակ տղան տուն եր շինում տաշեղներից: Բացի կարճ, կեղտոտ շապկից ուրիշ բան չկար նրա հազին:

— Ո՞ւր ա մերդ, — հարցրեց հայրը:

Տղան վեր կացավ, աչքերը տնկեց հոր ձեռքի աղլուխին և պատասխանից.

— Բագրատանց տունը գնաց:

Հոպոպի աչքերը կրակ կտրվեցին:

— Ելք... վայ լս նրա..., — հայնոյեց նա, շտապով ներս մըտավ, գամի ու աղլուխի կապոցը դրեց թախտի վրա և նորից դարձավ վորդուն. — Գնա ես սըհաթիս կանչի: Դե, հը:

Տղան, վոր հոր յետեից ներս եր մտել և աչքը չեր հեռացնում աղլուխից, հանկարծ շուռ յեկավ և դուրս թռավ:

— Բագրատանց տուն... Լավ, շատ լավ, — սկսեց բարձրաձայն խոսել ինքն իրեն Հոպոպը: — Դե հըմի կը գաս կտեսնանք, եւլի... Յես քեզ Բագրատանց տուն շանց կը տամ... Հայ գիտի հա, Ասատուրը մեռել ա, ելի, ել չկա, ել զետնի երեսին ման չի գալի, ելի, վոր նրա կնկա հետ ուրիշներն են սիլի-բիլի անում.. Հոպոպ վոր դառանք, նամուսն ել կորցրինք... Այ, զետինը չի մտնի ես զդակը:

Յեվ նա զդակը պոկելով գլխից ուժգին թափով խփեց գետին: Հետո շարունակելով հայնոյանքներով համեմզած սպառնալիքները կնոջ հասցեյին, գոտիկը յետ արեց, հանեց արխալուղը, վոտնամանները, հոտած զուլպանները, շալվարը և դոան շեմքին կանգնելով, սկսեց չթի կարճ շապկի փեշով հով անել քըրտինքից ջուր կտրած յերեսին ու փորին:

Անհամբեր սպառում եր կնոջը, բայց մինչև վոր կինը կը գար, ջզրած սրտով մոտեցավ գավին, գլխին քաշեց, ծծեց ագահորեն և, ծարավը հագեցնելուց հետո, գավը տեղը դրեց: Հետո, առանց աղլուխի կապոցը բանալու, կտրեց շոթիներից մեկի սուր ու չոր ծայրը, բերանը զցեց և սկսեց ծամել:

Մոր յետեից գնացած յերեխան ներս ընկավ գնդակի նման:

— Ասեց զալիս եմ,—ասաց նա և այս անգամ աչքերը տընկեց հոր բերանին:

— Հը—մռնչաց Հոպոպը, հացը ծամելով, և ձեռքը նորից տարավ դեպի գավը:

Այսպիսով գավը մի քանի անգամ մոտեցել եր նրա շրթունքին և ողղղել թախտին, յերբ վերջապես դռան շեմքին յերեաց կինը՝ բավական սիրունատես ու գիրուկ, մաշված դեղին չուստերը մերկ վոտներին և ծծի մանուկը դրկին:

— Ի՞նչ ես ել եկա, ի՞նչ ես ուզում,—ասաց նա համարձակորեն, ըստ յերեսույթին շատ լավ խմանալով, վոր կրկնվելու յետենորդա տեսարաններից մեկը:

— Ի՞նչ եմ ուզում,—ասաց Հոպոպը, վոր հենց նոր գավը նորից գլուխն եր քաշել. գավը դրեց թախտի վրա, շապկի թևով սրբեց շրթունքը, մոտեցավ բռնեց կնոջ ձեռքից ներս քաշեց և սպառնական դիրք բռնեց նրա առջև.—Վորտեղ իր:

— Բագրատանց տանը, — նույն համարձակությամբ ողատասխանեց կինը:

— Ի՞նչ իր շինում ընտեղ:

— Ենչ պտի շինելիք: Լվացք ունեն անելու կանչել ին, վոր եզուց զնամ լվանամ:

— Լվացք... լվացք... Տն, յես քու... (հայհոյանք)... անտեր-մունդոիկ ես մնացել, քաղցած-տկլոր ես մնացել, վոր ուրիշների հըմար լվացք ես անում: Համ բա յես չկամ, բա իմ գըլուխը շներն ու գելերն են կերել: Համ: Տն, իմ կնիկն ընչի պըտի ուրիշի լվացք անի, հը: Տն, Բագրատն ում շունն ա, վոր իմ կնիկը զնա նրա հըմար լվացք անի, հը: Տն, Բագրատի պես հարլուրին կառնեմ ու կծախեմ, ու իմ կնիկը պտի զնա նրա հըմար լվացք անի: Ի՞նչ անենք, թե զդակին կակարդ ունի ցցած, յես նրա... (հայհոյանք Բագրատի հասցեյին): Տն, ի՞նչ լվացք, ի՞նչ դես, ի՞նչ դեն, մւմ ես ուզում խարի. հազիր ասես... Դես արի հլա, դեսը... (Հոպոպը քարշ տվավ նրան դեպի ավելի ներս, ձայնը ցածրացրեց, գլուխն առաջ տարավ և փշաց սեղմած ատամների միջից). հազիր ասես զնացել իր նրա հետ շնութին անելու... Հը, սուտ ա... ելի կասես սուտ ա...

Կինը ձեռքը խլեց նրա ձեռքի միջից և շանչեց նրան:

— Ի՞ւ, հողեմ զիժ գլուխդ, — ասաց նա արհամարհանքով և դարձավ, վոր դուրս զնա:

Բայց մարդը չանթեց նրա թերց և թույլ չտվավ, վոր տեղից շարժվի:

— Կաց, — զոռաց նա, — ուր ես գնում, վոր գնում ես: Հենց գիտաս ձեռիցս կը պրծնես: Գիտը հըմի կը տեսնաս, թե վոնց գիտ եմ: Բնչկիդի հոգիդ չհանեմ, կը թողամ: Բայես մեռել եմ, վոր են շուն շան վորդու հետ ես շնութին անում: Հ՞ը, մեռել եմ... մեռել եմ... մեռել եմ...

Յեվ ամեն մի «մեռել եմ» խոսքի հետ բռունցրի մի ծանր հարված եր իջեցնում կնոջ մարմնին, ուր վոր պատահեր — զլխին, ուսին, մեջքին... Կինը մի ձեռքով մանուկը գրկած՝ գլուխը կախել եր, վոր հարվածները յերեսին չդիպչեն, մյուս ձեռքով աշխատում եր բռնել մարդու ձեռքը, և, յեթե յերբեմն աջողում եր այդ, Հոպոպն ավելի յեր կատաղում, և հետագա հարվածներն ավելի անխնա ելին լինում:

— Տո, գիտ Հոպոպ, ի՞նչ ես ուզում ինձնից, — կանչում եր կինը լաց լինելով:

Ծծի մանուկը ծվում եր նրա խտրախին, իսկ մյուս յերեխան մի կողմ քաշված՝ դիտում եր այդ շատ սովորական տեսարանը լուռ ու անտարբեր:

— Յես քեզ հլա փետով պտի ծեծեմ, փետով, — ասաց Հոպոպը շնչասպառ և, թողնելով կնոջը, սկսեց խենթի պես դեսղեն ընկնել սենյակում, վոր փայտ գտնի: Փայտ չգտնելով, նրա աչքովն ընկան իր վոտնամանները: Ու վեր թոցրեց այդ վոտնամաններից մեկը, վորի կրնկին հաստ նալ եր խփած գոգավոր մեխերով:

Մինչ այդ՝ կինը ծծի մանուկը գրեց թախտի վրա, շտկեց իրեն և վեր թոցրեց գինու գավը:

— Արա խփի, արա խփի, տես ես զավի գլուխը վորտեղ եմ ուտում, — կանչեց նա անվախ և սպառնագին:

— Վույ յես քու..., — բղավեց Հոպոպը և, վոտնամանը ձըգելով ձեռքից, վրա վազեց վոր գավը խլի:

Բայց կինը, ժամանակ չտվավ նրան, վոր իրեն հասնի. վոտները հանեց չուստերից և դուրս փախավ գավը ձեռին:

Մարդն ընկավ նրա յետեից:

Ու փողոցում, ուր թաղի կանայք և յերեխաններն արդեն հավաքվել ելին նրանց աղմուկի վրա՝ սովորական տեսարանը դիտելու, մարդ ու կին վազում ելին — կինը առջեից գավը ձեռին, բարդը յետեից գլխաբաց, վոտարոպիկ և ներքնաշորով:

Փողոցում մի անասելի ժխոր եր բարձրացել. կանայք հըը-

հոռւմ եյին, յերեխաները սուր ծկլթոցներով «Հոպոպ» եյին աղաղակում և սուլում, իսկ թաղի մանրավաճառի խանութի առջև հասուն տղերքը ծիծաղելով բղավուա եյին՝ «Հասի հա, Հոպոպ, հասի հա»:

Այդ սարսափելի ժխորի մեջ Հոպոպը վազում եր հա վազում կնոջ յետեից, կարճ շապկի փեշը փրփոացնելով ողի մեջ և աչքը տնկած կնոջ ձեռքի գավին, վորի մեջ գինին լվլխկում եր և թափվում բերանից:

Քանի գնում, այնքան փոքրանում եր տարածությունը մարդու և կնոջ միջև, վորովհետեւ գավը խանգարում եր կնոջն ավելի արագ վազելու: Վերջապես, մի քանի քայլ եր մնում, վոր մարդը հասներ կնոջը, յերբ հանկարծ կինը, առանց կանգ առնելու, ձեռքը բարձրացրեց և գավը ուժգին թափով գետնովը տըվեց: Գավը բղկաց և ալ վարդի պես բացվեց: Տակի հաստ մասը քրեղանի պես մնաց ընկած տեղը, իսկ բարակ պատերի թաց փըշուրները թռան այս ու այն կողմ. կարմիր գինին ներկեց գետինը լերդացած արյան սև գույնով և իսկույն ծծվեց արևակեզ գետնի մեջ:

Հոպոպը ցնցվեց և կանգ առավ հանկարծ: Նրան թվաց, թե իրեն տվին գետնովը: Աչքերը մթնեցին: Ել չիմանալով, թե ինչ և անում, արագորեն կռացավ, մի մեծ քար թոցրեց գետնից և ծայրահեղ կատաղի թափով շպրտեց փախչող կնոջ յետեից:

Քարը շեշտակի գնաց դիպավ կնոջ մեջքին: Կինը սաստիկ ճշաց, իներցիայով առաջ վազեց մի քանի քայլ ել և փովեց գետնին յերեսի վրա:

Հըհոացող փողոցը հանկարծ լոեց և քարացավ:

ԹԵ ԻՆՉ ՑԵՂԱՎ ՀԵՏՈ, ՅԵՐԲ ՇԱՔԱՐԱՄԱՆԻՑ ՅԵՐԿՈՒ  
ԿՏՈՐ ՇԱՔԱՐ ՊԱԿԱՍԵՑ



Մի ընդարձակ ամայի բակում յետին կողմը կանգնած եր դրոգապան Յագորի հնորյա տնակը բաղկացած ընդամենը մի մեծ սենյակից, վորի դռուք բացվում եր ուղղակի դեպի բակը։ Տնակի մի կողքից կպած եր տախտակամած խոհանոցը, իսկ խոհանոցի կողքին մի ընդարձակ ծածկոց, վորի տակ Յագորը զիշերները կապում եր իր ծանրաշարժ դրոգի աժդանա ձին։ Բակը փողոցից բաժանված եր տախտակի ցանկապատով, վորի տակ մի անկյունում կիտված եր ձիու ամիսներով հավաքված աղբը։ Մինչդեռ բակի մնացած մասում մի տեղ անգամ չեր կարելի գտնել—այնքան մաքուր եր, վորովհետև Յագորի կինը—Անանը որը լուսանար թե չե՞ ամենից առաջ ձիու աղբն եր հավաքում և բակն ավլում։

Չարմանալի մաքրություն եր տիրում նաև ներսը, սենյակում։ Հնամաշ, տեղ-տեղ թելերը դուրս թափված կապերտը ցածրիկ թախտի վրա միշտ ավլած եր։ Հողի հատակն անդադար ջըրվելուց խոնավացել, պնդացել, զորշ զույն եր ստացել և այնքան մաքուր եր, վոր, ինչպես ասում են, լուղ թափելիր՝ կը հավաքվեր։ Թախտի, յերկու փոքրիկ պատուհանների, ծալքի և թարեքի սպիտակ միտկալի վարագույրները և չորս հատ հնաձև աթուաների սպիտակ յերեսները փայլում ելին ձյունի մաքրությամբ։ Մինչև անգամ պատի տակ դրված, տակը ջրակալած և ամրողապես ջուր լացող կարմիր խելագան ամեն անգամ ջրով լվացվելիս խնամքով ողողվում, մաքրվում եր։ Ճանճ ասված բանը գոյություն չուներ այդ սենյակում, ուր ներքնատան մի տեսակ ծանր զովություն եր տիրում։ Հաճախ կարելի յեր տեսնել միայն մի վորսե հոթիս, վոր դուրս գալով հայտնի չե վորտեղից՝ լույսից վախեցած վազում եր թախտի տակը մտնելու, կամ մի նամաճիճու, վոր տրխկալով ցած եր ընկնում առաստաղից մեջքի վրա և սպիտակ փորը վերև արած՝ յերկար ժամանակ վոտները բալղիրալի յեր անում, մինչև վոր աջողում եր շուռ գալ և, ծանր ու բարակ, կարծես խոր մտածմունքի մեջ, սկսում եր ուր-վոր գնալ։ Ամառվա տոթ յերեկո յեր։ Ողն այնքան անշարժ եր, վոր

պատուհանների վայր թողած վարագուցրներն ամեններն չելին շարժվում: Անանը նստած եր հատակին մի չլի վրա և յերեխային վեր եր կացնում որորոցից: Նա դեռ ևս շատ ջահել կին եր, հաղիվ քսան տարեկան, չթի հնամաշ դերիայով և զլիխին մաքուր, ըսպիտակ աղլուխ փաթաթած: Կազմվածքն այնքան նիհար եր, վոր պարզորոշ նկատվում ելին թիակների սուր ծայրերը, վորոնք դուրս ելին ցցվել բարակ դերիայի տակից և մեջքի վրա, վերեփց ներքե, տաշտանման մի փոս ելին գոյացըրել: Մի տեսակ սարսափի արտահայտություն կա: Նրա տեղ-տեղ կարմրատակած, տեղ-տեղ կապտած և տեղ-տեղ ուռած դեմքի վրա, մանավանդ տարորինակ կերպով չուած-քարացած աչքերի մեջ, վորոնք կարես ծայրահեղ ապուշ տարակուսանքով հարցնում ելին շարունակ՝ «ինչու, ինչու...» ու վոչ մի տեղից պատասխան չելին ստանում:

Լուռ ու մունջ առավ յերեխային, դրեց գոզը և սկսեց հագցընել: Յերեխան ծիծաղկոտ աչքերով նայում եր նրա քարացած դեմքին և, ինչ-վոր թոթովելով, կարծես քնքշանք եր խնդրում մորից, բայց մայրը կարծես չգիտեր, թե ինչ և քնքշանքը: Սակայն, յերբ յերեխան փամփլիկ ձեռքը մեկնեց և սուր յեղունգներով բռնեց նրա քթից, նրա դեմքի վրա ժպիտի նման մի բան յերեաց. նախ համբուրեց յերեխայի ձեռքը, զլիսի մի թեթև շարժումով քիթն ազատեց նրա ձեռքից, հետո խոնարհվեց և շրթունքը ամուր ու կաթողին սեղմեց նրա թխլիկ այտին: Բայց և այնպես սարսափը քարացած եր նրա դեմքի վրա և աչքերի մեջ:

Ներս մտավ մի կին միջին տարիքով, սև հագուստով, կարմիր քրտնած դեմքով, մի սև շալ ձեռքին: Ամբողջ թաղում և թաղի սահմաններից ել դուրս նա հայտնի յեր գիծ-Հոռոմսիւմ անունով: Յեվ իզուր չեր, վոր վաստակել եր այդ անունը: Կիսախելագար մեկն եր, վերին աստիճանի չար և կովարար. որ չեր անցնի, վոր մեկի հետ չկովեր – ով ուզում և լիներ այդ մեկը՝ հարազատ, հարեան թե անծանոթ: Տարին տասներկու ամիս անեծքներ ելին միայն, վոր թափվում ելին նրա բերանից: Անի. ծելիս շատ անգամ կատարյալ բանաստեղծ եր դառնում. այնպիսի հզոր ու ազդու, յերբեմն և կնոջ բերանին անսաղ անեծքներ ու հայնոյանքներ եր հորինում, վոր վոչ վոք վոչ մի տեղ չեր լսել: Յեվ ամբողջ թաղը սարսափում եր նրա բերանից: Թաղական վոստիկանն անգամ, յերբ հարեանները գնում ելին գիծ-Հոռոմսիմից գանգատվելու, ձեռքը թափ եր տալիս և հեռանում:

Թաղում դեռ կալին ուրիշ մի քանի հայտնի կովարար կա-

նայք ևս, բայց գիտ-Հոռոմսիմը վաղուց արդեն տվել անցել եր ամենքից թե իր ճարտար լեզվով, թե անեծք-հայնոյանքով և թե նույնիսկ ֆիզիքական ուժով, վորին շատ անգամ դիմում եր բերանացի կովից հետո:

Ցածրահասակ, լղար, ծայր աստիճան արագաշարժ՝ տեղն ու տեղը կրակ եր գիտ-Հոռոմսիմը՝ Պստիկ, պլալան աչքերը ջղային անհանգստությամբ այս ու այն կողմն ելին դառնում շարունակ ծտի գլխի պես,—կարծես շարունակ կովի առիթ եր վորոնում: Կովելիս նախ յերկար ժամանակ լեզվակոխ ու անեծքակոխ եր անում համարձակ հակառակորդին սկզբում հանգիստ, հետո արագորեն տաքանալով, վերջը հանկարծ կատվի պես վրա յեր ընկնում նրան և յեթե աջողում եր բռնել նրա մազերից, ձիգ եր տալիս բոլոր ուժով, իսկ յեթե վոչ, սկսում եր կմշտել և վոլորել նրա մարմինը իր յերկայն, չոր մատների սուր յեղունգներով, վորոնց գծած ստորակետներն արնակալում, ուռչում-կապտում եյին և յերկար ժամանակ չեյին ջնջվում:

Գիտ-Հոռոմսիմը Անանի սկեսուրն եր:

\* \* \*

— Ը-ը՛, տափը դնեմ քեզ, տափը, վոնցոր փետացել ես եղ տափին, — մրթմրթաց նա մտնելուն պես, պստիկ, չար աչքերը վոլորելով հարսի վրա:

Անանն այն աստիճան սովորել եր այդպիսի անառիթ անեծքների, վոր մինչև անգամ չնայեց սկեսոր կողմը, այլ անտարբեր ու դանդաղ՝ շարունակում եր հազցնել յերեխային:

Գիտ-Հոռոմսիմը շալը շպրտեց թախտի վրա, վորի ժամանակ նրա արագաշարժ աչքերը հանկարծ մի վարկան կանգ առան պատուհանների վայր թողած վարագույրների վրա:

— Աղջի, ըա եղ քոռացած աչքերովդ տեսնում չես արել մեր ա մտել, — ասաց նա: — Այ, վոչ ունենամ քեզ պես հարսը, վոչ, չորանաս կալես եղ տափից, վոնցոր չորացել կպել ես:

Ու անեծքները շարունակելով, Գիտ-Հոռոմսիմը բարձրացավ թախտը, պատուհանների վարագույրները զցեց բաց փեղկերի գլխին, հետո ուզում եր իջնել, բայց մի բան մտարերելով՝ արագ մոտեցավ թարեքին, յետ քաշեց վարագույրը և սկսեց մեկ-մեկ համարել թիթեղյա մատուցարանի վրա թեյի պարագաների կողքին դրված շաքարամանի միջի շաքարի կտորները: Առավոտյան տնից դուրս գնալիս շաքարամանի մեջ միշտ տասը կտոր շաքար

եր թողել նա, բայց ալժմ, համարելուց հետո, տեսավ յերկու կտոր պակաս եւ Ու ծտի նման ցած թռավ թախտից:

— Այ քեզ...այ, այ, այ...

Այս խոսքերով նախ յերկու ձեռքով պինդ խփեց հարսի գլխին, հետո ծայրահեղ կատաղությամբ ատամները սեղմած՝ ըսկսեց սուր-սուր յեղունգներով կմշտել նրա դեմքը, ձեռքերը, կողեր - ուր վոր պատահեր. ընդ սմբին, ամեն մի կմշտոցի հետ յեղունգների մեջ բռնած կաշին վոլորում եր և ձիգ տալիս:

— Եը..., — ցավից մղկտաց Անանը և, յերկու ձեռքով ամուր գրկելով յերեխային, խոնարհվեց նրա վրա:

— Առանց ինձ չայ ել ես խմում, հա...Այ քեզ... տասը կտոր շաքարից ութն ես թողել, ութ կտոր դառնաս դու...այ քեզ, այ, այ...Շատ եժան ենք առնում, հա, վոր քոռ ու փուչ ես անում, քոռանաս ու փշանաս դու...այ քեզ, այ, այ...

Ու սուր յեղունգները դանակի պես ակոսում ելին Անանի վտիտ մարմինը:

— Վըի, վըի..., — մղկտում եր Անանը ցավերից գալարվելով, և նրա ձեռքերը մեքենայաբար ավելի ու ավելի ելին սեղմում յերեխային և նա ավելի ու ավելի յեր խոնարհվում յերեխայի վրա: Իսկ յերեխան սաստիկ ճշում եր նրա գրկին:

Գիժ-Հոռոմսիմի կատաղությունը գնալով սաստկանում եր: Յերկու ձեռքերի սուր յեղունգները կարծես անզոր ելին նրա բոլոր բարկությունը թափելու: Նրան կատաղեցնում եր առանձնապես այն հանգամանքը, վոր Անանը համարյա թե ձայն չեր հանում. կարծում եր, թե ուրեմն հարսը բոլորովին ցավ չի զգում, մինչդեռ սիրտը հովացնելու համար ուզում եր, վոր Անանը ճշար, աղաղակեր, լաց լիներ, ոգնություն կանչեր, ուստի աշխատում եր խփել կամ կմշտել նրա մարմնի այնպիսի մի նըրքաղաց տեղ, վոր հարսը ստիպված լիներ վերջապես բարձրածայն արտահայտել իր ցավը: Բայց չե, Անանը համառորեն ձայնը փորն իր գցել և, նրա առջև խոնարհված, զսպած հառաչանքներ եր միայն արձակում, վոր Գիժ-Հոռոմսիմը հաղիվ թե լսում եր իր կատաղի ծկլթոցների և յերեխայի լացի մեջ:

Տեսնելով, վոր խփելով և կմշտելով վոչինչ չի լինում, Գիժ-Հոռոմսիմը պոկեց հարսի գլխից սպիտակ աղլուխը, բռնեց նրա ցանցառ մազերի յերկու հյուսերից մեկի ծայրից և ձեռքի ուժգին թափով ձիգ տվեց հանկարծ:

Անատ..., — յերկար ու սուր ճշաց Անանը և, սաստիկ ցավից

աչքերը փակելով, յետ ընկավ մեջքի վրա։ Նրա թուլացած ձեռքերը բաց թողին յերեխային։ Յերեխանը նրա գողից զլորվեց ընկավ գետնին և սկսեց ավելի ճշալ։

Հարսի սուր ճիչը, վերջապես, փոքր ինչ հովացրեց Գիտ-Հոռոմսիմի սիրտը։ Նա թողեց հարսի մազերը, վերցրեց յերեխային և, շարունակելով անհծքներ թափել, հոգնած նստեց թախտի վրա ու սկսեց ձեռքերի մեջ որորել յերեխային, վոր սուսկացնի։ Նրա պստիկ, չար աչքերը գեռ ևս պլազում եյին խելագարի կատաղությամբ, քրտինքը վրա յեր տվել նեղ ճակատին։ Նա հեռամ եր յերկար տեղ վազուծ մարդու նման։

Իսկ Անանը, աչքերը փակ, ընկած եր հատակին մեջքի վրա և նվում եր միալար հազիվ լսելի ձայնով։

\* \* \*

Ամառվա յերկաբատե, անտանելի տոթ որը նոր եր մթնել։ Պառավ Հեղնարը և նրա յերկու փոքրիկ թոռները—մեկը տղա, մյուսն աղջիկ—ծալապատիկ նստոտած ելին թախտի վրա և հայտնի չե՞ ճաշ թե ընթրիք ելին ուտում, վորովհետեւ իրենք ել չգիտեյին վորն ե իրենց ճաշը և վորն ընթրիքը։ Կապուլտ սուփրի վրա պլազում եր մի փոքրիկ լամպ, վոր չմաքրած ապակու միջից պղտոր լույս եր սփոռում նրանց հոգնատանջ, քրտնած յերեսներին։ Նրանց կերածը փոան սև հաց եր և կիսախակ մի ձմերուկ, վորի գույնը դժվար եր վորոշել՝ սպիտակ եր, թե դեղին։ Լամպի լույսն իր շուրջը հավաքել եր ահազին թվով մանր մըժեղներ, վորոնք պտույտ ելին անում տաք ապակու շուրջը, շատերն այրվում թափվում ելին ներքե, շատերն ել կպչում թաց ձմերկից։

Պառավ Հեղնարը ցամաքած, կուչ յեկած մի կին եր դեմքի անհամար խորշոմներով։ Հարատե չքավորությունն ու բախտի ծանը հարվածները ծռել ելին նրա մեջքը և իրենց անջնջելի կընիքը գրոշմել նրա դեմքին և թախծալի աչքերի մեջ։ Թոռները—քույր ու յեղբայր—վորք ելին և մնացել ելին պառավ տատի խընամքի տակ։ Այդ յերկու փոքրիկ յերեխաներն եյին, վոր պառավ Հեղնարին յեռանդ ելին ներշնչում ապրելու և աշխատելու Բայց պառավ Հեղնարը մի ավելի մեծ վիշտ ուներ։ այդ՝ յերկու վորքերի մեծ քրոջ—Անանի վիճակն եր իր կիսախելագար սկեսոր և նրանից վոչ պակաս վայրագ ամուսնու ձեռքին։

Պառավի մշտական պարապմունքը լվացարարությունն եր և

հաց թխելը։ Շատ լվացք անելուց և թոնրի մեջ հաց կող տալուց նրա դեմքի և ձեռքերի կաշին յեռացրած ջրի և թոնրի կրակի մեջ մըրկվել, չորացել, ճաքճաքել մաղաղաթ եր դարձել։ Լվացք անելիս փոքրիկ թոռներն ողնում եյին տատին։ մեկը փայտն ու տաշեղները խտտած, մյուսը կաթսան ուսած և լվացքի թարախը քարշ տալով առաջնորդում եյին լվացքի ծանր կապոցը շալակած տատին դեպի գետափ։ Յեվ այնուհետեւ, յերբ տատը կիզիչ արեցի տակ թարախի մոտ պալզած՝ ճմուռմ եր լվացքը, նրանք ծակ տոլչով ջուր եյին մատակարարում մերթ կաթսայից թարախին, մերթ գետից կաթսային։ Իսկ յերբ պարապ եյին մնում, աղջիկը դերիայի փեշերը շեքը հավաքած, տղան վարտիկը մինչև աղջ բերը վեր քաշած՝ մտնում եյին գետի վճիռ ջուրը և լպրծուն սալ քարերից ու խճից թումբեր կազմում։

Այդ յերեկո յել, ամրող որը կիզիչ արեի տակ գետափին անցկացնելուց և լվացքը, կաթսան ու թարախը տիրոջը հանձնելուց հետո, նոր եյին վերադարձել տուն և հոգնած ու քաղցած հաց եյին ուտում, վոր շուտով քննն և առավոտը վաղ-վաղ դարձալ գործի գնան։

— Նանի, վոր ուտես կորիզն ինձ տու—ասում եր թոռներից մեկը, ձմերկի կորիզները հավաքելով իր առջեւ։

— Սուտ ա ասում, նանի ջան, ինձ տու—ասում եր մյուսը նույնպես կորիզները հավաքելով իր առջեւ։

- Հրեղ, դու քիչ ունես—ասում եր առաջինը։
- Դու ավելի շատ չունես—առարկում եր յերկրորդը։
- Ուր ա, հը՛, ուր ա. շատ ըլի՛ քսանն, ելի՛։
- Քսանն ել կըլի, հըլա հարուրն ե։
- Հա վոնց չե. հարուրը հրեղ քունը կըլի ու։
- Դե, քիչ բասերաս մտեք, գլուխս ցավում ա,—բարկացավ տատն իրեն հատուկ բարեսրտությամբ։—Յանի ինչ եք տեսել եղ կորզի մեջ, վոր ամեն հետ իրար միս եք կրծում։ Կեսը մեկիդ կը տամ, կեսը մեկելիդ։

\* \*

Պառավ Հեղնարը կորիզը յերկու թոռների մեջ բաժանելու վրա յեր, յերբ հանկարծ ներս մտավ Անանը յերեխան խտտին։ Մտավ շտապով, հուսահատ, վճռական քայլերով։

— Նանի, ախր իմ մեղքը վոնց ընկար, վոր տարար ինձ են դժոխքը զցեցիր, — բացականչեց նա լացակումած, յերեխան

գրեթե զցելով թախտի վրա: — Քար եմ, յերկաթ եմ, վոր դիմանամ: Աստոծ ինձ ել մարդ ա ստեղծել, թե շուն...

Նա նստեց թախտի վրա և, սրտի փղձուկը չկարողանալով բռնել, սկսեց սաստիկ, ցնցողարար հեկեկալ, դեմքը ձեռքերով ծածկած:

Նանն իր յերկու պղտիկ թռոներով կորիզն ել մոռացավ, ամեն բան ել: Ակղբում, յերբ Անանը ներս մտավ այնքան անսովոր կերպով, պառավ Հեղնարը խիստ վախեցավ, բայց յերբ Անանի խոսքերից իմացավ բանը, մնաց նստած տեղը ցամաքած, լուռ ու վշտահար:

— Ել ի՞նչ արեց, աղջի—հարցրեց նա:

— Չես գիտի՞ ինչ կանի, — արտասանեց Անանը հեծկլտանքի միջից: Զանիս վրա ել տեղ չմնաց, վոր արենլվիկ չածեց, ել գլխիս վրա մազ չըմնաց, վոր չպոկեց, ել գլխումս դուդ չըմնաց, ենքան թակեց... մինչև յերբ... Մի հոգի ունեմ, զե են ա մի անգամ հանի, պրծնեմ ելի... թե չե, ել հալ կա, վոր դիմանամ...

— Այ, վոչ եր ըլել են որը, ու որ եր մթնել են որն իմ գլխին, վոր դու մտար եղ քարուքանդ տունը — հառաչեց Հեղնարը: — Քու սարար ըլողի ջանը կրակ ընկնի, վոնց վոր կրակ արնկել իմ ջանը: Ախր են զիժ սրտամհան ի՞նչ ա ուզում քեզանից, վոր ըտենց կրծում ա միսդ, շունը կրծի նրա միսը:

— Ի՞նչ ա ուզում — դառնությամբ արտասանեց Անանը, գըլխի աղլուխի ծայրով սրբելով աչքերը: — Են ա ուզում, վոր ասում ա՝ մի ուտի, մի խմի, մի հագնի, մի մաշի, հենց իմանասանանա ա թափվում ինձ հըմա յերկնքից:

— Բոր ելի գժվեց:

— Գժվեց թե ընենց... Առավոտը վեր կացավ, կորավ գընաց մեռելի թաղման: Չունքի ինքը չեր խմելու, չթողեց. վոր սամավար զցեմ: Յագորն ել խո առավոտը լիսանում ա թե չե, դրոգը լծում գնում ա, առանց չայ խմելու: Դե իմ գլուխը ջնանդամը, չայի հըմա սիրտս շատ ել չի գնում, ես երեխեն եր լաց ըլում, սոված եր: Չուտելուց ծիծս չորացել, կպել ա դոշիս: Գընացել հարեանից մի չայնիկ ջուր եմ քերել, յերկու կտոր շաքար եմ զցել, հաց ջրթել, ուտեցըրել, վոր անջախ ձենը կտրել ա: Սազ որը կորած եր: Իրիկնապահին քելեխը զահրումար արած, հարբած տրաքված տուն յեկավ ու եկած-չեկած՝ հըլա մի լավ անըծքակոխ արավ, յեննա վրա ընկավ թարիքին: Տեսավ յերկու կտոր շաքար պակաս ա, խո գիտաս, շաքարն ել ու ա-

մեն բան ել համբրած ունը տանը, վոնց թե, ասում ա, յերկու կտոր շաքար ես բանացրել առանց ինձ, վոնց վոր մի կատղած շունչ վրա պըծավ ու ջանիս վրա մի սաղ տեղ շթողաց -խփեց, գզզպեց, ծակծկեց... Զանս վոր բաց անեմ, չես կարա մտիկ անի. կասես կեծացրած շամփուրներով դաղղղել են...

Փղձուկը նորից բռնեց Անանին, բայց նա կարողացավ զըսպել իրեն:

Սրանից յետը, վոր սպանես ել, նանի, յես ել ընտեղ գնացողը չեմ, —ավելացրեց զողզող, բայց վճռական ձայնով. —Կը գընամ Քուռը կընկնեմ, կը խեղղվեմ, հոգիս սատանի փայ կանեմ ու ընտեղ չեմ գնա: Հերիք ա, հոգիս հրես եկել զեմ ա առել բկիս: Իմ մատաղ որերը սե ու մութ ա արել: Մի որ ուրախութին չեմ տեսել: Սաղ իրեք տարի, վոնց վոր շամփրի վրա գնես խրովես, ընենց խրովել ա ինձ, ինքը ջոկ, տղեն ջոկ: Ինքը ծեծել ջարդել, մսերո զզզել ա, հերիք չի, տղեն ել հարբած, տրբաքված եկել ա պակասը թամամացրել: Բնչի, ինչ եմ արել: Մի անլիզու հայվանի պես ընկած եմ ինձ հըմար. տալիս են՝ ուտում եմ, չեն տալիս՝ ձեն չեմ հանում: Սաղ որը հոգիս դուրս ա դալի Քոից ջուր կրելով, ձիու թրիքը հավաքելով, բակն ավլելով, տունը տեղափորելով, նրանց կարկատաններն անելով, ել ինչ են ուզում: Շունը, վոր շուն ա, շանն ել են չարչարանքը չեն տա, ընչոր ինձ. բա մի շան դադար ել չկամ: Հրես ես ըրեխի հըմար հոգի յեն տալիս, բա սրա հըմար ել ա խնայեն, ե, ինձ: Վհւէ, աստոծ ջան, —բացականչեց Անանը, արտասվալից աչքերը զցելով առաստաղին -- ինչ կըլի, հոգիս առնես պըծնեմ...

Նրա ձայնը բոլորովին դողդողաց և հանկարծ կտրվեց, զըլուխն ընկավ տախտակի պես հարթ կրծքի վրա և ուժգին հեկեկանքը նորից սկսեց ցնցել նրա վոսկրացած ուսերն ու մեջքը:

Փոքրիկ քուլըն ու յեղբայրը սուս արած նայում ու լսում ելին նրան մանկական լուրջ հետաքրքրությամբ. մանուկը չոչ անելով մոտեցել եր սուփրին, վերցրել ձմերուկի մի կլեպ և աշխատում եր կրծել իր նոր դուրս յեկած պստիկ ատամներով: Իսկ պառավ չեղնարը մնացել եր տեղնուտեղը ցամաքած, չիմանալով ինչ ասի, վոր գոնե մի քիչ միիթարած լինի սկեսոր և մարդու ձեռին այրված, դաղված թոռանը: Վշտից և կարեկցությունից նրա պառավ զլուխն որորվում եր սաստիկ և բարի աչքերը լըցվել ելին արտասուքով:

— Աղջի, ըտենց վոր խոսում ես, սաղ ջանս կրակ ա ընկ-

նում ախր,—ասաց նա լացակումած:—Ասում ես թե ելչես դնա  
ընտեղ, յիննա դրանով կը պրծնէս են կուպելու գժերի ձեռիցը:

— Չեմ պրծնի, ավելի լավ,—պատասխանեց Անանը, շա-  
րունակելով հեծկլտալ:—Սրանից ավելի ի՞նչ պտի անեն: Սպա-  
նե՞ն, թող սպանեն: Զանս ելա կը դնջանա: Ել խո ամեն որ դադ-  
դըզորիկ չեն ածի: Գշերները չեմ կարում քնի մղկտոցից, —ավե-  
լացրեց նա և արտասուքը նորից սկսեց զլուալով թափվել նրա  
աչքերից:

Պառավ Հեղնարն այս չկարողացավ դիմանալ: Նրա գլու-  
խը դադարեց որորվելուց, հանգած աչքերը վառվեցին հուսահո-  
տական վճռականության կրակով և պառավ մարմինն սկսեց  
դողդողալ ներքին բուռն զայրույթից:

— Լավ, մնա: Ել չգնաս, ել չգնաս են կապելու գժերի տուն  
—բացականչեց նա:—Յես նրանց աղջիկ չեմ տվել, վոր համ քո-  
ծի պես բանեցնեն, համ ել տակները դնեն, ջարդեն: Մուսի պես  
հալել մաշել են, հալվի ու մաշվի նրանց ջանը: Անտեր չես, յես  
հըլա չեմ մեռել: Կաց, ել չգնաս: Հալբաթ մի կտոր հաց ել քեզ  
հմար կը ճարենք, վոր...

Խոսքը չվերջացավ պառավի բերանում. գժված գոմշի պես  
ներս ընկավ մի ահագին մարդ, այնքան ահագին, վոր ներս ընկ-  
նելուն պես կասես լցրեց իրենով այդ փոքրիկ խրճիթը: Անանի  
մարդն եր, դրոգապան Յագորը, իր դրոգի պես կոպիտ ու ան-  
տաշ, իր հսկա ձիու պես խոշոր ու ջլապինդ: Գլխին գդակ չու-  
ներ, արեառ յերեսն այնքան թափամազ, վոր միրուք ու բեխեր  
կասես խառնվել ելին իրար, կուրծքը բաց եր, կապույտ արխա-  
լուզով և այնքան լայն շալվարով, վոր յեթե տոտերը հաներ  
անկրունկ յերկարաճիտ լափչիների միջից, կը կարծեյիր, թե կա-  
նացի շրջազգեստ ունի հազին: Կատաղությունից փալլում ելին  
նրա ահագին աչքերը թափամազ, սև հոնքերի տակ. մեծ քթի  
պնչերը փռնչում ելին հոգնած ձիու ոնդների պես լայնացած:

Կինը նրան տեսնելուն պես վայրկենաբար դադարեց լա-  
լուց, վեր թռավ տեղից և վազեց կպավ պատին մեռելի պես գու-  
նատված:

— Յես քու...—գորգոռաց մի սարսափելի հայհոյանք և Յա-  
զորը սպառնագին մի քանի քայլ արավ դեպի նա:

Պառավ Հեղնարը վեր թռավ տեղից և ուզեց կտրել նրա ճա-  
նապարհը, բայց նա ձեռքի մի թեթե շարժումով նետեց նրան  
նորից գեպի թախտը և իր հսկա հասակով գնաց կանգնեց վա-  
խից տերեկի պես թփրտացող կնոջ առջե:

— Վուէ, չխփես, Յագոր ջան... հոգուդ մեռնեւ չխփես, ջանըս ցավում ա,—աղաչեց Անանը գլուխը յերկարացրած և յերկու ձեռքով պինդ գրկած իր վուկրացած ուսերը:

— Չխփեմ, չխփեմ,—վորոտաց Յագորը կատաղի աչքերը փայլեցնելով նրա վրա: —Բա՛ ի՞նչ անեմ: Աչքերդ պաշեմ, վոր են պառազը քնած՝ թագուն վեր ես կացել, եկել, տունն անտեր թողել: Փախել ես, հա, տանից: Զառը-իհանդամը, թե փախել ես. — շատ ել դարդ չեմ անի քեզ հմար, ես երեխի՞ն ուր ես բերել: Հը՞: Խո չեմ ուզում ես սհաթին ճիվը ճիլցդ հանեմ, ճիճվի պես ճըխեմ վոտիս տակը: Հը՞: Ինձ չես ճնանչում: Ըըը՛, իես քու...

Յեվ մի ահագին բռունցք, կարծես յերկաթից ձուլված, ծանը ու դանդաղ հորիզոնական ձևով գնաց ու յեկավ դիպավ կնոջ կողքին:

Անանը մինչև անգամ չճշաց, այլ միայն հանկարծ բերանը բաց արեց, ներս ծծեց ողը մի տարորինակ հեքով, այնպիս, ինչպես ջրից հանած ձուկը, հետո որորվեց և կամաց, փալասի պես, վայր ընկավ գետին:

— Ա, քու սիրտը չմեռնի, են ի՞նչ արիր,—ճշաց Հեղնարը սարսափիած և վազեց ոգնության:

Յագորը մի ըոպե թափամազ հոնքերի տակից նայեց իր վոտների առջև թափալված կնոջ չոած աչքերին, հետո, շարունակելով հայհոյանքները, մոտեցավ յերեխային, վոր շարունակում եր կրծել ձմերկի կլեպը, վերցրել և առանց շտապելու դուրս գնաց:

Պառավ նանը խոնարհվեց Անանի վրա և սարսափից քարացավ:

Անանն ընկած եր գետնին՝ վորկորը տարորինակ կերպով վեր ցցած. չոած աչքերը նայում եյին առաստաղին տպակու բութ փայլով. բաց բերանից արյուն եր հոսում. հեքը կարծես քարացել եր այնտեղ:


---

Կնոջը սպանելուն համար մեղաղրվող դրոգապան Յագորը նախնական քննության ժամանակ դատական քննչի հարցուփորձերին պատասխանելով՝ ասաց.

—Մի մուշտի տվի, Ելի, ուրիշ բան խո չեմ արել:

---

ՍԵՎ ՓՈՂԵՐԻ ՏՈԿՈՍ



Նոր եր մթնել, վոր պառավ Մարանը պ ատրաստվեց քնելու թեև գիտեր, վոր մինչև կես-գիշեր շուռ ու մուռ պիտի դար անկողնում լվաներից և պառավական անքնությունից։ Դեռ բավական լուս եր, վոր գցել եր տեղաշորը։ Միշտ այդպես եր անում, վոր գիշերվա մթան մեջ նեղություն չտա իրեն։ Նավթ չուներ, վոր վառեր։

Պառկելուց առաջ մոտեցավ խրճիթի պուճախին, ձեռքով շոշափեց և տեսավ, վոր հավերը նստած են թառին, թեև շատ լավ գիտեր, վոր նրանք ամբողջ որը հարեան հավերի և աքլորների հետ ամբողջ թաղը տակնուվրա անելուց հետո յերեկոյան, սովորական ժամին, յեկել թառել եյին իրենց տեղը։ Յերբեք չեր կարող հանգիստ տեղաշոր մտնել, մինչև վոր չստուգեր հավերի ներկայությունը, վորովհետեւ նրա ապրուստի համարյա միակ աղբյուրն ու հույսը այդ յերկու հատիկ համեն եր, վորոնց սիրում և խնամում եր իր աչքի լուսի պես։ Հավերը ձու եյին ածում, պառավ Մարանն այդ ձվերը տանում եր թաղի մանրավաճառի մոտ և փոխում հացի կամ կուտի հետ։ Այդպիսով հավերը համ իրենց եցին պահում, համ պառավ Մարանին։

Հավերը նրա ձեռքի շոշափումից շարժվեցին և կրկոց արձակեցին։ Այնուհետեւ պառավը կատարեց իր սովորական աղոթքը։ Յերեսն անկանոն կերպով խաչակնքելով յերեք անգամ ծունը դրեց խրճիթի խորթուրորթ հատակի վրա, ինչվոր մրմուլով քթի տակ, հետո հանվեց և պառկեց։ Խոնավ անկողինը մի անախորժ սարսուռ ազդեց նրա ցամաքած մարմնին։ Նա կուշ յեկավ և վերմակը քաշեց գլխին։ Ու մտածմունքները, տիսուր ու անմխիթարական, նորից պաշարեցին նրան։

Մենակ, մեն-մենակ եր ապրում պառավ Մարանն այդ կիսախարխուլ խրճիթում, վոր մարդուց մնացած միակ հարստությունն եր։ Վաղուց, շատ վաղուց եր մեռել մարդը, վոր մի արբեցող խարազ եր։ Մեռել եր շատ հիմար կերպով։ մի անգամ գիշերով լավ կոնծած, բայաթի յերգելով տուն դալիս ընկել եր

փողոցում գլխի ծածկը փլած արտաքնոցի հորը և մինչեւ հանելը խեղդաման յեղել գազերից։ Չնայելով, վոր կինը շատ քիչ լավ ո՞ր եր տեսել նրա ձեռքին, բայց և այնպես յերկար ժամանակ սուգ եր անում նրա համար և այժմ ել առանց խոր հոգոց հանելու չեր կարողանում հիշել նրան. ախր ինչ ել վոր լիներ, ելի այն ժամանակ մի կենդանի շունչ կար մոտը, թեև ծեծ ու հայնոյանքով—բայց պահող-պահպանող ուներ։

Ճիշտ ե, այժմ ուներ մի վորդի, բայց նա ել փուչ-փչանալու մեկն եր, գող ու ջերգիր, վոր որերով ու շարաթներով տան յերես չեր տեսնում, մորը չեր նայում, այնպես վոր յեղած-չեղած—մեկ եր։

Վորդու փչությունը թունավորել իր պառավ Մարանի առանց այն ել թշվառ կյանքը։ Քանի-քանի անգամ արցունքն աչքերին փորձ եր արել խրատելու Արտեմին, վոր հեռանա վատ ճանապարհից, մի գործի կպչի, պսակվի, որինավոր տուն ու տեղ դնի, որինակ եր բերում հարեան Ռսանի տղա թարախ ման ածող ծականին, վոր նրա հասակակիցն եր և կարգին ընտանիք եր պահում, բայց հենց առաջին խոսքի վրա Արտեմն այնպես չոել եր նրա վրա իր ահարկու աչքերը, այնպես բղավել նրա վրա, վոր խեղճ պառավն իսկույն ձայնը փորն եր գցել։

«Ա-խ, վորդի, վորդի..., հառաչեց պառավ Մարանը և շուռ յեկավ մյուս կողքի վրա։—Ես հավերն ել վոր չունենամ, յարաբ ինչ կըլի իմ չարեն։»

Որամեջ կամ յերկու որը մի անգամ վերցնում եր հավերի ածած ձուն և գնում թաղի մանրավաճառի մոտ, վորը զանազան մանրուքի և մրգեղենի հետ հաց ել եր ծախում, ոգտվելով այն հանգամանքից, վոր թաղում հացթուխ չկար։

— Բաղդո ջան, երկու ձվի հաց տաս,-ասում եր նա խընդրական յեղանակով։

Մանրավաճառը ձվերը մեկ-մեկ շարժում եր ականջի մոտ։

— Ես մեկը լակ ա, Մարան նանի,—ասում եր նա կատակով։

— Վույ չե, Բաղդո ջան, ըսոր են ածել։ Յես ըսկի լուկ ձու կունենամ։

— Մարան նանի, ինչ կանես, վոր հավերիդ ձվամանը չուրանա, — շարունակում եր կատակ անել մանրավաճառը, մի ֆունտ հաց կշռելով։

— Վույ, մի ասի, Բաղդո ջան։ Աստոծ վոչ անի. ել իմ պահողն ով կըլի։

— Բա տղեղ:

Տղիս երեսը սևանա, ըսկի տեսնում եմ վոր:

Սակայն, ի հարկե, տարին տասներկու ամիս յերկու հավի ձվով ապրել չեր կարելի: Աշխարհը չեր չորացել. կային բարի հարեանները վորոնք յերբեմն-երբեմն չեյին խնալում իրենց տաք կերակրից նրան ել բաժին հանելու, կամ ուրիշ բանով ոգնելու: Ինքն ել, վորքան ներում եյին ույժերը, բուրդ եր մանում, առավոտից մինչև յերեկո ածխավաճառի խանութում նստած՝ ածուխի մրոտ, ծակծակ տոպրակներ կարկատում:

Հավերից մեկը շարժվեց և քնաթաթախ մի խուլ կրկոսց արձակից:

— Զան, ջան, մատաղ ջան,—արտասանեց պառավ Մարանը և հորանջեց:

\* \*

Կիս գիշերից բավական անցել եր:

Յերկար տանջվելուց հետո Մարանը նոր եր խոր քնի մեջ ընկել, յերբ հանկարծ ինչ-վոր դրնդրնգոց արթնացրեց նրան: Վախեցած բարձրացրեց գլուխը և նայեց մթության մեջ:

Դուռը ծեծում ելին, ըստ յերեռոյթին, բռունցքով ու վոտով և այնպես պինդ, վոր դուան հետ խրճիթն ել ամբողջ շարժում եր տեղից:

— Ո՞վ ա,—կանչեց պառավը լեղապատառ:

— Զահրումար ու չոռ ա, բաց արա, ելի,—լսվեց տղամարդու մի հուժկու ձայն, և խրճիթը նորից դրնդաց դուանն իջեցրած վոտի մի կատաղի հարվածից:

— Արտեմ... Այ քու սիրտը չմեռնի, լեղիս ճաքեց,—ասաց պառավը, վեր կացավ, մթության մեջ խարխափելով մոտեցավ դուանը և, հազիվ գտնելով սողնակը, բաց արավ:

Գարնանային պարզ գիշեր եր: Դուան առջե կանգնած եր մի պարթե յերիտասարդ գդակը ձեռին:

— Եսքան թրիկթրիկացնում եմ, չես իմանում,—գոռաց նա մոր վրա:

— Քնովի անցել, Արտեմ ջան,—խեղճ-խեղճ պատասխանեց մայրը:

— Այ, ընենց քնով անցնես, վոր ել վեր չկենաս,—ասաց Արտեմը և, լայն շեք տալով, ներս մտավ:— Ճրագ վառի, —հրամայեց նա:

— Նավթ չունենք, Արտեմ ջան:

— Բա մթնումն ես նստում:

— Բա ի՞նչ:

— Գիտ ա անտեր-մունդոփելը<sup>o</sup>: Տո, երկու գրոշի նավթն ի՞նչ  
ա, վոր չես առնում:

— Երկու գրոշի տվողն ել դու յես, վոր չես տալի, վորդ՝  
ան առնեմ,—վրա բերեց պառավը մի քիչ վրդովված:

— Հավերդ սատկել ե՞ն, ել ձու չեն դնում:

Պառավը հանկարծ վառվեց:

— Յեքա տղեղ ըտեղ սարի պես կանգնած, անխոս թռչուն-  
քին ես ասում,—կանչեց նա զայրագին:—Մերդ եմ հալից-ջանից  
ընկած, տարի ա անց կենում, յերեսիս մտիկ չես տալի, ելի-  
մենձ սրտովը դու յես: Ամոթ ելա քաշի, ե: Հավերս ինձ հաց են  
տալի. դու ինչ ես տալի, վոր հըլա սատկացնում ել ես:

— Դե, շատ մի ճղճղա, թե չե, հը՝,—սպառնաց Արտեմը և  
մոտեցավ նրան:

Վորդին հասակով բարձր եր մորից գրեթե կրկնակի: Պա-  
ռավն իր գլխի վերև տեսավ մթության մեջ փալող յերկու ահար-  
կու աչքեր և ողի մեջ քարացած մի բռունցք: Միենույն ժամա-  
նակ նրա քթովը դիպավ գինու ծանր հոտ:

— Դե, ի՞նչ անեմ, Արտեմ ջան,—ասաց նա նորից խեղճա-  
ցած:—Սիրտս մղկտաց, վոր...

— Սասդ,—գոռաց նորից Արտեմը:—Քնա տեղաշորս զցի:

Պառավը սուս ու փուս շտապեց նրա հրամանը կատարելու:  
Մթության մեջ խարխափելով և տնքտնքալով մի կերպ զցեց  
Արտեմի անկողինը:

Արտեմը ձեռաց հանվեց և պառկեց: Պառկելուն պես սկսեց  
խոմփացնել:

—Ե՞ս, յես ել կասեմ վորդի ունեմ ու ապրում եմ, Ելի, աշ-  
խարքի յերեսին, վայ իմ որին, վայ,—հառաչեց Մարանը և նո-  
րից մտավ անկողին:

Ծեզը հեռու չեր: Փոքրիկ պատուհանի մութ ապակիները  
սկսեցին վորոշակի յերեալ, խրճիթը սկսեց քիչ-քիչ լուսավոր-  
վել:

Հավերը շարժվեցին թառի վրա, մեկը մէռսի յետեից բարձ-  
րացան վոտների վրա, թափահարեցին թերը, սկսեցին կտուց-  
ներով քորել թերի և կրծքի տակ, հետո վզներն յերկարացրին  
դեպի ներքե, նայեցին դես ու դեն, ցնցելով մսեղ կարմիր կա-  
տարները, և հանկարծ ահազին կրկողով ցած թռան, ողի մեջ  
ցանելով իրենց թափվող փետուրները:

Պառավը, վոր լուսաղեմին նորից քնով եր անցել, աչքեր բաց արեց, տնքտնքալով վեր կացավ և հագավ իր սև լաթերը:

Հավերը մոտեցան նրան և սկսեցին ավելի բարձր կրկուալ:

— Հա, հա, ձեր աչքն ել կարեմ. ես ա տալիս եմ,—փընթփնթաց պառավը և ուզում եր մոտենալ կուտի տոպրակին, բայց հանկարծ կողմնակի մի հայացք ձգելով քնած վորդու վրա, տեսավ վերսակը մի կողմ ե ընկել և նրա մազոտ կուրծքը բաց և մնացել: Մոտեցավ և զգուշորեն վերմակի ծայրը քաշեց նրա կըրծքին:

Չնայելով հավերի բարձրաձախ կրկուոցին, Արտեմը խոր քնած եր:

Միքանի ըոպեյից հետո հավերը, կուտն արդեն կերած, ջուր խժած, ուզում եյին դուրս գնալ: Պառավը մեկ-մեկ տապտապ արեց, ճկուացրեց և վերցրեց տեսնելու ձու ունեն թե վոչ: Այնուհետեւ դուռը բաց արեց և դուրս թողեց նրանց:

\* \* \*

Որն արդեն ճաշ եր դառել, վոր Արտեմը զարթեց: Անկողնի մեջ նստած՝ նա դեռ ճլմկոտաց, ճրթճրթացնելով թիկունքի և մեջքի վոսկորները, մատների խաղերը կոտրատեց, հետո վոտները կախեց թախթից և սկսեց ծանր ու բարակ հագնվել, անդադար հորանջելով:

— Զայ չունենք,—հարցրեց մորը, վորը դուրսը դռան շեմքին նստած, ինչ-վոր լաթ եր կարկատում:

— Հա, վոնց չե,—հեգնեց պառավը.—հրեղ սամավարը քըլթքլթում ա, չայ-շաքարն ել, վոր դրկել ելիր, հրեն փթում ա թարեքումը:

Արտեմը ծիծաղեց:

— Բա վոր ըտենց ա, նանի, յես ես ա գնում եմ մի գըլքանքա չայ առնեմ, մի գլուխ ել շաքար. թե գործլի ել չունես, մի բեռ ել գործլի:

— Տնազը քու գլխին զցի, քու,—պատասխանեց պառավը:

— Առավոտը հրեն Մարգարանք են կանչել, վոր մի թաս չայ խմեմ: Վոր ամոթ չես քաշում, ինչ ասեմ:

Արտեմը հոնքերը կիտեց, վեր կացավ. նախ մի, հետո մյուս վոտը դրեց թախթի վրա, խնամքով դարսեց լերկարաճիտ չուստերի ծալերը, հետո վերցրեց խելադան և սկսեց լերեսը լվանալ ուղղակի հատակի վրա, վոտներն իրարից հեռու դարսած: Յերեսը գրպանի աղլուխով սրբելուց հետո զրպանից հանեց մի կոտրած

սանր, սանրեց մազերը, առանձին խնամքով վոլորեց ճակատի վրա թողած յերկար խոպոպիկը, հետո առավ գդակը, թափ տըլեց ձեռքով, ծուռ դրեց ծոծրակին և դիմեց դեպի դուռը։ Դուն մոտ կանգ առավ հանկարծ և նայեց կարկատանի վրա կոացած մոր մեջքին։ Ու նորից տրամադրվեց կատակ անելու։

— Լավ, նանի, չայ խո չտվիր, — ասաց։

— Քնա հրեն տրախտիրը՝ չայ ել կը խմես, արադ ել, — պատասխանեց պառավը, առանց զլուխը կարկատանից բարձրացնելու։

— Վայ, նանի, նանի, գրողը քեզ տանի, — կանչեց Արտեմը ծիծաղելով, լայն շեք տվեց մոր վրայով և դուրս գնաց։ — Հը, ի՞նչ ես քիթ ու մոռւթդ հավաքել, — ասաց, հանկարծ կանգնելով մոր առջե։ — ուզում ես լոթիանա փող բախշեմ։

— Փող ունես, տար արգանով քիփ արա, ինձ խի՞ կը տաս, — բրթմնջաց պառավը միշտ զլուխը կախ կարկատանի վրա։

— Հայ գիտի, նանի, աչքդ վոնց վախեցել ա։ Այ թե չեմ տա։ — Արտեմը ձեռքը կոխեց սև սատինի արխալուղի գրպանը և սկսեց դրամները չրխչրխկացնել գրպանի մեջ պառավի ախորժակը գրգռելու համար։ — Հը, տամ։

Դրամների չրխչրխկոցը, հիրավի, իր մոգական ազդեցությունը ունեցավ պառավի վրա։ Նա կարկատանը մի կողմը դրեց և ձեռքերն աղերսագին մեկնեց դեպի վորդին։

— Վհւէ, տու, տու, Արտեմ ջան, քեզ մատաղ լինի նանը։

Արտեմը մի բուռ սև ու սպիտակ դրամներ հանեց գրպանից և այս անգամ սկսեց չրխչրխկացնել բուան մեջ։

— Տամ, ասում ես։

Պառավը մի քիչ բարձրացավ նստած տեղից՝ ձեռքերը միշտ պարզած դեպի վորդին։

— Արտեմ ջան, արեիդ մեռնի նորնը. հենց իմանաս ժամի դուանը նստած մի աղքատ եմ։

— Լավ, վոր տամ, ի՞նչ կանես։

Պառավը շտապով վեր կացավ։

— Այ ինչ կանեմ, Արտեմ ջան։ Առաջ մի քիչ բուրդ կառնեմ, թել կը մանեմ, գուլպա կը գործեմ քեզ հըմար ել, ինձ հըմար ել։ Յեննա սապուն կառնեմ, կը լվանամ քու փոխնորդն ել, իմն ել։ Յեննա նավթ կառնեմ, վոր գիշերը գաս՝ վառեմ։ Յեննա չայ-շաքար կառնեմ, մի քիչ ել գործի, վոր առավոտը վեր կհնաս, չայ խմեցնեմ։ Յեննա...

— Վահ, վահ, ե՛, չհատափվ, — բացականչեց Արտեմը:  
— Վժնց հատնի, Արտեմ ջան, քիչ պակասութին ունե՞նք,  
— ասաց պառավը: — Հըլա հավերի կուտը չասեցի: Բա պանիրը.  
քանի վախտ ա սրտով պանիր եմ ուզում:

— Պանիր չե, հա, բիշկեթ-կատլետ չես ուղի՞, — ասաց Արտեմն այս անգամ արդեն առանց կատակի: — Անտեր-մունդոփիկ, դորթ խո փող չե՞մ կտրում: Դե, փեշդ բաց արա, ու ընչոր կըտամ ձեն չհանես, թե չե...

Պառավը մի քայլ մոտեցավ վորդուն և փեշը դեմ արեց՝  
աչքերն անհամբեր տնկած նրա ձեռքին:

Արտեմը բաց արեց բուռը, մեկ-մեկ ջոկեց սպիտակ դրամ-ները, գրպանն ածեց և մնացած սև փողերը թափեց մոր փեշը:

— Հ'ը, ել չասես, թե փիս տղա ունես:

— Վ՛ուլ, չե, չե, լավն ես, լավը, Արտեմ ջան: Վ՛ուլ, արեդ ապ-րի, Արտեմ ջան: Վ՛ուլ, խնդաս ու խիթարվես, Արտեմ ջան:

Պառավը նորից նստեց դռան շեմքին, գոգը բաց արեց և  
սկսեց համրել դրամները: Ուրախությունից ձեռքերը դողում  
ելին:

Արտեմն ինքն ուրախացել եր նրա ուրախության վրա: Նա  
սպազեց մոր առջեւ և ժպտերես նայեց նրա դեմքին:

— Հ'ը, տվի՞, թե չե, — հարցրեց:

Տվիր, տվիր, Արտեմ ջան: Վ՛ուլ, դու շատ ուրախանաս,  
վոնցոր ինձ ուրախացրիր:

Արտեմը ծիծաղեց, թեթևակի խփեց մոր ծնկանը, վեր թը-  
ռավ պազած տեղից և հեռացավ լայն ու չափավոր քայլերով,  
վորի ժամանակ նրա շալի չուխայի ծանր փեշերը ծափ եյին տա-  
լիս յերկարաճիտ չուստերին:

\* \* \*

Անցավ մոտ յերկու շաբաթ:

Պառավ Մարանն ապրում եր ելի այնպես, ինչպես առաջ:  
Արտեմի տվուծ փողերն ինչքան ել վոր խնայողաբար եր ծախսել,  
ելի շատ շուտ ելին հատել: Պառավը զարմանում եր, վոր այդ  
փողերով վոչ մի փոփոխություն չեր կատարվել իր կենցաղի մեջ:  
Նրա ստացած միակ շոշափելի ոգուտն այն եր, վոր այդ ժամա-  
նակամիջոցում տաս-տասնուհինդ ձու յեր յետ գցել թուխս նըս-  
տեցնելու համար:

Մի որ Արտեմը կրկին յեկավ: Առվորաբար, յերբ տունը  
միտն եր գցում, գալիս եր կես գիշերից անց, շատ անգամ լու-

սադեմին. բայց ալս անգամ այնքան վաղ յեկավ, վոր պառավ Մարանը գեռ անկողին չեր մտել. Այդ բանը խիստ զարմացրեց պառավին:

— Արտեմ ջան հիվանդ իսո չե՞ս,—հարցրեց նա անհանգըստացած:

Արտեմը չպատասխանեց:

Մարանը խրճիթի կիսախավարի մեջ աշխատեց լավ դիտել վորդու դեմքը, բայց վոչինչ չկարողացավ տեսնել, բացի այդ դեմքի խավար ուրվագծից: Շտապեց լամպը վառել: Հետո մոտեցավ վորդուն:

Արտեմն յերեսն ի վեր պառկել եր թախտի վրա, ձեռները գլխի տակ դրած:

Պառավը խոնարհվեց նրա դեմքի վրա և վախեցավ. Արտեմի դեմքը սաստիկ մոայլ եր, աչքերը պլաղում ելին. յերեսում եր, վոր խիստ վատ տրամադրության մեջ եր:

— Արտեմ ջան,— շնչաց մայրը:

— Հը,— հանկարծ մոնչաց իր հուժկու ձայնով և աչքերը վոլորեց մոր վրա:

— Բնչի՞ յես ըտենց,—հարցրեց պառավը յերկյուղով:

— Մի խոսացնի, թե չե՞ս ջգրած սրտովս մի քացի կը տամ, վոր տեղն ու տեղդ բանհոգի կը լես,—արտասանեց Արտեմը հանդարտ, բայց սարսափ ազդող ձայնով և նույն իսկ բարձրացրեց վոտը:

Մայրը կծկվեց և սուս ու փուս հեռացավ:

Տիրեց յերկարատե լոռություն:

Ճրագի լույսից և խոսակցության ձայներից հավերը դարբել ելին: Թառի վրա նստած, պլղել ելին իրենց կլորիկ աչքերը և, ըստ յերեսույթին հետաքրքրված ճրագի անսովոր լույսից, դես ու դեն ելին նայում:

Պառավը, թախտի ծայրին կուչ յեկած, մտածում եր, թե ինչ եր պատահել Արտեմին: Հիշեց անցյալից մի դեպք, յերբ վորդին նույն տրամադրությամբ տուն եր յեկել. բայց այն ժամանակ պատճառը չծածկեց. ասաց, վոր դումար խաղալիս շատ փող եր տարվել: Յերեխ հիմա յել այդպիսի մի բան կար,—մտածեց պառավը և ուզեց մխիթարել վորդուն:

— Արտեմ ջան, նավթը քու բախշած փողովն եմ առել, այ, — ասաց նա, տեսնելով, վոր վորդին, մտածմունքի մեջ խորասուզված, մոայլ հայացքով անթարթ նայում ե լամպին:

Արտեմը ձայն չհանեց:

— Քանի վախտ ա առել եմ, հա. քեզ հըմար եյի պահում, վոր գաս վառեմ,—ավելացրեց պառավը:

Արտեմը դարձյալ լուռ մնաց:

— Քիչ չայշաքար ել եմ առել, առավոտը չափ կը խմացնեմ,—նորից խոսեց պառավը:

Արտեմն անշարժ պառկած եր միշտ միևնույն դրության մեջ: Կարծես չեր ել լսում մորը:

Պառավի սրտին ղիպավ, վոր վորդին վոչ մի ուշադրություն չի դարձնում իր խոսքերին:

— Թե քունդ տանում ա, ասա տեղաշորդ զցեմ,— ասաց նա նեղացած, յերկար լուռթյունից հետո:

Արտեմը պատասխանելու տեղ մութաքան քաշեց գլխի տակ, կուռը զցեց յերեսի վրա, և մի քանի լուսկելից հետո լսվեց նրա խոմֆոցը:

Մարանը հին, կեղտոտ մթելով ծածկեց նրան զգուշորեն, վոր քունը չխանգարի, լամպը հանգցրեց, կատարեց իր սովորական աղոթքը և անկողին մտավ:

«Եղ ա, փողերն ելի տանուլ ա տվել»—վճռեց նա մտքումը դարդակալած: Այն ինչ՝ հույս ուներ, թե վորդին առավոտյան նախորդ անգամվա պես փող կը տա իրեն:

Ծեզը նոր եր բացվում, փոքրիկ պատուհանի մութ ապակիները նոր-նոր սկսել եյին պարզվել, յերբ հավերի ոտարոտի կրկոցը հանկարծ զարթեցրեց պառավին: Նա գլուխն արագ բարձրացրեց և նայեց թառի կողմը. այնտեղ մթնաշաղի մեջ նըրա քնաթաթախ աչքերին հաղիվ հազ նշմարելի յեղավ մարդու մի սև ուրվագիծ:

— Եղ ով ես,— աղաղակեց պառավը սաստիկ վախեցած և մեքենայարար նստեց անկողնում:

Մարդու ուրվագիծը շարժվեց դեպի դուռը: Լսվեց սոզնակի շրխկոցը: Դուռը բացվեց: Մարդու ուրվագիծը մի վայրկէան յերեաց վաղորդյան դալուկ լույսի մեջ և չքացավ: Դուռը բաց մը-նաց: Հավերի կրկոցը լսվեց դրսից և հանկարծ լոեց:

Պառավին թվաց, թե յերազի մեջ ե: Նա վրա ընկափ և դողդող ձեռքերով սկսեց շոշափել Արտեմի պառկած տեղը թախտի վրա: Տեղը դատարկ եր, խելագարի պես թռավ թախթից և վազեց դեպի թառը: Թառը նույնպես դատարկ եր:


— Վայ, քու սիրտը չմեռնի, Արտեմ, ես ի՞նչ արիր, — ճը-  
շաց պառավը և, շտապով դեյրան գցելով զլխին, դուրս ընկավ:

Ու հեալով, անդադար սայթաքելով սկսեց վաղել ամայի  
փողոցի յերկարությամբ, առանց զգալու, վոր սուր սուր խճաքա-  
րերը ծակում են իր շորիկ-մորիկ մերկ վոտները: Հետո, այլես  
չկարողանալով շունչը յետ բերել, կանգ առավ, նստեց հենց  
այնտեղ, փողոցի մեջտեղը, և սկսեց թակել ծնկներն ու լալ ա-  
ռանց արտասունքների:

Արտեմը չքացել եր:



ԱԴԱՄԱՄՈՒԹԻՆ



Շուշանը, —մի պստիկ, լղար կի՞ն—կուչ եր յեկել իրենց տան  
անկյունում։ Այդ տուն կոչվածը մի բավական մեծ խրճիթ եր,  
վոր յերբեմն տիրոջ կթան կովերի համար գոմի տեղ եր ծառա-  
յում։ Պատերն այնքան խոնավ ելին, վոր քիչ եր մնում ջուր կա-  
թեր։ Գետնից բավական բարձր գտնված մի հատիկ լուսամուտի  
չորս ապակիներից յերկուսը կոտրված ելին և տեղը թղթեր ե-  
լին կացրած։ Ներսն այնքան մութն եր, վոր ցերեկվա լույսից  
մտնողը պետք ե մի քանի բովե սպասեր, մինչև վոր բան տես-  
ներ։ Սակայն դրսից լույսը մտնելուն քիչ չելին ոգնում և հին,  
փտած դռան տախտակները, վորոնք ժամանակի ընթացքում չո-  
րանալով՝ մի մի մատ հեռացել եյին իրարից և իրենց արանքնե-  
րից լույսի զուգահեռական գծեր ելին շպրտում մինչև հանդեպի  
պատը։

Աշուն եր։ Յուրա քամին շրխկարխկացնելով շարժում եր  
դուռը և սվավալով ներս մտնում նրա արանքներից։ Լուսամուտի  
յերկու կոտրված ապակու տեղ կացրած թղթերն ուռչում փքվում  
ելին դեպի ներս, դողում դողդողում ելին և ապա հանկարծ դե-  
պի դուրս փլխվում շառաչյունով։

Շուշանն ամբողջ մարմնով դողալով կուչ եր յեկել հնամաշ  
լաթերի վրա և վերմակի նմանություն ունեցող մի ինչ վոր բան  
ել վրան եր առել։ Նա տնքուտ եր և քամու կատաղի վոռնոցի ու-  
դուան շրխկարխկոցի մեջ հազիվ եր լավում նրա տնքոցի ձախը.  
յերբեմն ել ջղաձգաբար կծկվում եր, ատամները պինդ հուպ տա-  
լիս իրար և մի-մի յերկարատե սուր ճիչ արձակում։

Նա յերկունքի մեջ եր։ Հազիվ յերեսուն տարեկան, սրղեն  
չորս վորդի ուներ և մեկն ել շուտով լույս աշխարհ պիտի գար-  
Ռում համար, ի՞նչի համար։ Ի՞նչ որումն եյին արդեն յեղածները,  
վոր մեկն ել պիտի ավելանար։

Տավար քշող եր Շուշանի մարդը։ Ղասարները Սաղում տա-  
վար ու վոչխար ելին առնում, տալիս եյին կարապետին, և նա  
քշում եր դեպի սպանդանոց, վորտեղից այնուհետև մորթած մը-  
սերը ֆուրգոնի մեջ ածած, ինքն ել վրեն բազմած բերում հանձ-

նում եր տերերին։ Կամ թե հավատացյալ մարդիկ մատաղացու ելին առնում և տալիս նրան, վոր տանի մորթի կամ մատաղ անողի տանը, կամ վորեն հեռավոր սրբի դռանը։ Որերով և շարաթներով տան յերեսը չեր տեսնում կարապետը, այնպես վոր ընտանիքի ամբողջ հոգսը Շուշանի վրա յեր։ Նա թել եր մանումնինած զործում, տոպրակներ կարում, թուրք վաճառականի խա, նութում նուշ ու ընկույզ կոտրում։ Բայց և այնպես նրա վաստակածն այնքան քիչ եր, վոր հազիվ հաղ բավականանում եր տան վարձը տալու և ցամաք հաց առնելու։

Կարապետի ընտանիքը դառն որեր եր քաշում մանավանդ ձմեռը, յերբ զործ հազիվ եր ճարվում, յերբ հարկավոր եր տաք հագուստ, վառելիք, մի քիչ լավ սնունդ։ Զմեռն այնպես անցնում եր, վոր նրանց քուրովին գրեթե յերբեք չեր տաքանում։ Ինքը՝ կարապետը մի հին քուրք ուներ և կոլոլվում եր մեջը, բայց կնոջ ունեցածը մի չթի դերիա յեր հազար տեղ կարկատան զցած և մեկ ել մի ցեցակեր շալ, իսկ յերեխաները տկլոր-չփլախ վսպմագում ելին ցրտից։ Նրանց կերակուրն ել յերբեմն սպանդանցից կարապետի բերած տավարի մսազերծ վոսկորներն եյին լինում, վոր նրանք խաշում և խպշտում եյին ջուրը։

Չորս յերեխաներից ամենամեծը տղան եր, մոտ տաս տարեկան։ Հայրը սկզբում նրան մանրավաճառի մոտ աշակերտ տրվեց. շաբաթը բերում եր 20 կոպեկ, բայց շատ չկացավ, փախավ և սկսեց պարապ-սարապ թրե գալ իր նման փոքրիկ փողոցային յերեխաների հետ։ Հոր ծեծը չազդեց նրան. տնից ել փախավ և ծնողները չեցին իմանում վորտեղ և նա որը մթնացնում և գիշերը լուսացնում։ Վերջապես հայրը մի անգամ տեսավ, վոր մի վոստիկան նրա թեփից բռնած-տանում և նրան վոստիկանատուն։ Նրան բռնել եյին գողության համար։

Սեղրակը (այդպես եր կարապետի վորդու անունը) սպըրդնել, թուրքը ցամաքել եր. բայց վոստիկանի հետ գնում եր համարձակ քայլերով, տղամարդու պես։ Նա տեսավ հորը, բայց ձայն-ձպուտ չհանեց։

— Հախդ ա, շան վորդի—ասաց հայրը և անցավ գնաց։

Այդ բոպելին նա, մի կարճ ճիպոտ ձեռքին, մի քանի վոչխար եր քշում։

\* \* \*

Աշնան քամին վոռնում եր դուրսը։ Շուշանը տնքում եր ներսը։ Յերեխաներից յերկուսը, մեկը յերեք, մյուսը չորս տարե-

կան, ծալապատիկ նստած ելին խոնավ գետնին փռված մի հնամաշ խալիչի վրա և վոտով-զլխով ծածկվել ելին հաղար ու մի ծակուծուկ ունեցող մի հին, դեղնած յափնջու տակ: Այդ յափընջին թուխս նստած հավի գեր եր կատարում, իսկ նրա տակ ցրտից պատսպարված յերեխաները ճուտերի ելին նման: Տեղը տաք եր և նրանք խաղում ելին իրար հետ. յափնջու տակից լսվում ելին անհոգ քչփչոցի և յերբեմն ծիծաղի ձախներ: Քամու կատաղի ժամանակ, յերբ դուռը սովորականից ավելի յեր չըլսչը կում, նրանք հանկարծ զլխներից լետ ելին քաշում յափնջու ծայրը, նայում ելին դուռն այնպիսի մի հայացքով, վոր կարծես թե մարդու ելին սպասում և, տեսնելով վոր վոչ վոք չկա, ցըրտից սարսուելով յափնջին նորից զլխներին ելին քաշում և շարունակում իրենց յերեխայական քչփչոցը:

Դուռը բացվեց և շտապով ներս մտավ վոտարորիկ, զլխաց, զզզզված մազերով 7—8 տարեկան մի աղջիկ: Սառը քամին խանձել եր նրա դեմքը, ձեռքերը և մերկ վոտները կապտել ելին: Շալակին մի տոպրակ ուներ: Մի վոտը գետնին դիմհար տալով, ցրտից սառած ձեռքերը հազիվ կարողացավ քամու ուժգին հոսանքի դեմ յետ դուռը և ներսի սողնակը զցել:

Յափնջին նորից շարժվեց, և յերկու փոքրիկներն ուրախական ծղրտոցով վողջունեցին իրենց քրոջ գալուստը: Նույն ըռպելին յափնջին մի կողմը թուավ, և արդեն վոտի վրա ելին յերկու գրեթե մերկ յերեխաներ ուրախ, յերջանիկ դեմքով: Ցուրտը մոռացան նրանք, վորովհետեւ հացի հոտ առան:

— Վայ, ջանս-մանս, Սոնեն հաց ա բերել,—ուրախությունից պար յեկավ մեծը:

— Վայ, ձանս-մանս, Սոնեն հաց ա բերել,—կապկի պես կրկնեց փոքրիկը:

Սոնեն, դուռը փակելուց հետո, շտապով մոտեցավ մորը և տոպրակը շալակից վայր բերեց:

— Այ, հաց ել տվին, պանիր ել,—ասաց նա այնպիսի ուրախությամբ, վոր կարծես շալակով վոսկի յեր բերել:

Բայց և այնպես նրա ատամները ցրտից զարկվում ելին իրար:

Մայրը տանջալից հայացքով նայեց նրան:

— Տու եղ լակոտներին ուտեն,—ասաց նա և նույն ըռպելին սոսկալի ցավից կուչ ու հուալ յեկավ, հազիվ զսպելով իրեն, վոր չճշա:

Բայց Սոնեն կամեցավ նախ տաքացնել սառած ձեռները։ Յեվ մինչդեռ նա մղկտացող տասը մատների ծայրերը կպցը եր շրթունքներին և բերնի գոլորշին արտաշնչում եր նրանց վրա, յերկու «լակոտները» հափշտակեցին նրա վոտների առջև դրված տոպրակը և հավաքական ուժով քարշ տվին դեպի յափնջին։ Քույրը կատվի մի թոխչքով հասավ նրանց յետերից և պինդ փամփեց նրանց զլիսին։ Փոքրիկն սկսեց բարձրածայն լաց լինել, իսկ մեծը պոռշ արեց, բայց զսպեց իրեն։

— Այ, կտորվեք դուք, կտորվեք, — ուժասպառ, հազիվ լսելի ձայնով անիծեց մայրը։ — Աղջի, ի՞նչ ես ուզում եղ լակոտներից։

— Բա խի՞ չեն մուլափ տալի, — հանգիստ նկատեց Սոնեն, տոպրակը դրեց խալիչի վրա, ծալապատիկ նստեց առջեր և բերանը բաց արեց։ Տոպրակը կիսով չափ լիքն եր հացի չոր կտորտանքով և յերեսին պանրի դեղնած, չորացած փշրանք եր թափված։ Փոքրիկը լոեց և մյուսի հետ գնաց նստեց տոպրակի առջև։

— Ձեռը չտաք, թե չե կը սպանեմ, — սպառնաց քույրը և վեր կացավ, վոր թարեքից մի քրեղան վերցնի պանրի փշրանքը մեջն ածելու։

Բայց քաղցած յերեխաները չվախեցան այդ սպառնալիքից։ Հազիվ քույրը մի-յերկու քայլ եր արել, վոր նրանք ձեռները կոխեցին տոպրակը և յուրաքանչյուրը թոցրեց հացի առաջին պատահած կտորը։ Սոնեն այս անգամ ել կամեցավ վրա հասնել, բայց արդեն ուշ եր. յերեխաներից մեկը մի անկյուն թռավ, մյուսը — մյուս և ամեն մեկն արդեն ազահարար կրծում եր իր հափշտակած վորսը, յերբ քույրը նախ մեկին սկսեց թակել, հետո մյուսին։ Յերեխաները կուշ ելին յեկել մեկը մի, մյուսը մյուս անկյունում, հափշտակած հացի կտորները պինդ շեքներն ելին կոխել, վոր քույրը չխլի և, թեև քրոջ անխնա հարվածները բավական ցավ ելին պատճառում նրանց տկլոր մարմնին, ձայները փորն ելին զցել, լաց չելին լինում, — յերեկի զգում ելին, վոր հանցավոր են քրոջ նախազգուշացումը չլսելուն համար և իրենց արժանի պատիժն են կրում։ Սակայն վերջի վերջո Սոնեն աջողվեց յերկուսի ձեռքից ել խլել հափշտակած հացի կտորները։ Այս անգամ արդեն այնպիսի ճիչ ու ծղրտոց ընկավ խրճիթում, վոր այլևս չեր լսվում քամու կատաղի ձայնը։

— Բա, յես ձեզ չասեցի ձեռք չտաք, — խրատական տոնով նկատեց քույրը։

— Տա, տափը մտած, ի՞նչ ես ուզում եղ լակոտներից, — տանջված ձայնով աղաղակեց մայրն աղջկա վրա: — Տու զահրումար անեն, Ելի: Յես իմ ցավերի հետ ըլեմ, թե ձեզ հետ: Այ կտորվեք դուք, կտորվեք:

— Բա, խի՞ չեն մուլափ տալի, — հանգիստ կրկնեց Սոնեն և գնաց, վոր քրեղանը վեր բերի թարեքից:

Մոր պաշտպանությունն առիթ տվեց յերեխաներին ավելի ես բարձրացնելու իրենց ձայնը. ճղճղում եյին խողի ճուտերի պես:

Մայրը իր զգացած ցավերից և այդ միալար ճղճղոցից ծայր աստիճան ջղալնացած՝ վեր թռավ տեղից, վաղեց դեպի աղջիկը և այնալ ես պինդ ձիգ տվեց նրա մազերից, վոր նա ձեռքից բաց թողեց յերեխաներից խւած հացի կտորները և մի սոսկալի ճիչ արձակելով՝ փռվեց գետնին: Դրանից հետո Շուշանը անլուր անեծքներ թափելով քարշ յեկավ նորից դեպի իր լաթերը և նորից կոլովեց նրանց մեջ: Այժմ յերեխաները մի անդամից լռեցին և նրանց քույրն եր միայն, վոր գետնին ընկած լաց եր լինում:

— Ձենդ կտրի, թե չե, ես այ, ելի վեր կացա:

Մոր այդ սպառնալիքն ազդեց միայն այնքան, վոր Սոնեն ձայնը մի քիչ ցածրացրեց, հետո կամաց-կամաց լոեց, վեր կացավ, հավաքեց գետնին թափված հացի կտորտանքը և ուռած-փքված շպրտեց յերեխանց առաջը, ասելով՝

— Ընդ՛, չոռ արեք:

Յերեխաներն իսկույն վրա թափվեցին քաղցած գալերի պես:

Սոնեն թարեքից վերցրեց մի քրեղան, գնաց նստեց հացի տոպրակի առջև և սկսեց պանրի փշուրները ջոկել և քրեղանն ածել: Յերեխաները վախվիսելով մոտեցան նրան և սկսեցին վընդուռալ. — պանիր ելին ուզում:

— Ընդ՛, չոռ արեք. — կրկնեց քույրն առաջվա պես ուռած-փքված, պանրի մի-մի փշուր թափելով նրանց վրա:

Յերեխաներն ազահարար վրա ընկան գետնին թափված պանրի փշուրները հավաքելու:

Սոնեն պանրի փշուրանքը հացի կտորտանքից ջոկում և քրեղանն եր ածում մեծ գործ կատարող մարդու լրջությամբ: Նա մի առանձին հպարտություն եր զգում, վոր այդքան հաց ու պանիր եր բերել իրենց ծանոթ մի հարուստ ընտանիքից, ուր հաճախ ինքը կամ մայրը մի փոր հացի համար գնում ելին ամբողջ որով

կամավոր աղախնի դեր կատարելու — սամավար սրբելու, կերակրի կաթսաներ մոխրելու, բակն ավելու, հավաքված աղբը թափելու, որորոցի յերեխայի աղտոտած պարուրները լվանալու և այլն։ Պանիրը հացից ջոկելիս Սոնեն, ի հարկե, չմոռացավ իրեն, թեն ձանապարհին իր բաժինն արդեն կերել եր. նա ջոկեց հացի համեմատաբար մի փափուկ կտոր և պանրի մի մեծ փշուր ու ըսկեց ուտել։ Յերեխաներն իրենց բաժինը ձեռաց վերջացրին և նորից սկսեցին մսղմսղալ։ Թույրն այս անգամ այնքան բարեհաճ գտնվեց, վոր առանց ծեծ ու կովի մի-մի կտոր հաց ու պանիր ել շպրտեց նրանց վրա։ Այդ որը մի տոն եր նրանց համար. — հացի հետ պանիր ել ելին ուտում։ Այդպիսի յերջանկություն շատ քիչ եր պատահում նրանց։

Յերբ նրանք կշտացրին իրենց քաղցած փորը, նորից մտան յափնջու տակ, այս անգամ հյուրասիրելով և քըռջը, վոր արդեն հաշտվել եր նրանց հետ։ Յերեքն ել գոհ ելին իրենց վիճակից. փորները կուշտ եր, յափնջին տաք, ել ի՞նչ եր հարկավոր։ — Վոչինչ։ Յեզ նրանք յափնջու տակ ուրախ-զվարթ քչփչում ելին իրար հետ իրենց միալն հասկանալի բաներ։

Այն ինչ աշնանային կարճատե որն արագորեն մթնում եր և առանց այն ել մութ խրճիթը թաղվում եր մթության մեջ։ Դուան տախտակների արանքից ներս թափանցող լույսի շերտերն այժմ հազիվ ելին նշմարվում։ Որը տարաժամելու հետ քամին կարծես ավելի յեր սաստկանում և սպառնում լուսամուտի թուղթը պատռելով՝ ներս խուժել ամբողջ թափով։

— Աղջի, — կանչեց Շուշանը։

Սոնեն զլուխը հանեց յափնջու տակից։

— Վե կաց են անտեր ճրագը վառի։

Ցրտից սարսոելով Սոնեն վեր կացավ իր տաք տեղից, վառեց թարեքի վրա դրված լամպը և վաղելով նորից մտավ յափնջու տակ։ Լամպն այնքան լույս չեր արձակում, վորքան ծուխ, վորովհետեւ ապակին կիսով չափ կոտրված եր. ծուխը հաստ շերտերով լիզել եր ապակու պատերը և այժմ այդ շերտերի վրա նոր շերտեր եր ավելացնում։

Յափնջու տակ քչփչոցի ձայները շարունակվում ելին. ամենից շատ լսվում եր քրոջ ձայնը. ինչպես յերեսում եր, նա հեքիաթ եր պատմում։ Սակայն այդ քչփչոցի ձայները շուտով տեղի տվին հորանջումների։ Սոնեն նորից դուրս սողաց յափնջու տակից, հայտնի չե վորտեղից քարշ տվեց մի ներքնակ ու վերմակ,

անկողին պատրաստեց, վորի վրա կուչ յեկան յերեքը միասին, վերմակն ու յափնջին վրաներն առած ու գրեթե նույն բոպեյին ել քննեցին:

\* \*

Այն ինչ նրանց մայրն իր լաթերի վրա կուչ ու հուպ գալով շարունակում եր տնքալ զսպված ձայնով. ցավերը գնալով սաստկանում եյին. Մենակ եր, վոչ վոք չուներ, վոր ողներ: Յերկու յերեխա այդպիս, առանց «տատմոր» ողնության եր բերել, վորորհետև աղքատ եր: Նույն այդ աղքատությունն եր պատճառը, վոր մինչև այժմ ծնած բոլոր յերեխաները՝ ամիսներով «հարամ» եցին մնացել.—մարդ չեր ճարվում վոր «հալալեր»—կնքահայր դառնար: Յեկ այդպիս ել «հարամ» կը մեծանացին նրանք, յեթե չլիներ այն ընտանիքը, վոր այդ որը մի տոպրակ հացի կտորտանք և պանրի փշուրներ եր ուղարկել. այդ ընտանիքի հայրն եր, վոր «հոգու խաթեր» իր վորդուն ուղարկում եր Կարապետի յերեխաներին մկրտելու, մի քանի ոռւրլի ծախսելով: Շուշանը յերախտագիտությամբ եր հիշում այդ ընտանիքի անունը, վորը հացի կծմծած, բորբոսնած կտորները, կերակրի մնացորդը, յերբեմն ել գործածությունից յելած հնամաշ լաթերը տալիս եր նըրան իր յերեխաների համար: Բայց Շուշանն ամոթխած կին եր. յերեսը չեր բոնում ամեն կարիք յելած ժամանակ դիմելու այդ ընտանիքին, ուստի մեծ մասամբ սոսկալի աղքատություն եր կրում: Մեծ վորդուց հույսը բոլորովին կտրել եր. այդ վորդին անդարձ „պաժառնի“ յեր դարձել և, չնայելով փոքր հասակին, մի քանի անգամ բանտ եր նստել: Մարդը մեծ մասամբ պարտպ եր, վերջերն ել սկսել եր իրեն գինու տալ, այնպիս վոր գործ յեղած ժամանակն ել հազիվ մի-մի անգամ մի քանի ֆունտ ցածաք հաց եր բերում տուն: Պատահում եր, վոր Կարապետը որերով, նույն իսկ շաբաթներով տան յերես չեր տեսնում, վորովհետև վոչխար կտմ տավար եցին հանձնում նրան հեռու տեղ քշելու: Այժմ ել նա բացակա յեր. մի ամրող հոտ մատաղացու վոչխար եր քշել Բոլնիսի ո. Գեորգ ուխտատեղին, վորի տոնն եր այդ շաբաթ, և ով զիտե յերբ կը վերադառնար:

Այսպիսով Շուշանը յերկունքի ծանր որերի մեջ մնացել եր մենակ, իր յերեք յերեխաների հետ, դուռն յերեսին յետ դրած, քաղցած, տկլոր: Ցուրտն ել մյուս կողմից եր նեղում: Աշնան և ձմռան ամիսներին քաղցն այնքան զգալի չեր այդ աղքատ ըն-

տանիքի համար, վորքան ցուրտը՝ հացը այսպես թե այնպես միշտ կարելի չեր ճարել, բայց ածուխ, բայց տաք հազուստ ով կը տար:

Մի ամրողջ շարաթ ե, վոր քամին չի դադարում, փչում մարդու յերես և խանձում, մտնում և խրճիթի հազար ու մի ծակուծուկերից: Լաթերն այնքան ուժ չունեն, վոր տաքացնեն Շուշանի կմախքացած մարմինը: Կարելուն չափ աշխատում և կծկըվել, բայց և այնպես վոտները սառույց են կտրվել:


Բայց ցուրտն ինքնըստիքյան: Յերկունքի ցավերն են, վոր գնալով սոսկալի տանջանքներ են պատճառում: Նա այլ ևս չի կարողանում զսպել իրեն, կուչ ու հուպ և գալիս, աղաղակում: Խրճիթում լսվում է յերեք քնած յերեխաների համասար շնչառությունը. թնդանոթ անգամ արձակես—չեն զարթնի: Թարեքին դրված լամպի կոտրված ապակին արդեն բոլորովին սեացել ե. վառած թոնրի նման սև ծուխ ու ալ-կարմիր բոց և արձակում նա: Խրճիթը հետզհետե լցվում է թանձր ծխով, վորի հետ խառն ողի մեջ անհամար ճանձերի պես պտույտ-պտույտ են անում սև մրի փաթիլները: Յեկ ծխի ու մրի այդ թանձրության մեջ անշուշտ կը խեղդվեն յերեխաներն իրենց մոր հետ, յեթե քամին խրճիթի անհամար ճեղքերից չմաքրի ողը:

Իսկ քամին գնալով ավելի ու ավելի սաստկանում եր և շրվացնում խրճիթի հայտնի չե վոր ծակից. դուռը դրնգալով և շրբիւկալով շարժվում եր տեղից. լուսամուտին կպցրած թղթերը բրրում եին արդեն միջից կես յեղած. իսկ Շուշանն իր լաթերի վրա անտանելի տանջանքով թափալզլոր եր գալիս մահամերձ անսասունի պես...

Ազամամութին, յերբ հարեանի բակում աքաղաղն սկսեց կանչել իր ծուղրուղուն, Սոնեն աչքերը բաց արեց և գլուխը հանեց վերմակի ու յափնջու տակից: Առաջին բանը, վոր տարորինակ թվաց նրան, այդ այն եր, վոր թարեքին դեռ ևս վառվում եր լամպը ծխի և մրի մեջ կորած: Հետո նրա տկանջին դիպավ մի անսովոր ձախն,—կարծես կատվի ձագ եր մլավում: Նա նըստեց անկողնում և բնազդմամբ նայեց մոր կողմը: Ու ծխից զույցած մշուշի մեջ հազիվ նշմարեց մորը, վորն իր լաթերի վրա նստած ինչ վոր տարորինակ շարժողության մեջ եր: Մլավոցի ձախն ել այնտեղից եր գալիս: Նա կամաց վեր կացավ և ցրտից սարսոելով մոտեցավ մորը: Մոր գողին մի պստիկ, շատ պստիկ

յերեխա տեսավ, մերկ, կարմիր։ Մայրը, ամբողջ մարմնով նրա վրա խոնարհված՝ ատամները պինդ սեղմել եր իրար և ձեռքերով հուպ եր տալիս յերեխայի կոկորդը, շարունակ կրկնելով սեղմած ատամների միջից. «Ի՞նչ եմ անում... ի՞նչ եմ անում... քիչ ունեմ... քեզ վոնց պահեմ... քեզ վոնց պահեմ...»։ Մանուկը գըլուխը յետ եր զցել, աչքերը փակ ու տարորինակ կերպով շարժում եր պստիկ կարմիր վոտներն ու ձեռքերը Զայնն այլևս չեր լսվում։

Սոնեն հանկարծ ճշաց ինքն ել չեր իմանում—ուրախությունից, վոր մայրը յերեխա յեր բերել, թե սարսափած այն բանից, ինչ վոր անում եր մայրը նորածին յերեխային...  
—————




## ՑԱՆԿ

b9

Մեծ քաղաքի արվարձանը Նար-Դոսի յերկերում Ա. Տեր-	
տերյանի . . . . .	5
Հեղինակի կողմից . . . . .	17
Ինչպես բժշկացին . . . . .	19
Սաքուլն ուխտ գնաց . . . . .	41
Հոգուն վրա հասավ . . . . .	61
Հոպոպալ . . . . .	73
Թե ինչ յեղավ հետո, յերբ շաքարամանից յերկու կտոր	
շաքար պակասեց . . . . .	83
Աև փողերի տոկոսը . . . . .	95
Աղամամութին . . . . .	107









[504.]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220039095

A  
—  
39095